

Լ. Վ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԿԱՆԱՅՔ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ
ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ
ՏԱՐԻՆԵՐԻՆ



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

Л. В. МАРТИРОСЯН

**ЖЕНЩИНЫ СОВЕТСКОЙ АРМЕНИИ
В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ
В О Й Н Ы
(1941—1945)**

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1968

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Լ. Վ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՆԱՅՔ
ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ
ՏԱՐԻՆԵՐԻՆ

(1941—1945)

A $\frac{II}{42621}$



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1968

Աշխատութիւնը նվիրված է Հայաստանի կանանց մասնակցութեանը Հայրենական մեծ պատերազմին, նրանց հերոսական աշխատանքին արդյունաբերութեան, տրանսպորտի, գյուղատնտեսութեան մեջ: Յուշը են տրվում կուսակցական և սովետական մարմինների միջոցառումները հանրապետութեան ժողովրդական տնտեսութեան տարրեր ձյուղերի համար կին մասնագետներ պատրաստելու ուղղութեամբ:



(1921—1965)



ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

Ներկա աշխատության հեղինակ ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի երիտասարդ գիտական աշխատող Լիզա Մարտիրոսյանը կարճատև կյանք ունեցավ: Նա տարիներ շարունակ աշխատել է պատմության ինստիտուտում և զբաղվել Հայրենական պատերազմում հայ ժողովրդի մասնակցության վերաբերյալ նյութերի ու վավերագրերի հավաքման և գիտական մշակման գործով: Լ. Մարտիրոսյանը այդ գործի առաջին ժրաշան մշակներից էր՝ ինստիտուտում համապատասխան կարիների կազմակերպման իսկ օրից:

Պատմության ինստիտուտի արխիվում մեծաքանակ նյութ է կուտակվել Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմի պատմության վերաբերյալ՝ Լիզա Մարտիրոսյանի և մյուս աշխատակիցների ջանքերով: Հավաքված նյութերի հիման վրա իր կյանքի վերջին տարիներին նա գրեց ներկա աշխատությունը:

Հեղինակի մահից հետո աշխատությունը տպագրության է պատրաստել և խմբագրել Վ. Ն. Ղազարյանը:

Գրքի առանձին բաժինների խմբագրման աշխատանքներին մասնակցել է նաև Ս. Վ. Խարմանդարյանը:

Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմը սովետական ժողովուրդների պատմության կարևոր էտապներից է:

Հայրենական մեծ պատերազմում Հայաստանի կանանց մասնակցությանը վերաբերող սույն ուսումնասիրությունը առաջին փորձերից է սովետահայ պատմագրության մեջ: Սովետական Հայաստանի կանանց՝ Հայրենական մեծ պատերազմի ժամանակաշրջանի աշխատանքային և մարտական սխրագործությունների պատմությունը արժանի է առանձին ուսումնասիրության: Ինչպես Սովետական Միության, այնպես էլ Հայաստանի կանայք իրենց ավանդը ներդրեցին մեր երկրի ժողովուրդների մեծ հաղթանակի գործում: Ձգտելով ետ չմնալ տղամարդկանցից, և՛ թիկունքում, և՛ ռազմաճակատում իրենց հայրենանվեր գործերով նրանք զարգացրին մեր ժողովրդի աշխատանքային ու մարտական տրագիյիաները, վառ էջեր ստեղծեցին հայ ժողովրդի բազմահարուստ տարեգրության մեջ:

Պատերազմի տարիներին սովետական կանայք «հսկայական դեր կատարեցին ո՛չ միայն թիկունքում, այլև ռազմաճակատում: Տղամարդկանց հավասար նրանք կրեցին մարտական կյանքի բոլոր ծանրությունները և նրանց հետ միասին հասան մինչև Բեռլին: ...Երբեք, ոչ մի պատերազմում կանայք այնպիսի դեր չեն խաղացել, ինչպես 1941—1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում»¹:

¹ Чухов В. И., Начало пути, М., 1962, էջ 261:

Թիֆլուսում և ռազմաճակատում հայ ժողովրդի հերոսական պայքարին է նվիրված Ա. Մնացականյանի «Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմում (1941—1945)» ծավալուն մենագրությունը, որտեղ հեղինակը հարուստ փաստերով ցույց է տվել հայ ժողովրդի մասնակցությունը սոցիալիստական հայրենիքի պաշտպանության և անկախության համար Սովետական Միության ժողովուրդների մղած համընդհանուր պայքարին: Հեղինակը համառոտ ներկայացրել է նաև կանանց անդուլ աշխատանքը ժողովրդական տնտեսության մեջ և մյուս բնագավառներում:

Ա. Մնացականյանի հեղինակությամբ հրատարակվել է «Հայ ռազմիկների հերոսության տարեգրությունները» զիրքը (1947), որը վերաբերում է Հայրենական պատերազմի ժամանակ տպագրված հայերեն զինվորական մամուլի ղերին: Նրանում որոշ նյութեր կան հայ կանանց ռազմական գործերի վերաբերյալ:

«Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության» երրորդ պրակում (1960), «Հայ ժողովուրդը Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941—1945)» բաժնի հեղինակ Ե. Խալեյանը հարուստ նյութերով ներկայացրել է գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ մղված համառ պայքարում հայ ժողովրդի ունեցած ակտիվ մասնակցությունը: Առանձին էջեր նվիրված են հանրապետության կանանց աշխատանքային սխրանքներին արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ: Մեր ուսումնասիրության թեմայի հարցերին անդրադարձել են նաև Կ. Միրզախանյանը՝ «Հայաստանի կոմերիտմիությունը Հայրենական պատերազմի տարիներին» (1956), Ս. Հարությունյանը՝ «Նրևանը Հայրենական մեծ պատերազմի տարիներին» (1958), Կ. Կոզմոյանը՝ «Լենինական» (1958), Հ. Սարկիսովը՝ «Геронческие дочери Кавказа» (Баку, 1965) և ուրիշներ:

Որոշ աշխատությունների առանձին զրուխներ նույնպես պատմում են Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի մասնակցության մասին:

Ներկա աշխատությունը առաջին փորձերից մեկն է ամբողջական ներկայացնելու Հայաստանի կանանց մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին: Մեր հեղինակությունամբ 1961 թ. տպագրված «Հայ կանանց սխրագործությունները Հայրենական մեծ պատերազմի ռազմաճակատներում» գրքույկը օգտագործված է այս աշխատության մեջ (գլուխ հինգերորդ), նոր փաստաթղթերով հարստացված և վերաշարադրված բնագրով:

Ուսումնասիրության համար օգտագործել ենք արխիվային նյութեր, որոնք ժողովել ենք Հայկական ՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական, ՍՄԿԿ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի կուսակցական և Հայկական ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի Հայրենական պատերազմի պատմության կաբինետի արխիվների համապատասխան ֆոնդերից: Աշխատությունը շարադրելիս աղբյուր են ծառայել 16 անուն ռազմաճակատային թերթեր, որոնցում հարուստ նյութեր կան հայ ժողովրդի զավակների և դուստրերի հերոսական պայքարի մասին:

Գյուղի աշխատավորության, մասնավորապես կոլտնտեսուհիների աշխատանքային գործունեությանը ծանոթանալու համար ուսումնասիրել ենք շրջանային 40 անուն թերթերի կոմպլեկտները:

Հեռու ենք այն մտքից, թե այս ուսումնասիրությամբ սպառել ենք թեմային վերաբերող մեծահարուստ նյութը: Մենք ձգտել ենք որոշ չափով լրացնել այն բացը, որ կա պատմագրության մեջ՝ տվյալ թեմայի ուսումնասիրության բնագավառում:

ՀԵՂԻՆԱԿ

Ա. Ռ. Ա. Զ. Ա. Բ. Ա. Ն.

Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը մարդ-
կության պատմության մեջ առաջին անգամ պայմաններ
ստեղծեց ոչնչացնելու մարդու շահագործումը մարդու կողմից:
Սովետական կարգերի հաղթանակը քաղաքական ազատու-
թյուն և իրավահավասարություն ստեղծեց նաև կանանց հա-
մար: Սովետական կարգերի հաստատման հենց առաջին օրե-
րից կոմունիստական կուսակցությունը և սովետական կառա-
վարությունը կնոջ նկատմամբ ցուցաբերեցին հատուկ վերա-
բերմունք: Ինչպես սովետական պետության հիմնադիր Վ. Ի.
Լենինն է գրել, «Սովետական ռեսպուբլիկայի մեջ քարքարի
վրա շմնաց այն օրենքներից, որոնք կնոջը դնում էին ենթակա
դրության մեջ»¹: Ազատագրված սովետական կինը, բարձրաց-
նելով իր քաղաքական և կուլտուրական մակարդակը, ակտիվ
կերպով մասնակցեց երկրի արտադրական, հասարակական և
քաղաքական կյանքին:

Դարեր շարունակ կինը մեկուսացված է եղել, զրկված իս-
կական ազատությունից, դատապարտված լռության: Նա
գտնվում էր անիրավահավասար վիճակում՝ ինչպես հասարա-
կական կյանքում, այնպես էլ ընտանիքում: Կինը զրկված էր
կրթության, աշխատանքի, խոսքի, հասարակական կյանքում

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 30, էջ 31:

դիրք ունենալու իրավունքից և հնարավորությունից: Նրա պարտականությունն էր եկեղեցի այցելելը, խոհանոցը և երեսփա ունենալը:

Կոմունիստական կուսակցությունը իր ծրագրում մատնանշեց կնոջը տղամարդուն հավասար իրավունքներ տալու անհրաժեշտությունը և նշանակությունը: «Պրոլետարիատը չի կարող լիակատար ազատության հասնել առանց կնոջ համար լիակատար ազատություն նվաճելու»՝ սովորեցնում էր Վ. Ի. Լենինը¹:

Ինչպես սոցիալական բոլոր անհավասարությունները, այնպես էլ կնոջ ստրկական վիճակը ծնունդ է առել արտադրության միջոցների մասնավոր սեփականության հիմքի վրա: Կար ժամանակ, երբ կինը գերդաստանի իշխողն էր: Դա մայր-իշխանության շրջանում էր: Նախնադարյան համայնական կարգերում կինը առաջատար դեր էր խաղում հասարակական արտադրության մեջ: Սակայն արտադրության միջոցների մասնավոր սեփականության և նահապետական ընտանիքի առաջացման հետ միասին կինը կորցրեց իր վաղեմի գերիշխանությունը և աստիճանաբար տեղը զիջեց տղամարդուն: Կնոջ ստրկական վիճակն ավելի ծանրացավ կապիտալիստական հասարակարգում:

Կինը դարեր շարունակ երազել է երջանիկ ու իրավահավասար կյանքի մասին: Արյունով է գրված ազատության համար տղամարդու հետ միասին կնոջ մղած պայքարի պատմությունը:

Հայ ժողովրդի բազմադարյան պատմությունը հարուստ է օտարերկրյա բռնակալների դեմ մղած ազատագրական պատերազմների դրվագներով: Ազատատենչ հայ ժողովուրդը մահու և կենաց պայքար է մղել օտարերկրյա զավթիչների դեմ՝ հանուն իր հայրենիքի ազատության և անկախության: Այդ պայքարում հայ կինը եղել է հայրենիքի պաշտպանների անձնավոր՝ զինակիցը:

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 30, էջ 473:

Անի քաղաքի պաշտպանության ժամանակ Այծեմնիկը ցույց տվեց խիզախության օրինակ: XII դարի քսանական թվականներին սելջուկների բազմաքանակ զորքը հարձակվեց Անիի վրա: Հայերը համառ և կատաղի դիմադրությամբ պաշտպանեցին հայրենի քաղաքը: Մեկ տարի շարունակ թշնամին պաշարման մեջ է պահում Անին: Համառ մարտերի ժամանակ, արհամարհելով մահը, քաղաքի պարիսպների վրա ելևում է Այծեմնիկը և քարեր նետում պարիսպներով մագլցող թշնամու զինվորների վրա: Իր համարձակությամբ նա ողևորում էր յուրայիններին: Այծեմնիկի հերոսական օրինակը անմոռանալի էջ է հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմության մեջ: Բայց Այծեմնիկի օրինակը եղակի չէ:

1387 թվականին Լենկթեմուրի զորախմբերը գրավեցին Անդրկովկասը և ավերի ու թալանի ենթարկեցին երկիրը: Թշնամու հրոսակների դեմ մղվող օրհասական մարտերում հայ ժողովուրդը անընկճելի դիմադրություն ցույց տվեց: Թեժ մարտերում անձնվիրաբար էր կռվում մշեցի Կարինեն: Թշնամու առաջխաղացումը կասեցնելու համար ժայռերում դիրքավորվել էին խուժեցիկները, որոնց շարքերում էր Կարինեն՝ յոթ տարեկան տղայի հետ: Հակառակորդի մի ջոկատ անակնկալի է բերում հայ պաշտպաններին: Սկսվում է անհավասար մարտ: Կարինեն կատաղի դիմադրություն էր ցույց տալիս ատելի թշնամուն, բայց ուժասպառ է լինում, իսկ երբ զոռում է պարտության վտանգը, իրեն ժայռից ցած է նետում:

1862 թվականին ազատատենչ զեյթունցիների շարքերում, հրացանը ձեռքին, արիաբար մարտնչում էր հայ ժողովրդի խիզախ դուստր Մարիամը: Հակառակորդի զորաբանակները պաշարել էին Զեյթունը: Հայերը համառորեն դիմադրում էին: Սպառվել էր օղակի մեջ գտնվող հայրենասերների ռազմամթերքն ու սննդամթերքը: Անհրաժեշտ էր կապ ստեղծել զրաի հետ: Այդ առաջադրանքը կատարելու պատրաստակամություն հայտնեց Մարիամը: Խիզախ հայուհին վտանգի ենթարկելով իր կյանքը, դուրս եկավ թշնամու օղակից և ապահովեց պաշարված ապստամբների փրկությունը:

Կանանց մասնակցությունը ազատագրական պայքարին ավելի մասսայական բնույթ կրեց պրոլետարական հեղափոխությունների դարաշրջանում, երբ կինը բանվոր դասակարգի շարքերում ակտիվ պայքարի ելավ աշխատավորների ազատագրության համար: Ռուսաստանի ժողովուրդների առաջադեմ կանայք, բոլշևիկների կուսակցության գլխավորությամբ, ազատագրական պայքարի գրոշը բարձր պահեցին ռուսական երեք հեղափոխությունների ընթացքում:

Ֆառո Կնունյանցը, Նինա Ալաջալովան, Թամարա Մելիք-Շահնազարյանը, Նվդենյա Բագատուրյանը, Արմենուհի Հովսեփյանը, Էմմա Աթարբեկյանը, Ջավահիր Տեր-Պետրոսյանը (նույնը Դ. Ա. Խուտաշվիլի), Նադեժդա Կալեսնիկովան, Ռոզալիա Բաբիկովան, Նինա Խանոյանը, Լուսիկ Լիսինյանը և ուրիշ շատերն իրենց գիտակցական կյանքն ու ուժերը նվիրաբեղեցին պրոլետարիատի հեղափոխական պայքարին¹: Նրանցից շատերը Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության մրդկաշունչ օրերին և քաղաքացիական կռիվների տարիներին, կանգնելով կոմունիստական կուսակցության առաջավոր շարքերում, խիզախորեն պայքարում էին պրոլետարիատի գիտատուրայի հաստատման և նորաստեղծ Սովետական պետության պաշտպանության համար:

1917 թվականի Հոկտեմբերյան հեղափոխության փոթորկալից օրերին Մոսկվայի բարեկադային մարտերից մեկում հերոսաբար զոհվեց սլոժնեցիոնալ հեղափոխական, 20-ամյա Լուսիկ Լիսինյանը: Լիսինյանը կուսակցության անդամ էր 1916 թ.: Նա պրոպագանդիստական և ագիտացիոն աշխատանք էր տանում Մոսկվայի բանվորական շրջաններում, ղեկավարում էր Միխեյսոնի գործարանի (այժմ Վ. Ի. Լենինի անվան) քաղաքական խմբակը: Նա մասնակցում է պատմական ապրիլյան կոնֆերանսին: Հեղափոխության գործին նվիրված հայուհին ապրեց կարճ, բայց բովանդակալից կյանք: 1920 թվականի փետրվարին Գրոդնի քաղաքում սպիտակ-

¹ Տե՛ս Ռ. Փաշինյան, Հայ ռեվոլյուցիոն կանայք, Երևան, 1963:

գվարդիականները մի շարք հեղափոխական գործիչների հետ կախաղան բարձրացրին նաև Ռոզա Գոսպարյանին: Նրա հավատարիմ ընկեր ու զինակից Սուրեն Մազաուզովը կախաղանից մի քանի ժամ առաջ, վերնաշապկի լաթի վրա գրել է, թե ինչպես է ինքը ականատես եղել իր փառապանծ ընկերների մահվանը, թե ինչպես Ռոզան համարձակ գնացել է դեպի էջաֆոտ և թե ինչպես ինքը տեղնուտեղը որոշել է Ռոզայի նման մոտենալ կախաղանին: Մազաուզովը նշում էր, որ Ռոզայի նման աղջիկ ունեցող ծնողները պետք է հպարտ լինեն:

1917 թվականից կոմունիստական կուսակցության անդամ էր Աշխեն Միկոյանը (Թումանյանը): Դպրոցն ավարտելուց հետո, նա որպես ուսուցչուհի աշխատել է Վրաստանի տարբեր քաղաքներում, ընդգրկվելով ընդհատակյա հեղափոխական աշխատանքի մեջ: Նա կատարում էր ՌԿ(բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեի առաջադրանքները, քաղաքական գրականություն և թոռցիկներ էր տեղափոխում Հայաստան: Հետագայում պրոպագանդիստական հարուստ փորձով զինված Աշխեն Միկոյանը աշխատեց Նիժնի Նովգորոդում, Դոնի Ռոստովում, Հյուսիսային Կովկասում, ապա Մոսկվայում:

1918—1920 թթ. դաշնակցականների հալածանքների ու հետապնդումների պայմաններում շատ կի՛ն կոմունիստներ հերոսական պայքար էին մղում Հայաստանում սովետական կարգերի հաստատման համար: 1919 թ. Ալեքսանդրապոլի գավառային կոմիտեի առաջադրանքով ուսուցչական և կուսակցական աշխատանքներ ծավալելու համար, մի խումբ կոմունիստների թվում Քյավթաուլուի շրջան մեկնեց նաև Վարսենիկ Աթանեսյանը: 1920 թ. մայիսյան ապստամբության օրերին Վարսենիկ Աթանեսյանը աշխատավորների շրջանում պրոպագանդիստական աշխատանք էր տանում: Նույն թվականին նա գործուղվում է Լոռու «Չեղոջ գոտի» քաղաքականագիտացիոն աշխատանքի համար: Աթանեսյանը գյուղից գյուղ անցնելով, ժողովրդին է հասցնում կուսակցության խոսքը, մասսայականացնում կոմունիստական կուսակցության ծրագիրը, ստեղծում համակրողների խմբակներ: 1921 թ. ապ-

քիլից նա Քյավթաուլուի գավառամասի կուսակցական կոմիտեի քարտուղարն էր:

1920 թ. Ալեքսանդրապոլի մայիսյան ապստամբության կազմակերպման գործում ակտիվ մասնակցություն ունեցավ նաև Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների հայտնի գործիչ, 1902 թ. կուսակցության անդամ Նինա Ալաջալույան:

1920 թ. նոյեմբերին հեղափոխական աշխատանքի համար Հայաստան եկած մի խումբ գործիչների թվում էին նաև պալքարի բոլով անցած կոմունիստներ Վարդուշ Թարախչյանը և Մարգո Չոլախյանը: Վ. Թարախչյանը Նրեանում կազմակերպում է հեղափոխական գրականության հարուստ գրադարան: Մարգո Չոլախյանի հետ նա տպագրում է բազմաթիվ լրդունգներ: Մարգո Չոլախյանն ընտրվում է Քարվանսարայի շրջկոմի առաջին քարտուղար, իսկ Վարդուշ Թարախչյանը Դիլիջանի գավգործկոմի կազմկին բաժնի վարիչն էր:

Հաղպատում 1919 թ. օգոստոսին տեղի ունեցավ կոռու «Չեզոք գոտու» կոմունիստների կոնֆերանս, որը հաջող կազմակերպելու համար մեծ աշխատանք էր կատարել նաև Ուլունլարի ընդհատակյա կուսակցական շրջանային կոմիտեի քարտուղար Վերգինե Թումանյանը: Նույն տարվա դեկտեմբերին Ուլունլարի ընդհատակյա կուսաշրջկոմի ղեկավարությամբ անցկացվեցին կոռու «Չեզոք գոտու» դուշմանական պատգամավորների առաջին և 1920 թ. ապրիլին՝ երկրորդ համադումարները:

Քաղաքացիական կռիվների ժամանակ իրենց գործունեությամբ արժանի տեղ գտան կուսակցության անդամներ Վարդուշ Խեչումյանը, Լյուսյա Խարմանդարյանը, Մարո Թումանյանը և շատ ուրիշներ:

Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության ծնունդը հանդիսացավ 1920 թվականի նոյեմբերի 29-ը: Հայաստանում սովետական կարգերի հաստատումը նոր դարաշրջան բացեց բազմաշարժար հայ ժողովրդի համար: Նոր կյանքի ուղի բացվեց նաև կապանքներից ազատագրված հայ կնոջ համար,

որը դեն նետելով հին կյանքի շղթաները, ակտիվորեն ներգրավվեց սոցիալիզմի կառուցման մեծ գործին:

Վ. Ի. Լենինը 1919 թ. նշում էր, որ սովետական իշխանության սկսած տնտեսական շինարարության գործը «կարելի է առաջ տանել միայն այն ժամանակ, երբ հարյուրավոր կանանց փոխարեն ամբողջ Ռուսաստանում այդ գործին կմասնակցեն միլիոնավոր և միլիոնավոր կանայք: Այն ժամանակ սոցիալիստական շինարարության գործը, մենք վստահ ենք, կամրապնդվի»¹:

Սովետական իշխանության հենց առաջին օրերին Հայաստանի Կոմունիստական կուսակցության և կին բաժինների հետևողական աշխատանքի շնորհիվ հարյուրավոր կանայք համախմբվեցին կուսակցության շուրջը, ակտիվ գործունեություն ծավալեցին սովետներում, արհմիություններում, կոոպերացիայում: Կանանց շրջանում ակտիվ աշխատանք էին ծավալում նաև կանանց պատգամավորական ժողովները, կոմերիտմիությունը և այլն:

Հետզհետե վերացավ կնոջ իրավական ու տնտեսական կախումը ամուսնուց: Կնոջ անձնական կյանքում կատարվեց մեծ փոփոխություն: Տղամարդու և կնոջ իրավահավասարության հիման վրա ստեղծվեց իսկական սիրո և փոխադարձ հարգանքի վրա հիմնված նոր ընտանիք:

1921 թվականի հունիսին կայացավ Հայաստանի աշխատավոր կանանց անկուսակցական առաջին համագումարը, որը խնդիր դրեց քաղաքային և գյուղական վայրերում կազմակերպել մանկամստուրներ, մանկապարտեզներ, կոնսուլտացիաներ, մանկական բաժանմունքներ:

Սովետական իշխանության տարիներին գնալով մեծանում էր կանանց դերը երկրի քաղաքական, տնտեսական և կուլտուրական կյանքում:

1941 թվականին Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի գեպուտատների կազմում ընտրված էին 65 կին, 3 կին աշխա-

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 30, էջ 37:

տում էին որպես ժողովրդական կոմիսար, երեքը՝ ժողովում և տեղակալ:

Արագ զարգացող արդյունաբերական ձեռնարկություններում հնարավորություններ ստեղծվեցին լայնորեն ընդգրկելու կանանց, որոնք տղամարդկանց հավասար պայքարում էին արտադրության բարձրացման համար: Նախապատերազմյան հնգամյակների տարիներին զգալի չափով աճեց Հայաստանի ժողովրդական տնտեսության մեջ աշխատող կանանց թիվը: Թրինակ, եթե 1928 թվականին կին բանվորների և ծառայողների թիվը հասնում էր 9600, ապա 1939 թ. այն հասավ 32.600-ի: Պատերազմի նախօրյակին, 1940 թվականին, Սովետական Հայաստանի արդյունաբերական որոշ ձեռնարկություններում, ինչպես Երևանի պահածոների, ծխախոտի, մականոնի, հրուշակեղենի և կարի գործարաններում ու ֆաբրիկաներում և չեխոսկանի տեքստիլ կոմբինատում աշխատող կանանց թիվը գերակշռում էր տղամարդկանց:

Նախապատերազմյան հնգամյակների տարիներին կապի իրենց հերոսական աշխատանքով մեծ դեր խաղացին հետամնաց ու քայքայված Հայաստանը արդյունաբերական առաջավոր երկիր դարձնելու պայքարում:

Կոլտնտեսային կարգերը նոր կյանքի ուղի բացեցին նահապետական ընտանիքի կնոջ համար: Կոլտնտեսություններում աճեցին հանրային արտադրության լավագույն կին վարպետներ, հմուտ կազմակերպիչներ, գյուղատնտեսներ, ղոտնեխնիկներ, սելեկցիոներներ, ֆերմայի վարիչներ և բրիգադավարներ:

Սովետական Հայաստանի 20-ամյակի կապակցությամբ ՍՍՀՄ շքանշաններով ու մեդալներով պարգևատրվեցին գյուղատնտեսության և արդյունաբերության 55 առաջավոր կին:

1939 թվականին Հայաստանի լուսավորության, արվեստի և զրականության բնագավառներում աչքի ընկած 41 կին, իսկ

1 ՆՍՍՀ ԶՆՍՀ ՊԿՍ, ֆ. 163, ց. 15, գ. 513, թ. 2, 3, 4. 

1940 թվականին գյուղական դպրոցների 16 ուսուցչունհի պար-
գեատրվեցին կառավարական շքանշաններով ու մեդալներով:

Այսպիսով, կինը մեր երկրում դարձավ մեծ ուժ ժողովրդ-
դական տնտեսության, կուլտուրայի, դրականության, արվես-
տի և մշուս բնագավառներում: Սովետական ազատ կինը,
տղամարդու հետ կողք-կողքի, կատարում էր մեծ աշխատանք,
սուաջ տանում սոցիալիզմի կառուցման վեհ գործը:

**ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԸ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՆԱՆՑ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՕԳԵՈՒԹՅԱՆԸ**

1941 թվականի հունիսի 22-ին, երբ ֆաշիստական Գերմանիան ուխտադրժորեն հարձակվեց մեր Հայրենիքի վրա, ժամանակավորապես ընդհատվեց սովետական մարդկանց խաղաղ, ստեղծագործ աշխատանքը: Սովետական Միության Կոմունիստական կուսակցության Կենտրոնական Կոմիտեն և Սովետական կառավարությունը դիմեցին ժողովրդին, կոչ անելով ոտքի ելնել գերմանա-ֆաշիստական օկուպանտների դեմ, պաշտպանելու սոցիալիստական հայրենիքը:

Սովետական ժողովուրդը բարձր գիտակցությամբ արձագանքեց կուսակցության կոչին: Սովետական կինը պատրաստ էր տղամարդուն հավասար պաշտպանելու հայրենիքը, սոցիալիզմի նվաճումները:

Սովետական Հայրենիքի ազատության և անկախության համար ֆաշիստական զավթիչների դեմ մղած պատերազմում ավելի մտրապնդվեց Սովետական Միության ժողովուրդները եղբայրությունն ու բարեկամությունը:

Ռազմաճակատը երկրից պահանջում էր ոչ միայն մարդկային ուժեր, այլև հսկայական նյութական միջոցներ: Այլ կերպ ասած, պատերազմի ծանրությունը իրենց վրա պետք է կրեին նաև թիկունքի աշխատողները:

Վ. Ի. Լենինը նշել է. «Ինչպես հարկն է պատերազմ մղելու համար անհրաժեշտ է կազմակերպված ամուր թիկունք: Ամենալավ բանակը, ռեյուզիայի գործին ամենանվիրված մարդկանց անմիջապես կոչնչացնի հակառակորդը, եթե նրանք բավականաչափ դիմելով, պարենավորված, վարժեցված չլինեն»¹:

Պատերազմը ստիպեց թիկունքի աշխատանքը վերականգնել ռազմական ձևով, ստեղծել ռազմական հզոր տնտեսություն՝ ռազմաճակատի պահանջներն անընդմեջ ապահովելու համար: Ռազմաճակատը և թիկունքը միավորվեցին որպես միասնական անխորտակելի ուժ:

Համաժողովրդական, տնտեսական պայքարի մեջ իր արժանի բաժինն ունի սովետական կինը: Հայրենական պատերազմի դաժան օրերին սովետական կինը ցույց տվեց իր անսահման հայրենասիրությունը, իր ուժը, հոգու կորուլն ու արիությունը: Սովետական կանայք թիկունքում՝ արդյունաբերական ձեռնարկություններում, տրանսպորտում, կոլտնտեսային դաշտերում, լուսավորության, առողջապահության, արվեստի և կուլտուրայի բնագավառներում փոխարինեցին տղամարդկանց և աշխատանքային սխրագործություններով իրենց լուծման ներդրեցին հաղթանակի մեծ գործում: Կանայք և աղջիկները համալրեցին նաև սովետական բանակի, ռազմաօդային և ռազմա-ծովային նավատորմների և հակաօդային պաշտպանության միավորումների շարքերը: Սովետական դիմված ուժերի կազմում նրանք մարտնչեցին որպես տանկիստներ, կապավորներ, հրետանավորներ, օդաչուներ և հատկապես որպես բժշկա-սանիտարական աշխատողներ:

Հայրենական մեծ պատերազմի հերոսական տարեգրություն մեջ առհավետ գրանցված են Զոյա Կոպոզեմյանսկայայի, Լիզա Չայկինայի, Ուլյանա Գրոմովայի, Լյուբա Շևցովայի, Մայա Պեզլիվանովայի (Փահլեանյան) և այլ անմահ քաջերի անունները, որոնց սխրագործությունները պատիվ են բերում սովետական կնոջը:

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 27, էջ 72—73:

Սովետական կառավարությունը բարձր գնահատեց կանոն ծառայությունները Հայրենական պատերազմում: 76 կին արժանացան Սովետական Միության հերոսի կոչման: Ավելի քան 120 հազար կին պարգևատրվեցին շքանշաններով ու մեդալներով, 8 հազար կին՝ «Հայրենական պատերազմի պարտիզանին» մեդալով:

Սովետական Միության Հայրենական պատերազմի ամենածանր փորձությունների ժամանակ Սովետական Հայաստանի կանայք բարձր պահեցին հայ ժողովրդի դարավոր պայքարի հերոսական ավանդները, սրբորեն կատարեցին իրենց պարտքը հայրենիքի հանդեպ: Հայրենիքի պաշտպանության համար մղված դաժան պայքարում նրանք ցուցաբերեցին բարձր գիտակցություն, հայրենասիրություն, հաստատակամություն: Սովետական հայրենիքի նկատմամբ հայ կնոջ ունեցած անսահման սիրո մասին ղեղեցիկ կերպով է արտահայտվել կամավոր ռազմաճակատ մեկնած Լենա Գրիգորյանը. «Խմ հայրենիքը ծաղկուն Հայաստանն է: Բայց իմ հայրենիքը ո՛չ միայն Հայաստանն է, այլև ամբողջ Սովետական Միությունը: Ուզում եմ հազար կյանք ունենալ, որպեսզի դրանք բոլորը նվիրեմ Սովետական Միությանը»¹:

* * *

Հայրենական պատերազմի առաջին իսկ օրից Սովետական բանակին և ճակատայինների ընտանիքներին ցույց տրվելով օգնությունն ընդունեց համաժողովրդական բնույթ:

Հայաստանի Կոմունիստական կուսակցությունը մեծ աշխատանք տարավ հանրապետության աշխատավորների մեջ՝ պաշտպանական ֆոնդեր ստեղծելու, բնակչության նվիրատվությունները լրացուցիչ կերպով համաժողովրդական պատերազմի կարիքներին տրամադրելու ուղղությամբ: Պաշտպանական ֆոնդերի ստեղծման նախաձեռնողներ հանդիսացան Տամբովի մարզի կոլտնտեսականները, որոնց օրինակով ամ-

¹ «Правда», 4 դեկտեմբերի 1943 թ.:

բողջ երկրում առանձնացվում էին պաշտպանական հեկտարներ և այդ նպատակով վաստակած աշխօրերի արժեքը հատկացվում պաշտպանության ֆոնդին:

Հայաստանում պաշտպանական հեկտարների առաջին նախաձեռնողները հանդիսացան Արտաշատի շրջանի կոլտնտեսականները: Կուսակցության Արտաշատի շրջանային կոմիտեն և աշխատավորների դեպուտատների շրջանային սովետի գործկոմը 1941 թ. վերջերին և 1942 թ. սկզբներին հավաքված գումարը տրամադրեցին զրահագնացքի կառուցման նպատակին: ՀամԿ(բ) Մոսկվայի կոմիտեի քարտուղար Ա. Ս. Շչերբաևիովը 1942 թ. հունիսին նամակով հայտնեց, որ Արտաշատի շրջանային կոմիտեի և շրջանային սովետի գործկոմի խնդիրը կատարված է:

1942 թ. վերջերին Հայաստանի Կոմունիստական կուսակցության Կենտկոմը պաշտպանության պետական կոմիտեին ղեկուցեց, որ Հայաստանի կոլտնտեսականները հավաքել են 38 միլիոն ռուբլի՝ «Հայաստանի կոլտնտեսական» տանկային շարասյուն կառուցելու համար: Միաժամանակ նրանք իրենց անձնական միջոցներից պաշտպանության ֆոնդին հատկացրին 84 հազար փութ հացահատիկ, կարտոֆիլ, միս և այլն¹: Հայաստանի բանվորները և ծառայողները իրենց անձնական միջոցներից 15 միլիոն ռուբլի տրամադրեցին «Սովետական Հայաստան» ավիամիավորում կառուցելու նպատակին:

Պաշտպանության զանազան ֆոնդերի ստեղծմանը իրենց նվիրատվություններով ակտիվ մասնակցություն ունեցան հանրապետության հայ և այլ ազգությունների հայրենասեր կանայք:

Երևան քաղաքի Կիրովյան շրջանի տնային տնտեսուհիների և աշխատավորուհիների նախաձեռնությամբ ստեղծվեց «Երևանի հայրենասիրուհի» մարտական էսկադրիլա կառուցելու ֆոնդ: Իրենց խնայողություններից նրանք պետքանկ մուծեցին 554.000 ռուբլի և 265.775 ռուբլու փոխառության

¹ «Правда», 29 դեկտեմբերի 1942 թ.

սպարտապոմս: Այդ նախաձեռնութիւնը խանգարւածութեամբ ընդունւեց մայրաքաղաքի աշխատավորուհիների և տնային տնտեսուհիների կողմից, որոնք այդ նպատակի համար հաւաքեցին մոտ 4 միլիոն ռուբլի: Սպանդարյանի շրջանի տնային տնտեսուհիների առաջարկով քաղաքի Լենինյան, Օրջոնիկիձեի և Կիրովյան շրջանների աշխատավորները և տնային տնտեսուհիները հաւաքեցին 135.214 ռուբլի և 34.785 ռուբլու արժողութեամբ սպարտապոմս՝ «Հայրենասեր տնային տնտեսուհի» մարտական ինքնաթիռ կառուցելու համար:

«Երեանի հայրենասիրուհի» և «Հայրենասեր տնային տնտեսուհի» մարտական ինքնաթիռների կառուցման նախաձեռնողներն արժանացան սպաշտպանութեան պետական կոմիտեի շնորհակալութեանը: Սպանդարյանի շրջանի տնային տնտեսուհիների խնդրանքով «Հայրենասեր տնային տնտեսուհի» մարտական ինքնաթիռը տրամադրվեց Սովետական Միութեան հերոս, բանակի գեներալ Հ. Բաղրամյանի հրամանատարութեամբ գործող Մերձբալթյան առաջին ռազմաճակատին: Այս կապակցութեամբ Սպանդարյանի շրջանի տնային տնտեսուհիները Հ. Բաղրամյանին ուղարկած նամակում գրել են.

«Թանկագին ընկեր Բաղրամյան.

Թո՛ղ այդ ինքնաթիռն ամեն վայրկյան հիշեցնի գեպի մեր հայրենիքն ունեցած անսահման սիրո և նվիրվածութեան մասին, կրակի հեղեղ թափի գերմանա-ֆաշիստական զավթիչների գլխին: Թո՛ղ այդ ինքնաթիռը համարձակ ճախրի և աղատութեան լույսի ճառագայթներ տարածի Ձեզ այնքան կարոտով սպասող մայրերի, քույրերի, կանանց ու երեխաների վրա: ...«Հայրենասեր տնային տնտեսուհի» մարտական ինքնաթիռը հանձնեցեք քաջերից մեկին, որ Ձեր օրինակով բազմապատկի սովետական մեծ ժողովրդի փառքը: Մենք սպասում ենք այն երջանիկ օրվան, երբ Դուք հաղթանակից հետո նորից ոտք կդնեք Ձեր հայրենական օջախը՝ արեւային Հայաստան, այն

1 Ա. Լ. Հարութլույան, Երեանը Հայրենական մեծ պատերազմի տարիներին, Հայպետհրատ, 1958, էջ 66—67:

ժամանակ Ձեր հպարտ ճակատին կղրոշմենք մեր մայրական ջերմագին համբույրները»¹:

Հայաստանի աշխատավորությունը, շարունակելով միջոցների հավաքումը, «Սովետական Հայաստան» ավիաէսկադրիլայի կառուցման ֆոնդը մուծեց 21.402 հազար ռուբլի, «Հայաստանի ֆիզիկոսներին» ավիաէսկադրիլայի կառուցմանը՝ 1.109 հազար ռուբլի, «Հայաստանի կոմերիտական» տանկային շարասյան կառուցմանը՝ 2.609 հազար ռուբլի, իսկ «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան կառուցման համար՝ 2.174.500 ռուբլի²:

Երևանի Պուշկինի անվան դպրոցի պիոներների հավաքած միջոցներով կառուցվեց «Հայաստանի պիոներիա» կործանիչ ինքնաթիռը:

Հայաստանի կոմերիտմիությունը մեծ սիրով արձագանքեց կոմերիտական-երիտասարդական կիրակնօրյակների հաշվին պաշտպանության ֆոնդի ստեղծմանը: Կարճ ժամանակամիջոցում կիրակնօրյակների կազմակերպումը համամիութենական ծավալ ստացավ:

Հայկական ՍՍՀ-ում առաջին կիրակնօրյակին՝ 1941 թ. շոգոստոսի 17-ին աշխատանքի դուրս եկան հազարավոր կոմերիտականներ, կոմերիտուհիներ և արտամիութենական երիտասարդներ: Այդ օրվա աշխատանքի արդյունքը կազմեց 298.824 ռուբլի և 15.415 աշխօր, որը հանձնվեց պաշտպանության ֆոնդին:

ՀամԿԿՍՄ Կենտկոմի որոշմամբ միութենական հանրապետությունների կենտկոմներին կից ստեղծվեցին ճակատայիններին օգնելու պաշտպանության ֆոնդեր, ուր մուծվում էին կոմերիտական-երիտասարդական կիրակնօրյակներից ստացված դոնարները, ինչպես նաև անհատական նվիրատու-

1 ՀՊՊԿ արխիվ, ֆ. 9, գ. 1, թ. 12—12ա:

2 Մ. Պ. Աղայան, Ե. Մ. Խալեյան, Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության, պրակ III, էջ 245:

թյունները: Միայն 1943 թվականին Հայաստանում այդ ֆոնդը մոծվեց 1.196.870 ուրբլի գումար¹:

Պատերազմի սկզբում չթուլացող տեմպերով լայն ծավալ ընդունեց կարմիր բանակի համար տաք հագուստ ձեռք բերելու հայրենասիրական շարժումը: Հայ ժողովուրդը, ոչինչ չխնայելով, սովետական բանակի մարտիկներին օգնում էր տաք հագուստով և անընդմեջ ռազմաճակատ էր առաքում նվեր-ծանրոցներ: Այսպես, միայն Երևանում, կարմիր բանակի մարտիկների համար 1941—1945 թթ. հավաքվեց 132 հազար կտոր տաք հագուստ², իսկ Լենինական քաղաքի աշխատավորութունը հավաքեց և ռազմաճակատ ուղարկեց մոտ 126 հազար կտոր տաք հագուստ և սպիտակեղեն³: Բացի այդ, տասնյակ վագոններով նվերներ են ուղարկվել 89-րդ Թամանյան, Վորոշիլովի անվան 76-րդ, 51-րդ գվարդիական, 409-րդ կիրովոգրադյան, 15-րդ ստալինգրադյան դիվիզիաներին, Սևծովյան նավատորմին և այլ զորամասերի մարտիկների ու սպաների:

Սովետական բանակին տաք հագուստեղեն մատակարարելու գործում հայրենասիրության օրինակ ցուցաբերեցին Հայաստանի կոմերիտականներն ու աբտամիութենական երիտասարդները: Կիրովականի շրջանի Շահալիի կոմերիտականները 1941 թ. հոկտեմբերի 8-ին դիմեցին շրջանի բոլոր կոմերիտականներին՝ լայնորեն մասնակցել միջոցների հավաքմանը: Միայն Երևան քաղաքի կոմերիտականների հավաքած «Կոմերիտական շերտիեցներ»-ի գումարը հասավ 1.045.461 ուրբլու:

Հանրապետության կոլանտեսային աշխատավորութունը մինչև 1943 թ. հայրենիքի պաշտպաններին ուղարկեց մեկ միլիոն կտոր տաք հագուստ, 3 գնացք նվերներ և 128 հազար անհատական ծանրոց⁴:

1 Կ. Միրզախանյան, Հայաստանի կոմերիտմիությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին, Երևան, 1956, էջ 133:

2 Ա. Լ. Հարությունյան, Երևանը Հայրենական մեծ պատերազմի տարիներին, էջ 68:

3 Հովհ. արխիվ, ֆ. 275, դ. 15, թ. 13:

4 «Սովետական Հայաստան», 21 ապրիլի 1943 թ.:

տարության և ուշադրության համար: Դժվարանում եմ համապատասխան խոսք գտնել: Կասեմ պարզ լեզվով՝ նավաստիական իմ շնորհակալությունը ձեզ, հայ ընկերներ»¹:

Հայաստանի աշխատավորությունը ջանքեր չխնայեց օկուպանտներից ազատագրված քաղաքներն ու շրջանները վերականգնելու, բնակչությանն օգնելու, նրա համար նորմալ կյանք ու բարենպաստ պայմաններ ստեղծելու համար: Տուժած քաղաքների և շրջանների աղգաբնակչությանն օգնելու նպատակով Հայաստանի կուսակցական, կոմերիտական և արհմիութենական կազմակերպությունների նախաձեռնությամբ ստեղծվեցին Ստալինգրադի, Լենինգրադի, Օդեսայի և այլ քաղաքների ու շրջանների վերականգնման ֆոնդեր: Միայն Ստալինգրադի մարզի բնակիչների համար հանրապետության կոմերիտականներն ու պիոներ-գալոցականները ուղարկեցին հինգ վագոն զգեստ և կենսամթերք:

Հայրենական պատերազմի ամբողջ ժամանակամիջոցում սովետական բաղմազգ ժողովուրդը, այդ թվում և հայ ժողովուրդը լավագույն ձևով կազմակերպեց թիկունքի աշխատանքը և ռազմաճակատի սպասարկումը, համաժողովրդական օգնություն ցույց տվեց զինվորականների ընտանիքներին, հոսպիտալներում բուժվող ճակատայիններին, պատսպարեց էվակուացված բնակչությանը, մեծ հոգատարություն ցուցաբերելով նրա նկատմամբ: Իսկ ռազմաճակատում հայ ժողովրդի զավակները փառքով պսակեցին իրենց անունները, արժանի տեղ գրավելով Հայրենական պատերազմի պատմության տառեգրության մեջ:

¹ «Սովետական Հայաստան», 2 հունիսի 1944 թ.:

հողամասեր և սերմացու, կոմերիտական բրիգադների միջոցով նորոգվում էին նրանց բնակարանները: Երեխաների համար բացվեցին առանձին ճաշարաններ, իսկ փոքրահասակների խնամքը կազմակերպելու համար կոմերիտուհիներից ու աշակերտուհիներից առանձնացվեցին ջոկատներ: Արագորեն լուծվում էին մարտիկների ընտանիքների անդամներին աշխատանքի տեղավորելու հարցերը:

Հայ Ժողովուրդը գրկաբաց ընդունեց և ղթառատ մոր պես խնամեց այն երեխաներին, որոնք էվակուացվել էին Լենինգրադից, Ուկրաինայից, Հյուսիսային Կովկասից և այլ քաղաքներից:

Ահա ինչ է գրել ռազմա-ծովային նավատորմի ավագ լեյտենանտ Ի. Պուգաչը «Սովետական Հայաստանի» խմբագրությանը. «1941 թ. հունիսի 22-ին ինձ կարմիր բանակ ճանապարհեցին կինս ու որդիս: Ես պատերազմի առաջին իսկ օրից պաշտպանում էի Լենինգրադը: Ծանր օրեր էր ապրում հերոս քաղաքը: 1942 թ. սկզբներին հարազատներիս հետ իմ կապը կտրվեց: Այդ միջոցին վախճանվել էր կինս, որդիս մնացել էր միայնակ: ...Լենինգրադի № 82 մանկատունը փոխադրվեց Հայաստան: Այդտեղ երեխաները առաջին իսկ օրից իրենց ղգացին այնպես, ինչպես տանը: Ութ ամսվա բլոկադա ապրած երեխաների համար, որոնք ապրել են Լենինգրադի ուժեղածովային, արվեց ամեն ինչ, որպեսզի նրանք մոռանան այդ սարսափները, կարողանան նորից վազվզել, զվարճանալ, ծիծաղել: ...Մի մարտի ժամանակ ես վիրավորվեցի և բուժման համար ինձ ուղարկեցին հարավ: Այդտեղից ես մի քանի օրով գնացի Երևան, իմ երեխայի մոտ: ...Այդտեղ երեխաներն աճում են մի ընտանիքում, ամեն բանի մեջ երևում է և՛ սեր, և՛ հոգատարություն: ...Վերադառնալով ռազմաճակատ, ես հանգիստ եմ իմ երեխայի համար: Այն ամենը, ինչ ես տեսա, ավելի մեծ եռանդ է ներշնչում ինձ: Ես է՛լ ավելի շեշտակի կհարվածեմ գերմանական իժերին: ...Ես ուզում եմ իմ շնորհակալությունը հայտնել կուսակցական ու սովետական օրգաններին՝ մեր երեխաներին ցուցաբերվող մեծագույն հոգա-

տարության և ուշադրության համար: Դժվարանում եմ համապատասխան խոսք գտնել: Կասեմ պարզ լեզվով՝ նավաստիական իմ շնորհակալությունը ձեզ, հայ ընկերներ»¹:

Հայաստանի աշխատավորությունը ջանքեր չխնայեց օկուպանտներից ազատագրված քաղաքներն ու շրջանները վերականգնելու, բնակչությանն օգնելու, նրա համար նորմալ կյանք ու բարենպաստ պայմաններ ստեղծելու համար: Տուժած քաղաքների և շրջանների ազգաբնակչությանն օգնելու նպատակով Հայաստանի կուսակցական, կոմերիտական և արհմիութենական կազմակերպությունների նախաձեռնությամբ ստեղծվեցին Ստալինգրադի, Լենինգրադի, Օդեսայի և այլ քաղաքների ու շրջանների վերականգնման ֆոնդեր: Միայն Ստալինգրադի մարզի բնակիչների համար հանրապետության կոմերիտականներն ու պիոներ-դպրոցականները ուղարկեցին հինգ վագոն զգեստ և կենսամթերք:

Հայրենական պատերազմի ամբողջ ժամանակամիջոցում սովետական բազմազգ ժողովուրդը, այդ թվում և հայ ժողովուրդը լավագույն ձևով կազմակերպեց թիկունքի աշխատանքը և ռազմաճակատի սպասարկումը, համաժողովրդական օգնություն ցույց տվեց զինվորականների ընտանիքներին, հոսպիտալներում բուժվող ճակատայիններին, պատսպարեց էվակուացված բնակչությանը, մեծ հոգատարություն ցուցաբերելով նրա նկատմամբ: Իսկ ռազմաճակատում հայ ժողովրդի զավակները փառքով սպակեցին իրենց անունները, արժանի տեղ դրավելով Հայրենական պատերազմի պատմության տարեգրության մեջ:

1 «Սովետական Հայաստան», 2 հունիսի 1944 թ.:

Գ Լ Ո Ւ Խ Ե Ն Բ Կ Ը Ո Ր Դ

ԲԱՆՎՈՐՈՒՄԻՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԵՐՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՒՄ

Պատերազմի տարիներին ռազմաճակատի պահանջներն անընդմեջ ապահովելու համար ստեղծվեց ռազմական հզոր արդյունաբերություն: Այդ գործում իր համեստ բաժինն ունեցավ նաև Հայաստանի արդյունաբերությունը:

1941 թ. նոյեմբերին տեղի ունեցավ Հայաստանի Կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի 9-րդ պլենումը, որը, ղեկավարվելով ՍՄԿԿ Կենտկոմի և պաշտպանության պետական կոմիտեի գիրեկտիվներով, քննարկեց հանրապետության ամբողջ ժողովրդական տնտեսությունը վերակառուցելու, այն պատերազմական դրության հետ հարմարեցնելու հարցը: Միաժամանակ պլենումը կոնկրետ միջոցառումներ մշակեց հանրապետության արտադրական մի շարք ձեռնարկությունների կողմից ռազմական պատվերները կատարելու համար:

Արդյունաբերական ձեռնարկություններն սկսեցին ռազմաճակատի համար թողարկել ձեռքի նռնակներ, ակառնետներ, ավիառումբեր, հակատանկային արկերի զանազան տեսակներ, ռազմամթերք ու հանդերձանք:

Պատերազմի տարիներին կառուցվեցին և շահագործման հանձնվեցին բազմաթիվ գործարաններ, որոնք ունեին պաշտ-

սպանական նշանակութիւնն: Շարք մտան Երեւանի էլեկտրամեքենաշինական, էլեկտրասարքավորումների, ավտոդողերի, կոմպրեսորների, կաքելի, ժամացույցի, շարժիչների վերանորոգման, գլուղատնտեսական գործիքների գործարանները: Շահագործման հանձնվեցին նաև Ալավերդու ծծմբաթթվի, Ստեփանավանի գուլպայի, Շահումյանի շրջանի «Կարմիր ջուհակ» գործվածքային, Կիրովականի մորթու-մուշտակի, Լենինականի ներկի, Նոր Խարբերդի մանածագործական, Արաբկիրի գործվածքային, Հոկտեմբերյանի պահածոների գործարանները, արտելները և ցէխերը: Պատերազմի դժվարին պայմաններում կուսակցութիւնը և կառավարութիւնը ձեռնարկեցին նոր խոշոր օբյեկտներին՝ Սևանի ստորերկրյա հիդրոէլեկտրակայանի, Քանաքեռի ալյումինի, Պոլիմիլիացետատի և այլ գործարանների կառուցման աշխատանքներին: Շարունակվեցին Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի, Սպիտակի շաքարի, Շամշադինի ֆերմենտացիոն, Աշտարակի «Խեղես» գինու, Արզնիի ապակետարայի, Թումանյանի հրակայուն աղյուսի գործարանների շինարարութիւնները:

1942 թ. ավարտվեց արդյունաբերութիւն վերակառուցումը ռազմաճակատի պահանջներին համապատասխան: Այդ ժամանակաշրջանում հանրապետութիւն արդյունաբերական ձեռնարկութիւնները յուրացրին ավելի քան 250 նոր տեսակի արտադրանքի թողարկումը:

Հանրապետութիւն ծանր արդյունաբերութիւնը գերազանցապես աշխատում էր ռազմաճակատի աճող պահանջները բավարարելու համար: Մեքենաշինութիւն ձեռնարկութիւնների արտադրանքի մեջ զգալիորեն բարձրացավ ռազմական արտադրանքի տեսակարար կշիռը: Մեքենաշինական ձեռնարկութիւնները թողարկում էին արկեր, ափաններ, զանազան պահեստամասեր և այլն:

* * *

Ռազմական էկոնոմիկայի զարգացումն ապահովելու համար պահանջվում էր արդյունաբերութիւն ներքին ռեսուրսնե-

րի լիակատար օգտագործում, բանվորների լարված աշխատանք: Իսկ հանրապետության արտադրական ձեռնարկություններից ռազմաճակատ էին մեկնել շատ բանվորներ: Ստեղծված պայմաններում հրատապ խնդիր դարձավ կադրերի պատրաստումը:

Արտադրության մեջ ներգրավվեցին նոր կադրեր, մեծ թվով կանայք և աղջիկներ, որոնց մեծ մասը մինչև պատերազմը չէր աշխատել: Նրանք փոխարինեցին իրենց հարազատներին արդյունաբերության մեջ, տրանսպորտում և այլուր:

Շատ աղջիկներ, ավարտելով միջնակարգ դպրոցը և թողնելով բարձրագույն ուսում ստանալու վառ երազները, մտան ձեռնարկությունները և արագ կերպով յուրացրին որևէ մասնագիտություն:

Դա չտեսնված շարժում էր, բարձր հայրենասիրության լավագույն արտահայտություն:

Հայաստանի կանայք, աղջիկներն ու պատանիները, որոնք մեծ սիրով փոխարինեցին ռազմաճակատ մեկնածներին, հանդես բերեցին աշխատանքային մեծ եռանդ, ջանասիրություն, հերոսություն և բարձր հայրենասիրություն:

Նրանք գիտակցում էին, որ առանց թիկունքի կազմակերպված ու անխափան աշխատանքի, բանվորների, դուղացիների, մտավորականության հերոսական ջանքերի անհնարին է հաղթանակը, ուստի ամեն կերպ ձգտում էին արագորեն տիրապետել արտադրության տեխնոլոգիային, դառնալ որակյալ կադրեր, ժամանակին և բարձրորակ արտադրանք տալ հայրենիքին:

1941 թ. հունիսին Երևանի արտադրական ձեռնարկություններում աշխատող մի խումբ կանայք բաց նամակով դիմեցին Հայաստանի բոլոր կանանց՝ հայրենիքի պաշտպանության գործը թիկունքում ամրապնդելու և իրենց աշխատանքով սովետական բանակին ջգնելու մասին:

Այդ նամակում նրանք գրում էին.

«...Այժմ հասել է ժամը, երբ մեր երկրի բոլոր կանայք պետք է մեկ մարզու նման դուրս գան պայքարի, գործարա-

նում, թե կոլտոլում, հիմնարկում, թե ֆրոնտում զենքը ձեռք-
ներին, օգնեն կարմիր բանակին՝ զաղաղած ֆաշիզմին մինչև
վերջը ջախջախելու համար:

Դեպի դադահան՝, դեպի մեքենան՝, դեպի զենք: Փո-
խարինենք մեր ամուսիններին, մեր եղբայրներին, և եթե եր-
կիրը պահանջի, նրանց հետ կողք-կողքի դիրքերը մեկնենք:
Քեզ, հայրենիք, երգվում ենք, եր եչ մի օր, ոչ մի ժամ, ոչ մի
րոպե մեր հայրենիքը չպիտի զգա իր որդիների բացակայու-
թյունը, նողկալի թշնամին պիտի ջնջվի երկրի երեսից միան-
գամ ընդմիշտ»¹:

Նույնպիսի բովանդակությամբ նամակով հանդես եկան
նաև կենինականի մանարան գործարանի կին աշխատողները:

Երևանի և կենինականի աշխատավորուհիների դիմում-
կոշերը լայն արձագանք գտան հանրապետության արգյունա-
քերական ձեռնարկով լույսնեցողում, ինչպես նաև տնային տըն-
տեսուհիների լայն շրջաններում:

Ի պատասխան այդ դիմումների, Երևանում տեղի ունե-
ցած հակաֆաշիստական միտինգի մասնակից կանայք իրենց
կամքը, պատրաստակամությունը հայտնեցին փոխարինելու
ռազմաճակատ մեկնած հարազատներին, բարձրացնելու աշ-
խատանքի արտադրողականությունը, կատարելու և դերակա-
տարելու ռազմաճակատի պատվերները, օգնելու սովետական
բանակին, ապահովելու մեր հաղթանակը թշնամու դեմ:

«Մենք՝ Հայաստանի կանայք, —ասաց իր ելույթում մի-
տինգի մասնակից Գ. Դուրինյանը, —սկսեք է ետ շմանք մեր
երկրի սիրտ մեծ Մոսկվայի և կենինի քաղաքի գործարաննե-
րում իրենց զավակներին, եղբայրներին, ամուսիններին փո-
խարինող կանանցից, շինայենք մեր ուժերը, եթե հարկ լինի
և կյանքը, կարմիր բանակի թիկունքը է՛լ ավելի ամրացնելու
համար»²:

1 «Մովետական Հայաստան», 26 հունիսի 1941 թ.:

2 «Մովետական Հայաստան», 10 սեպտեմբերի 1941 թ.:

Ֆաշիզմը կանանց ռիսերիմ թշնամին է, շեշտում էին ներ-
քանք իրենց ելույթներում: Սովետական կանայք ակտիվ մաս-
նակցում են պատերազմին, նրանք պետք է յուրացնեն ռազ-
մական արտադրության գործը, ավելացնեն արտադրանքը,
անձնվեր աշխատանքով խափանեն թշնամու առաջխաղա-
ցումը:

Հայրենական պատերազմի առաջին օրերին Երևանի Ձեր-
ժինսկու անվան մեքենաշինական գործարանից մեծ թվով
բանվոր-ծառայողներ մեկնեցին ռազմաճակատ: Նրանց փո-
խարինելու եկան տասնյակ երիտասարդ հայ և ռուս կանայք:

Աննա Պրոտոսովան, որի ամուսինը ռազմաճակատում էր,
աշխատանքի անցավ գործարանում: 15 օր որպես աշա-
կերտ աշխատելուց հետո, նա դարձավ շորրորդ կարգի փա-
կանագործ՝ օրվա առաջադրանքները կատարելով 500—
600 տոկոսով: Անվանի բանվորուհին միաժամանակ ակտիվ
կերպով մասնակցում էր հասարակական աշխատանքներին:
Հետագայում նա պարգևատրվեց Հայկական ՍՍՀ Գերագույն
սովետի պատվոգրով: Աննա Պրոտոսովայից ետ չէին մնում
Արփիկ Սմբատյանը, Լենա Դավթյանը և ուրիշներ: Փոխարինե-
լով ռազմաճակատ մեկնած ամուսնուն՝ Ա. Սմբատյանը կարճ
ժամանակամիջոցում որակավորվեց և դարձավ երկրորդ կար-
գի խառատ: Որպես առաջավոր բանվորուհի Արփիկ Սմբատ-
յանը ընդունվեց կոմունիստական կուսակցության շարքերը:
Լենա Դավթյանը միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ըն-
դունվեց որպես աշակերտ և դարձավ որակյալ խառատ:

Պատերազմի առաջին օրերին Երևանի մակարոնի ֆաբրի-
կա եկավ Պայծառ Բաղդասարյանը: Կարճ ժամանակամիջո-
ցում առաջավոր բանվորուհին դարձավ բրիգադավար:

Հայրենիքը պաշտպանելու համար Երևանի պահածոների
գործարանի բազմաթիվ բանվորներ և ծառայողներ կամավոր
համալրեցին կարմիր բանակի շարքերը: Շուտով նրանց փո-
խարինելու եկան գործին անժանոթ տնային տնտեսուհիներ:
Կանայք ստանձնեցին նաև գործարանի հակահրդեհային

պաշտպանութեան գործը, փոխարինելով մոբիլիզացիայի ենթարկված տղամարդ հրշեջներին:

Պատերազմի առաջին օրերին Երևանի տրամվայի պարկից կարմիր բանակ մեկնած վազոնավարներին փոխարինելու համար աշխատանքի ընդունվեցին 28 տնտեսուհի:

Երբ Շուշիի Գրիգորյանի տղան մեկնեց ռազմաճակատ, նա աշխատանքի անցավ Լենինականի տրիկոտաժի ֆաբրիկայում: Նա որակավորվեց, դարձավ արտադրութեան առաջավոր:

Հանրապետութեան հայ, ռուս, ադրբեջանցի և եղբայրական մյուս ժողովուրդների առաջավոր կանայք, դպրոցական երիտասարդ աղջիկներ աշխատանքի անցան ամենատարբեր ձեռնարկութուններում:

1941 թ. հունիսի 23-ին Ղափանի շրջանում, շատ հայուհիներ, այդ թվում երիտասարդ աղջիկներ, հանքային կոմբինատի վարչութեանը խնդրեցին կարմիր բանակ մեկնածների փոխարեն իրենց ընդունել աշխատանքի, հայտնելով, որ իրենք կարող են և կկատարեն ամեն մի աշխատանք՝ գազադած թշնամուն հաղթելու համար:

Պատերազմի սկզբնական շրջանում Ղափանի պղնձի հանքերում և հարստացուցիչ ֆաբրիկայում աշխատանքի անցան տասնյակ կանայք: Նրանցից ոմանք դարձան վարպետներ:

Բանակ մեկնեց Ղափանի պղնձահանքային կոմբինատի վազոնավար Սուրեն Համբարձումյանը: Նույն հանքում սկսեց աշխատել նրա կինը՝ կոմերիտուհի Սաթիկ Համբարձումյանը, սկզբում որպես պայթեցնողի օգնական, իսկ հետո որպես ինքնուրույն պայթեցնող: Ս. Համբարձումյանի փնջային պայթեցման ռացիոնալիզատորական առաջարկը ներդրվեց հանքերում: Նա իր առաջադրանքները կատարում էր 150—160 տոկոսով: Անվանի լեռնագործի անբասիր աշխատանքը բարձր գնահատվեց սովետական իշխանութեան կողմից: Նա պարգևավորվեց Պատվո նշան շքանշանով:

Սաթիկ Համբարձումյանի նման շատ էնտուզիաստ կանայք էին աշխատում Ղափանի հարստացուցիչ ֆաբրիկայում: Այսպես, կոմերիտուհիներ Ա. Հովհաննիսյանը, Հ. Սարգսյա-

ներ, է. Ղազարյանը գործարանի ղեկավարութեանը խնդրեցին իրենց հանձնարարել այն ցեխերի ղեկավարումը, որոնք մինչ այդ գլխավորում էին բանակ մեկնած բանվորները: Նրանց խնդրանքը հարգվեց: Ցեխերը հասան բարձր ցուցանիշների:

Ֆլոտատոր Անուշավարդ Հովհաննիսյանը մինչև պատերազմը ղեկավարում էր ֆլոտացիոն ֆաբրիկայի երեք ագրեգատ: Շրջ գործարանի երկու ֆլոտատորներ մեկնեցին բանակ, հալբենացիներ կինը սկսեց ղեկավարել նաև նրանց ագրեգատները:

Մոսկվայի հերոսական պաշտպանության օրերին Երևանի, Լենինականի, Կիրովականի, Ղափանի, Ալավերդու արտադրական ձեռնարկությունների բանվորների ու ծառայողների աշխատանքային նշանաբանը դարձավ աշխատել է՛լ ավելի լավ և արտադրողաբար, ամեն կերպ ուժեղացնել ռազմաճակատին ցույց տրվող օգնությունը, լինել կարգապահ, տոկոս և աշխուրջ:

Գնալով, արտադրության մեջ կանանց ներգրավումն ընդունեց ավելի սիստեմատիկ բնույթ: Եթե մինչև պատերազմը արտադրական ձեռնարկություններում կանայք տոկոսային հարաբերությամբ ղգալիորեն ետ էին մնում տղամարդկանցից, ապա պատերազմի տարիներին նրանց տեսակարար կշիռը դգալի չափով մեծացավ, 1942 թվականին հասնելով 54,4 տոկոսի¹: 1943 թվականի առաջին կիսամյակում Լենինյան շրջանի արտադրական ձեռնարկություններում աշխատող կանայք կազմում էին բոլոր աշխատողների ավելի քան 40 տոկոսը:

Կիրովի անվան գործարանում աշխատում էին ավելի քան 700 կին, որոնց մեծ մասը արտադրություն էր եկել պատերազմի օրերին: Առ մեկը հունիսի այդ գործարանում կանայք կազմում էին բոլոր բանվորների 42,2 տոկոսը: Միսիսոտի գործարանում կանայք կազմում էին բոլոր բանվորների 67,1, տես-

1 Գր. Հառությունյան, Հաշվետու ղեկուցում Հայաստանի Կ(Բ)Պ XIX համագումարում ՀԿ(Բ)Պ Կենտրոնական կոմիտեի աշխատանքի մասին, Երևան, 1948, էջ 19:

րակի գործարանում՝ 77,9, կաշվի գործարանում՝ 52,6 տոկոսը¹:

Ձեթ-օճառ կոմբինատում, պահածոների, մակարոնի, ապակու տարալի գործարաններում աշխատող բանվորների բացարձակ մեծամասնությունը կազմում էին կանայք:

Երկու տարվա ընթացքում (1941—1943) սննդարդյունաբերության մեջ կանանց տեսակարար կշիռը 32,2 տոկոսից բարձրացավ 51,4 տոկոսի, իսկ տեքստիլ արդյունաբերության մեջ համապատասխան ցուցանիշներն էին՝ 53,3 և 93,9 տոկոս²:

Կանայք արտադրական ձևնարկություններ էին գալիս ինքնաբերույթ, բարձր զիտակցությամբ և հայրենասիրական բարձր զգացումով:

Հայրենական պատերազմի վերջին տարում Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության մեջ (առանց զյուղատնտեսության) աշխատում էր 65 հազարից ավելի կին, որը կազմում է բանվորների և ծառայողների ընդհանուր թվի 43,8 տոկոսը³:

Սովետական Միության, ինչպես նաև Հայաստանի արդյունաբերության մեջ աշխատող կանայք նյութական և հոգեկան ուժերի մեծ լարումով, տոկունորեն և քաջաբար տարան պատերազմական ժամանակաշրջանի դժվարություններն ու փորձությունները:

Հանրապետության աշխատավոր կանայք ամենագովարին տեղամասերում՝ ֆաբրիկաներում, գործարաններում, հանքերում, երկաթուղում, փոխարինելով տղամարդկանց, մեծ օգնություն ցույց տվեցին հայրենիքին և սովետական բանակին:

* * *

Որակյալ կադրերի պատրաստումը, ինչպես միշտ, այնպես էլ պատերազմի տարիներին գտնվում էր կուսակցության

1 ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 32, գ. 25, թ. 90:

2 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 163, ց. 15, գ. 229, թ. 76, 86, 88:

3 Նույն տեղում, ֆ. 40/113, ց. 9, գ. 354, թ. 39:

և կառավարության ուղադրության կենտրոնում: Պատերազմի տարիներին արտադրությունն եկած նոր կադրերը, գլխավորապես կանայք, որակավորման խիստ կարիք էին զգում:

Ահա ինչու կուսակցությունն ու կառավարությունը հետեւողական կերպով զբաղվում էին կադրերի ինչպես տեխնիկական, այնպես էլ քաղաքական ուսուցման հարցերով: Այդ ուղղությամբ մեծ աշխատանք ծավալվեց նաև Հայկական ՍՍՀ-ում: Կազմակերպվեցին տեխուսուցման խմբակներ, աճեց կարճատև դասընթացների ցանցը: Արտադրությունն եկած նոր կադրերն իրենց որակավորումը բարձրացնում էին ֆարքրիկա-գործարանային ուսումնարաններում, ինչպես նաև անհատական ուսուցման միջոցով:

1941 թ. հուլիսից մինչև 1943 թ. վերջը Երևան քաղաքի էկոնոմիկայի շրջանում տարբեր մասնագիտությունների որակավորում ձեռք բերեցին 1833 կին¹: Տեխնիկական ուսուցման ցանցում որակավորվեց 1363 բանվորուհի²:

Երևանի Օրջոնիկիձեի շրջանի արդյունաբերական ձեռնարկությունների կողմից կազմակերպված դասընթացներում իրենց որակավորումը բարձրացրին 2271 մարդ, որի մոտավորապես կեսը կանայք էին³:

Ս. Մ. Կիրովի անվան գործարանում անհատական և բրիգադային ուսուցման միջոցով որակավորվեցին 1941 թ.⁴ 90 բանվորուհի, 1942 թ.⁵ 390, իսկ 1943 թ. 5 ամսվա ընթացքում՝ 193 բանվորուհի⁴:

1943 թ. Երևանի արտադրական ձեռնարկությունների տեխնիկական ուսուցման խմբակներում սովորեցին 2157, իսկ 1944 թ. 9 ամսում 2420 պատանի և աղջիկ⁵:

Պատերազմի տարիներին կապի առաջավոր աշխատողներ դարձան համապատասխան բրակավորում ձեռք բերած 383

1 Ա. Լ. Հաբուրյունյան, Երևանը Հայրենական մեծ պատերազմի տարիներին, էջ 13:

2 ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 32, գ. 1153, թ. 21:

3 Նույն տեղում, ֆ. 1, ց. 32, գ. 1153, թ. 370:

4 Նույն տեղում, գ. 370, թ. 4:

5 ՀՊՊԿ արխիվ, ֆ. 259, գ. 1, թ. 11:

կին, որից 145-ը հեռախոսավարուհիներ էին, 99-ը՝ հեռագրային ապարատի աշխատողներ (տեխտայպիստներ), 11-ը՝ քաղաքային հեռախոսային ցանցի վարպետներ, 32-ը՝ ռադիո մասնագետներ, 24-ը՝ տեսակավորողներ, 32-ը՝ փոստային գործակալներ, 10-ը՝ ռադիոտեխնիկներ¹:

Կառուցվելի գործարանում անհատական ուսուցման միջոցով վարպետի կոչում ձեռք բերեցին 118 կին, բրիգադային ուսուցման միջոցով իրենց որակավորումը բարձրացրին 87 մարդ, հատուկ դասընթացներում՝ 54, ստախանովյան դպրոցն ավարտեցին 18 մարդ²:

Ս. Մ. Կիրովի անվան գործարանի լաբորատորիայի վարիչ Նենա Բերդիբաշյանը և ցեխի վարպետները կարողացան բարձրացնել նորեկ բանվորների որակավորումը և ապահովել բարձրորակ արտադրանքի թողարկումը: Ինժեներ Մանուշ Խաչատրյանի զխալորած կոլեկտիվը, յուրացնելով արտադրանքի բարդ տեխնոլոգիան, գիշեր ու ցերեկ մտահոգված էր հայրենիքին բարձրորակ արտադրանք տալու ձգտումով: Մանուշ Խաչատրյանից ետ չէր մնում ցեխի պետ, ինժեներ, «Աշխատանքային գերազանցության համար» մեդալով պարգևատրված է. Տեր-Հովհաննիսյանը: Վերակառուցելով ցեխի աշխատանքները, նորարարական մեթոդների օգնությամբ նա հասավ պլանների կատարման բարձր ցուցանիշների և նյութերի զգալի տնտեսման:

Որակյալ արտադրանք էր տալիս Երևանի Զեթ-օճառ կոմբինատի ենթավարպետ Բավական Ավետիսյանը: Կարճ ժամանակամիջոցում տիրապետելով օճառի սառեցման մասնագիտությանը, նա սխտեմատիկաբար գերակատարում էր արտադրական պլանները: Նոր և բարդ մասնագիտության արագ տիրապետման գործում աչքի ընկան նաև Մարգո Հովհաննիսյանը, Մարիամ Զատիկյանը և Փիրուզ Հովսեփյանը, որոնք աշխատում էին բովման պրոցեսների տեղամասում:

¹ ՀՍՍՀ ՀՌՍՇ ՊԿԱ, ֆ. 163, ց. 15, գ. 24, թ. 11:

² ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 32, գ. 1153, թ. 21:

Աշխատանքի հիմնալի օրինակ էին ցույց տալիս տրիկո-տաժի գործարանի առաջավոր կադապարողներ Զաբիկ Թով-մասյանը, Հայկուշ Սիմոնյանը և Վարդուշ Ավետիսյանը:

Լավ աշխատանքի օրինակներ ցույց տվին հանրապետու-թյան շատ շրջանների ու քաղաքների արտադրական ձեռնար-կաթղթի տնայինում աշխատող կանայք:

ԼԿԵՄ Ղափանի շրջկոմի և պղնձի կոմբինատի ղեկավա-րության նախաձեռնությամբ կազմակերպվեցին կարճատև դասընթացներ: Առանց արտադրութունից կտրվելու այստեղ սովորում էին շատ կոմերիտուհիներ, որոնք դասընթացներն ավարտելուց հետո աշխատանքի անցան որպես խոտաաներ, մեքենավարներ, էլեկտրամոնտյորներ և փականագործներ:

1943 թ. աշնանը ֆաբրիկոմից Ղափանի հարստացուցիչ ֆաբրիկա եկավ Մարգո Խաչատրյանը և սկսեց խնայողությամբ աշխատել որպես ֆլոտատոր:

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի ղեկավարությամբ, կուսակ-ցության անդամ Կատինկա Դավթյանը մինչև պատերազմը աշխատում էր Ալավերդու պղնձաձուլական գործարանում: Պատերազմը սկսվելուն պես նա աշխատանքի անցավ հանքա-հորում:

Բլխավոր հանքուղուն խափացած օդ մատակարարող մեքե-նաների անխափան աշխատանքն սպառնում էին բանվորու-հիներ Հ. Գալստյանը, Ա. Կարապետյանը և Մ. Գրիգորյանը:

Այսպիսով, Հայրենական պատերազմի օրերին կանայք կազմեցին հանրապետության արդյունաբերության աշխա-տողների առաջատար ջոկատներից մեկը:

* * *

Հայրենական պատերազմի ամբողջ ժամանակաշրջանում արդյունաբերության մեջ աշխատող կանայք արտադրական պլանները, և հատկապես ռազմական առաջադրանքները կա-տարում էին ժամանակին և բարձրորակ:

Կանայք դարձան արտադրության առաջավորներ, նպաս-տեցին սոցիալիստական տնտեսության զարգացմանը և երկրի պաշտպանունակության ամրապնդմանը:

Սոցիալիստական մրցությունը դարձավ ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու, արտադրանքի ինքնարժեքն իջեցնելու, պլանների կատարումն ապահովելու, աշխատավորական լայն մասսաների ստեղծագործական ակտիվությունը և նրանց նախաձեռնությունը դրսևորելու լավագույն միջոց։ Իրականացան Վ. Ի. Լենինի խոսքերը այն մասին, որ «Սոցիալիզմը ոչ միայն չի մարում մրցությունը, այլ, ընդհակառակը, առաջինն է հնարավորություն ստեղծում իրոք լայնորեն կիրառելու այն, իրոք մասսայական չափով, իրոք աշխատավորների մեծամասնությունը ներգրավելու այնպիսի աշխատանքի ասպարեզը, որտեղ նրանք կարող են երևան բերել իրենց, ծավալել իրենց ընդունակությունները, դրսևորել տաղանդներ, որոնք ժողովրդի մեջ անսպառ աղբյուր են...»¹։

Մեր հայրենիքի համար ստեղծված ծանր ժամանակաշրջանում սկսվեց համամիութենական սոցիալիստական մրցության նոր վերելք։ 1942 թ. մայիսի 7-ին Կուլնեցկի կոմբինատի բանվորները հանդես եկան սև մետալուրգիայի աշխատողների համամիութենական սոցիալիստական մրցությունը կազմակերպողների գերում։ Լենինի շքանշանակիր մուսուաշինական գործարանի կոլեկտիվը, ողջունելով Կուլնեցկի կոմբինատի բանվորների զիմում-կոչը, նոր պարտավորություններ վերցրեց ռազմական բարձրորակ արտադրանք թողարկելու համար։ Մայիսի 9-ին Կիրովի անվան գործարանի կոլեկտիվը տանկային արդյունաբերության բոլոր աշխատողներին առաջարկեց ծավալել տանկաշինարարների համամիութենական սոցիալիստական մրցություն։

Մայիսին հայտնի սոցիալիստական մրցության կազմակերպումով սկիզբ դրվեց հայրենասիրական մի նոր, հուժկու, ավելի մասսայական, իսկական համաժողովրդական շարժման։

Հայկական ՍՍՀ արդյունաբերական ձեռնարկությունների աշխատողները, ջերմորեն ողջունելով և պաշտպանելով երկրի

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 26, էջ 493—494։

առաջավոր ձեռնարկությունների կոչերը, հանդես եկան սոցիալիստական մրցության նոր պարտավորություններով: Հանրապետության արտադրական ձեռնարկություններում աշխատող բանվորուհիները մտնելով սոցիալիստական մրցության մեջ, դրսևորեցին աշխատանքային նոր եռանդ ու խանդավառություն, ցույց տվեցին հայրենասիրական անօրինակ խիզախումներ:

Նախամալիսյան սոցմրցման մեջ ընդգրկված հանրապետության արտադրական ձեռնարկություններից առանձնապես աչքի ընկան Ս. Մ. Կիրովի անվան, մեքենաշինական, պահածոների, կարի, մետաքսի գործարանների, մարտի 8-ի անվան արտելի, Լենինականի տեքստիլ և մսի կոմբինատների, Չկալովի անվան կարի, կոշիկի գործարանների, Ալբումի պահածոների գործարանների կոլեկտիվները:

Սոցիալիստական մրցությամբ պարտավորություններ ըստանձնած յուրաքանչյուր բանվորուհի աշխատում էր «այսօր տվելի շատ և ավելի բարձրորակ արտադրանք տալ, քան տվել ենք երեկ, իսկ վաղը տվելի շատ, քան այսօր» նշանաբանով:

Այդ են ապացուցում հանրապետության մի շարք արտադրական ձեռնարկությունների ձեռք բերած հաջողությունները: Երևանի կարի 3-րդ ֆաբրիկան, մտնելով սոցմրցման մեջ, 1943 թ. առաջին եռամսյակում մարտիկների համար նախատեսված 580.000-ի փոխարեն արտադրեց 697.000 կտոր համազգեստ, պլանը կատարելով 122 տոկոսով¹, իսկ կարի առաջին ֆաբրիկան, օրինակելիորեն կատարելով ստանձնած պարտավորությունները, 1943 թ. առաջին եռամսյակում հաստատարադրական բարձր ցուցանիշների, պլանից դուրս տալով չորս դնդի անձնակազմի համար անհրաժեշտ հանդերձանք²:

Սոցիալիստական մրցության մեջ ընդգրկված կանանց թիվը գնալով ավելանում էր: Լենինյան շրջանում արտադրության պլանները դերակատարող կանանց թիվը հասավ 1500-ի:

1 ՀՍՍՀ ԶՌՍՀ ՊԿԱ, ֆ. 40/113, ց. 9, գ. 234, թ. 14:

2 ՄԼԻ-ի Հակական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 32, գ. 1181, թ. 58:

Մեքենաշինական գործարանի առաջավոր կանայք կազմում էին գործարանի բոլոր բանվորների 63,3 տոկոսը, կոշիկի գործարանում՝ 54,6 տոկոսը, Ձեթ-օճառ կոմբինատում՝ 40,1 տոկոսը և այլն: Սոցիալիստական մրցությունը լայնորեն ծավալվեց Երևանի պահածոների գործարանում: Գործարանի ինժեներներ Անիկ Կարապետյանը, Լյուբա Ռոզինբերգը, վարպետներ Սաթիկ Թարջիմանյանը, Գոհար Խաչատրյանը, Լիզա Բաբայանը մշտապես ապահովում էին իրենց առաջավոր գերը արտադրության մեջ և իրենց օրինակով խանդավառում բանվորուհիներին:

Կովկասի հերոսական պաշտպանության օրերին Երևանի պահածոների գործարանի կոլեկտիվը № ղորամասի մարտիկներից ստացավ նամակ և սոցմրցման հրավեր:

Ռազմիկները դրում էին, որ մտնելով նախահոկտեմբերյան մրցության մեջ, պարտավորվում են պիոներական օկուպանտներին ջախջախելու համար չխնայել իրենց արյան վերջին կաթիլը և բանվոր-բանվորուհիներին կոչ էին անում վերցնել նորանոր պարտավորություններ՝ ռազմաճակատին ավելի շատ արտադրանք տալու և բանակին օգնելու համար¹:

Երևանի պահածոների գործարանի կոլեկտիվը պատասխան նամակում հայտնում էր, որ ընդունում է ճակատայինների սոցիալիստական մրցության հրավերը և հստակացնում էր պլանից դուրս մի քանի հազար տոնի պահածո տալ ռազմաճակատին, կրճատել էլեկտրաէներգիայի ծախսումը, իսկ վառիկանյութի խնայողությունը հասցնել 10—15 տոկոսի²:

Երկրորդ ցիխը մտնելով համամիութենական սոցիալիստական մրցության մեջ, պարտավորվեց բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, լրիվ կարողությամբ օգտագործել մեքենաներն ու հումքը: Յիսր պատվով կատաբեց ստանձնած պարտավորությունները: Նույն ցիխի բանվորուհի-

1 ՀՊՊԿ արխիվ, ֆ. 240, դ. 169, թ. 4:

2 Նույն տեղում:

ներ Վարդուշ Գրիգորյանը, Փիրուզ Ավետիսյանը, Աստղիկ Մալխասյանը հմտորեն տիրապետելով տեխնիկային, ռացիոնալ կերպով օգտագործելով ժամանակը, կատարում էին երկուսական արտադրական նորմա:

Արաբկիրի տեքստիլ արտելի բանվորուհիները, միանալով համաժողովրդական շարժմանը, մրցման հրավիրեցին Սովետաշենի տեքստիլ արտելին, պարտավորվելով արտադրանքի ինքնարժեքն իջեցնել 3 տոկոսով, էլեկտրաէներգիան և վառելանյութը տնտեսել 10 տոկոսով, արտադրանքի ընդհանուր ծավալում առաջին տեսակի գործվածքների տեսակարար կշիռը հասցնել 75 տոկոսի: Բանվորուհիները պայքարում էին պայմանագրի բոլոր կետերը ժամկետից շուտ կատարելու համար: Սոցմրցման պայմանագիր կնքելուց հետո, անհատական կցման կարգով, արտելում որակավորվեց 40 ջուլհակուհի, որոնք զերակատարում էին նորմաները:

Լենինականի Չկալովի անվան կարի գործարանի ստախանովական բանվորուհի Նլենա Մկրտչյանը, մտնելով սոցմրցման մեջ, 1942 թ. մայիս ամսվա արտադրական նորման կատարեց 185 տոկոսով, իսկ հունիսին՝ 203 տոկոսով:

Լենինականի մսի կոմբինատի կոլեկտիվը, արձագանքելով մրցողներին, նույնպես կոնկրետ պարտավորություններ ստանձնեց: Կոմբինատի կուսակցական կազմակերպությունը, զլխավորելով աշխատավորների հայրենասիրական նախաձեռնությունը, կարճ ժամանակամիջոցում հասավ զգալի հաջողությունների:

1942 թ. առաջին կիսամյակի պլանը բանվոր-բանվորուհիները կատարեցին 134,5 տոկոսով:

Կոմբինատուհի Արմիկ Ավագյանի ղեկավարած ցեխը կարճ ժամանակամիջոցում հասավ արտադրական լուրջ հաջողությունների և շահեց միջցեխային փոխանցիկ գրոշը:

Հայրենական պատերազմի տարիներին աճեցին կոմբինատական երիտասարդական ճակատային բրիգադները: Նրանց խնդիրն էր կրճատել աշխատուժը, առանց պակասեցնելու արտադրանքը:

Երիտասարդական կոմերիտական ճակատային բրիգադի կազմակերպման պիոները հանդիսացավ Մոսկվայի առանցքակալների պետական առաջին գործարանի բանվորուհի Եկատերինա Բարիշնիկովան։ Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո նա եկավ գործարան և կարճ ժամանակից հետո դարձավ երիտասարդական կոմերիտական ճակատային բրիգադի ղեկավար։ Նրա բրիգադում կար վեց աղջիկ, որոնք օրվա նորման կատարում էին 200—300 տոկոսով։

Եկատերինա Բարիշնիկովան, առանց արտադրանքի նորման իջեցնելու, երեք ընկերների օգնությամբ կարողացավ ապահովել պետական առաջադրանքների կատարումը և դարձավ հիշյալ շարժման նախաձեռնողը։ Բարիշնիկովայի աշխատանքի մեթոդը տարածվեց ամբողջ երկրով մեկ։

Հայաստանի գործարաններում, ֆաբրիկաներում, հանքահորերում, երկաթուղային տրանսպորտում և ամենուր ջերմորեն արձագանքեցին Բարիշնիկովայի հայրենասիրական նախաձեռնությունը։

Հայկական ՍՍՀ արտադրական ձեռնարկությունների կուսակցական, կոմերիտական և արհմիութենական կազմակերպությունները լայնորեն մասսայականացրին Բարիշնիկովայի հայրենասիրական նախաձեռնությունը, ամենօրյա ղեկավարություն ու ուղղություն տալով ձեռնարկություններում ստեղծված բրիգադներին։

Հայրենական պատերազմի տարիներին հանրապետության արտադրական ձեռնարկություններում ստեղծվեցին երիտասարդական կոմերիտական ճակատային ավելի քան 750 բրիգադ, որոնց մեջ ընդգրկված էին 6.000 երիտասարդ տղաներ ու աղջիկներ¹։

Երևանի Լենինյան շրջանի արտադրական ձեռնարկություններում կազմակերպված երիտասարդական կոմերիտական ճակատային 120 բրիգադում ընդգրկված էին 750—800 կոմերիտական ու կոմերիտուհի։ Այդ բրիգադներից 28-ը

¹ ՀԳՊԿ արխիվ, ֆ. 259, դ. 1, Խ. 6։

իրենց արտադրական պլանները կատարում էին 200—300 տոկոսով: Աշխատելով Բարիշնիկովայի մեթոդով, նրանք կրճատեցին իրենց կազմը 160 մարդով, հնարավորություն տալով ազատված բանվորական ուժը օգտագործել այլ բնագավառներում¹:

Լենինականի գործարաններում և երկաթուղային հանգույցում պատերազմի տարիներին երիտասարդական կոմերիտական ճակատային բրիգադների թիվը հասավ 163-ի, որոնցում ընդգրկված էին 542 կոմերիտական ու կոմերիտուհի²:

Կիրովականի արտադրական ձեռնարկությունների կոմերիտական-երիտասարդական ճակատային 57 բրիգադների անդամների մեծ մասը կոմերիտականներ էին, որոնք կատարում և գերակատարում էին իրենց արտադրական պլանները: Գերազանց աշխատանքի օրինակ էին տալիս Մյասնիկյանի անվան քիմիական, մուշտակի գործարանների, Շահումյանի տնվան կարի արտելի, Ջորագէսի և այլ արտադրական ձեռնարկությունների ճակատային բրիգադները:

Ավանգարդայինների շարքերում էին ընթանում Ալավերդու գործարանների և հանքերի կոմերիտական երիտասարդական ճակատային 14 բրիգադները:

Ղափանի ֆլուտացիոն ֆաբրիկայի երիտասարդական կոմերիտական ճակատային բրիգադներում ընդգրկված կոմերիտականներն ու կոմերիտուհիները ևս արտադրության առաջավորներ էին:

Երիտասարդական կոմերիտական ճակատային բրիգադներում իրենց օրինակելի աշխատանքով աչքի էին ընկնում կանաչք և աղջիկները: Նրանք աշխատանքի արտադրողականության բարձրացման բնագավառում ձեռք բերած փորձն ու մեթոդը հաղորդում էին մյուս բանվոր-բանվորուհիներին, նպաստում պլանների գերակատարմանը, նշանաբան ունենալով «ոչ միայն քանակով, այլև համությամբ» կոչը:

¹ ՀՊՊԿ արխիվ, ֆ. 259, դ. 1, թ. 8:

² Նոյն տեղում, ֆ. 275, դ. 17, թ. 58:

Ստալինգրադի հերոսական պաշտպանության օրերին Երևանի պահածոների գործարանում, ՀամԼԿԵՄ 25-ամյակի և հերոս քաղաքի պաշտպանների անվան բրիգադները, որոնց կազմը բաղկացած էր բացառապես կանանցից, համարձակ ու խելացի կազմակերպված աշխատանքի շնորհիվ, պատվերները կատարում էին ժամանակին: Իսկ տրամվայի պարկում ստեղծված ճակատային բրիգադը, որի բրիգադավարն էր Դուրա Բաբայանը, սխտեմատիկ զերակատարում էր պլանները:

Հիշատակության արժանի է Երևանի Ձեթ-օճառ կոմբինատի երիտասարդական-կոմերիտական ճակատային բրիգադը, որը ղեկավարում էր առաջավոր բանվորուհի, ճակատայինի կին Թամարա Մինասյանը: Այդ բրիգադը կիսամյա պլանը կատարել էր 300 տոկոսով և արգարացրել իր բարձր կոշտմը:

Երևանի կոշիկի № 3 ֆաբրիկայում, որտեղ աշխատանքի մեքենայացման մակարդակը ցածր էր և արտադրական շատ պրոցեսներ կատարվում էին ձեռքով, կազմակերպվեցին ճակատային բրիգադներ: Դրանցից մեկը՝ ձեռողների ճակատային բրիգադը ղեկավարում էր անվանի բանվորուհի Մարիամ Թումանյանը, որը մինչև Հայրենական պատերազմը ապրել էր Օդեսայում և պատերազմի առաջին ամիսներին ակտիվ կերպով մասնակցել քաղաքի պաշտպանությանը:

Հմտորեն տիրապետելով ձեռնու գործին, Թումանյանը օրեցօր սկսեց ավելացնել արտադրանքի քանակը; օրական կատարելով մի քանի արտադրական նորմա: Աշխատանքային ժամանակը ռացիոնալ օգտագործելու և կատարելագործված մեթոդների շնորհիվ նրա գլխավորած բրիգադը հասավ արտադրական նոր վերելքի և հումքի խնայողության:

Ս. Մ. Կիրովի անվան գործարանում ռուզմական հատուկ առաջադրանքները ժամանակին ու որակով էր կատարում Աննա Նապալկինայի գլխավորած երիտասարդական ճակատային բրիգադը¹: Բրիգադի առաջավոր բանվորուհի խասվար

¹ «Կառուչուկի համար», № 13, 1943:

Հուսիսային կարճ ժամանակամիջոցում վարպետացավ իր մասնագիտության մեջ, իսկ անհրաժեշտության դեպքում փոխարինում էր ցեխի վարիչին:

Հայէկեկտրագործարանի երիտասարդական ճակատային բրիգադների 12 երիտասարդ բանվորուհիներ աշխատանքային լավագույն ցուցանիշների համար, 1944 թվականին ՀամԼԿԵՄ 25-րդ տարեդարձի առթիվ պարգևատրվեցին ՍՍՀՄ Գերագույն սովետի պատվոգրերով, իսկ կենինյան շրջանի արտագրական ձեռնարկություններից 9 առաջավորներ՝ ՀամԼԿԵՄ Կենտկոմի պատվոգրերով: Նրանց թվում էին Մարֆա Բոնդուրը (մակարոնի ֆաբրիկայից), Անիկ Հովսեփյանը (ձեթ-օճառ կոմբինատից), Իսկուհի Թերզյանը (ավտոմեքանիկական գործարանից), Արփիկ Թորոսյանը (ցեխի ապարատավար և նույն ցեխի ԼԿԵՄ կազմակերպության քարտուղար)¹:

Կուսակցության XVIII համագումարի անվան կենինականի մասնաժամանակագործարանի՝ Կոստանենկոյի և Մինասյանի բրիգադները ԼԿԵՄ Կենտկոմի և ՍՍՀՄ Տեքստիլ արդյունաբերության ժողկոմատի կողմից արժանացան ճակատային բրիգադի կոչման: Կոստանենկոյի բրիգադում 1944 թ. երրորդ եռամսյակի սկզբում աշխատում էին 6, իսկ եռամսյակի վերջում՝ 5 բանվորուհի: Բրիգադի յուրաքանչյուր անգամ սպասարկում էր նորմայից զգալի չափով ավելի իլիկ:

Ղափանի առաջավոր հանքագործների շարքերում արժանի տեղ էր գրավում Սրբուհի Հայրապետյանը: Նա գլխավորում էր կանանց առաջին բրիգադը: 1943 թվականին բրիգադի անդամները պլանից դուրս հայրենիքին տվեցին հարյուրավոր տոննա հանքաքար: Աչքի ընկած բրիգադի կազմում կամգար Ալատյանը, Զմբուխտ Գրիգորյանը և Թամարա Ոսկանյանը ամեն օր կատարում էին մեկ ու կես նորմա²:

1 ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 32, գ. 1181, թ. 58:

2 Ա. Գրիգորյան, Հայաստանի բանվոր դասակարգը 40 տարում, Երևան, 1960, էջ 176—177:

Այսպիսով, կոմերիտական երիտասարդական ճակատային բրիգադները, ծնունդ առնելով և զարգանալով պատերազմի տարիներին, խոշոր դեր կատարեցին ժողովրդական տնտեսության զարգացման գործում: Այդ շարժումը մոբիլիզացրեց երիտասարդներին, արտադրության մեջ աշխատող բոլոր կոմերիտականներին՝ արտադրանքի թողարկումն ավելացնելու, աշխատանքային բարձր կարգապահության, արտադրանքի որակը բարձրացնելու համար:

Կոմերիտական երիտասարդական ճակատային բրիգադների հերոսական աշխատանքը լիցքավորում էր նաև ճակատայիններին: Ռազմաճակատում ձեռք բերված յուրաքանչյուր հաջողություն իր հերթին ոգեշնչում էր թիկունքի հայրենասերներին:

Պատերազմի օրերին երկրով մեկ ծավալվեց նաև 200—300-ակալիկների համաժողովրդական շարժումը, որը խթանեց ժողովրդական տնտեսության սլանների կատարմանն ու դերակատարմանը:

Ինչպես բոլոր հանրապետություններում, այնպես էլ Հայաստանում 200—300-ակալիկների շարժումը լայն տարածում գտավ արդյունաբերության բոլոր ճյուղերում:

Երևանի Կիրովի անվան, ավտոգողերի, կոշիկի № 1, ծխախոտի, կարամեղի գործարանների և Լենինականի, Կիրովականի, Ալավերդու, Ղափանի արտադրական ձեռնարկություններում աշխատող կանանց մեջ լայն ծավալ ընդունեց այդ շարժումը: Առաջ եկավ նույնիսկ 1000-ակալիկների շարժում:

Համաժողովրդական այդ շարժման մեջ իրենց օրինակելի աշխատանքով արժանի տեղ գրավեցին Հայաստանի կանայք և աղջիկները:

Երևանի Ձերժինսկու անվան մեքենաշինական գործարանի երկրորդ ցեխը ամալա սլանները սխտեմատիկաբար կատարում էր 150—200 տոկոսով: Այդ ցեխում աշխատող կոմերիտուհի, 200-ակալին Մարիամ Առաքելյանը երկու օր դուրս չեկավ գործարանից, մինչև չավարտեց առաջադրանքի

կատարումը: Գործարանի № 1—3 ցեխի առաջավոր բանվորուհիներ Մարիա Ռիբալիկինը, Ասյա Մկրտչյանը, Վարսիկ Մարությանը, Սեբաստիա Խաչատրյանը պլանները սխառեմատիկաբար գերակատարում էին:

Մայրաքաղաքի ծխախոտի գործարանում 200-ակալիները դարձան Աղավնի Միքայելյանը և Հռիփսիմե Մարգարյանը: Հետեւելով նրանց, գործարանի բոլոր բանվորուհիները գերակատարում էին իրենց առաջադրանքները: Գործարանի երկուհարկուրակալին բանվորուհիներ Մանյա Ասոյանը, Հասմիկ Հովհաննիսյանը, Թամարա Սարգսյանը ՍՍՀՄ Գերագույն Սովետի նախագահության կողմից պարգևատրվեցին մեդալներով:

Երևանի պահածոների գործարանում իրենց առաջադրանքները սխառեմատիկորեն գերակատարում էին Ասողիկ Սիմոնյանը, Արմիկ Առաքելյանը, Վարդուշ Հարությունյանը, Ասլի Կարապետյանը, Մայրանուշ Պողոսյանը, Նվարդ Քաղեփոսյանը, Մարիամ Ամիրխանյանը, Արուսյակ Սարուխանյանը, Բավական Ղարիբյանը, Հայկուշ Բարսեղյանը և ուրիշներ:

Պլանները 200—300 տոկոսով կատարելը դարձավ առաջավոր բանվորուհիների նշանաբանը:

Այդ շարժման մասնակիցների շարքերը գնալով խտանում էր: Թեթե արդյունաբերության ձեռնարկություններում աշխատող բանվորուհիներ Զարիկ Կարապետյանը, Գոհար Հակոբյանը, հասնելով արտադրական լավագույն ցուցանիշների, դարձան 300-ակալիներ: 300-ակալիների շարժումը լայն արձագանք գտավ նաև հանրապետության այլ գործարաններում:

Պլանները սխառեմատիկաբար գերակատարելու համար Երևանի պահածոների գործարանի լավագույն բանվորուհիներից 15-ը պարգևատրվեցին «Աշխատանքային գերազանցության համար» մեդալով: Կոմերիտական կազմակերպությունը երկու անգամ արժանացավ Հայաստանի ԼԿԵՄ Կենտկոմի փոխանցիկ գրոշին և մեկ անգամ՝ ՍՍՀՄ Ժողկոմսովետի և ՀԱՄԿԽ-ի փոխանցիկ գրոշին:

Պահածոների գործարանի 200-ակալիկներին ետ չէին մնում սննդի, մսի և կաթնեղենի արդյունաբերության մյուս կին աշխատողները: Վարդուշ Հայրապետյանը (մականոնի ֆաբրիկա), Ազգուշ Շադիրյանը (ծխախոտի ֆաբրիկա), Վարդուշ Խաչատրյանը (մսի կոմբինատ) իրենց արտադրական նորմաները կատարում էին 200 և ավելի տոկոսով:

Երևանի կոշիկի գործարանի պատրաստման ցեխի ստախանովական բանվորուհի Նինա Ստրուշկովան աշխատանքային մեկ օրվա ընթացքում կատարում էր ավելի քան երկու արտադրական նորմա: Տիրապետելով ցեխի տեխնոլոգիական բոլոր պրոցեսներին, նա չէր ղլանում օգնության հասնել ետ մնացողներին:

Լենինականի մեխանիկական գործարանում բազմահարյուրակալիկներ էին Վարդուշի Մալխասյանը, տեքստիլ կոմբինատի մեխանիկական ցեխի բանվորուհիներ Հրանուշ Մուսայելյանը և Կատյա Ղազարյանը, որոնք պլանները կատարում էին 250—400 տոկոսով:

Կիրովականի մուշտակի գործարանում արտադրական պլանները 200 տոկոսով կատարողների թիվը հասնում էր 78-ի: 200-ակալիկներ Հոռոմսիմ Տոնոյանը, Սանդուխտ Սաֆարյանը, Վարդուշ Գալստյանը, Արմիկ Մխիթարյանը, Շուշիկ Ավետիսյանը, Լուկաշ Պարասկեան աշխատում էին բարձր գիտակցությամբ:

Ղափանի տեքստիլ-տրիկոտաժի արտելում բացառապես աշխատում էին կանայք: Ստախանովական բանվորուհիներ Սիրանուշ Սարգսյանը, Մարգարիտ Ասրյանը իրենց օրվա առաջադրանքները կատարում էին 200—300 տոկոսով:

Սոցիալիստական մրցության լաչն ծավալման պայմաններում արդյունաբերական ձեռնարկություններն աշխատում էին ավելի ութմիկ: Դրա շնորհիվ արտադրանքի թողարկումն անընդհատ աճում էր: Սոցիալիստական մրցության ընթացքում դրսևորվեցին աշխատավորական լաչն մասսաների ստեղծագործական ուժերն ու հնարավորությունները: Պատերազմի տարիներին սոցիալիստական մրցությունը նորանոր

ձևեր ընդունեց: Այդ ձևերից մեկն էլ բազմադազգաչինների շարժումն էր:

Բազմադազգաչինների շարժումը ծնունդ առավ Ուրալում և խարկովի դադգաչաշինական գործարանում: Այդ շարժման էությունն այն էր, որ մի բանվոր սպասարկում էր դադգահների կամ ագրեգատների մի ամբողջ խումբ: Դա հնարավորություն էր տալիս խտացնել աշխատանքային օրը, ավելի լավ օգտագործել սարքավորումը և կրճատել բանվորական ուժը: Բազմադազգաչինների շարժումը պայմաններ ստեղծեց նաև արտագրանքը ավելացնելու և ինքնարժեքն իջեցնելու համար:

Սովետական Հայաստանի արդյունաբերական ձեռնարկություններում բազմադազգաչինների շարժման մեջ աչքի ընկան առաջավոր շատ բանվորուհիներ: Հանրապետության տեքստիլ արդյունաբերության կենտրոն Լենինականի տեքստիլ կոմբինատի հարյուրավոր առաջավոր բանվորուհիներ ակտիվորեն մասնակցելով այդ շարժմանը, դարձան նրա զրոշակակիրները:

Տեքստիլ կոմբինատի ենթավարպետ, կոմերիտուհի Ա. Ղազարյանը, որը նախկինում սպասարկում էր 104 դադգահ, արձագանքելով բազմադազգաչինների հայրենասիրական շարժմանը, սկսեց սպասարկել 208 դադգահ: Իսկ բազմադազգաչին Պոլինա Կլավկինայի սպասարկած դադգահների թիվը հասավ 240-ի:

Լենինականի գործվածքային ֆաբրիկայում 24 դադգահ էր ղեկավարում Քնարիկ Մանուկյանը: Պետական առաջադրանքները օրինակելիորեն կատարելու և Կարմիր բանակի մարտիկներին հանդերձավորելու գործում ցույց տված լավագույն ցուցանիշների համար նա պարգևատրվեց Աշխատանքային Կարմիր դրոշի շքանշանով: Սուսաննա Արշակյանը մշակեց մեքենաները ստուգելու իր մեթոդը: Սուսաննան ավելորդ անցում չէր կատարում, նույնիսկ այն ժամանակ, երբ որևէ մեքենայի վրա արգելակույտ էր առաջանում: Նա միշտ պլանը կատարում էր 160—180 տոկոսով, պլանից դուրս տա-

լով 500—600 կիլոգրամ կաթ, որից կարելի էր պատրաստել մի քանի հարյուր գուլգ սպիտակեղեն, ոտքի փաթաթան, մարլա, սրբիչ: Սուսաննա Արշակյանի հաջողությունների բարձր գնահատականը հանդիսացավ «Աշխատանքային արիության համար» մեդալը:

Լենինականի տրիկոտաժի ֆաբրիկայի անվանի բանվորուհի, Աշխատանքային Կարմիր դրոշի շքանշանով և Աշխատանքային արիության համար մեդալով պարգևատրված Արմիկ Զարյանը միաժամանակ ղեկավարում էր գուլպա գործող 5 մեքենա:

Գործվածքային ֆաբրիկայում աշխատանքային հերոսության լավագույն օրինակ էին տալիս բանվորուհիներ Սոնյա Շախուլյանը, Շուշիկ Մկրտչյանը, Վարգուշ Մալխասյանը, Խոսրիկ Բաղդասարյանը, որոնք պլանով նախատեսված 88-ի փոխարեն կատարում էին 110 գործողություն: Բարձր գնահատելով Հայաստանի տեքստիլագործների անձնվեր աշխատանքը, ՍՍՀՄ Գերագույն Սովետի նախագահությունը 1944 թ. 38 բանվորների պարգևատրեց շքանշաններով ու մեդալներով (մեկ բանվորուհի պարգևատրվեց Աշխատանքային Կարմիր դրոշի, 5-ը՝ Պատվո Նշան շքանշանով, 4-ը՝ Աշխատանքային արիության համար, 9-ը՝ Աշխատանքային գերազանցության համար մեդալներով)¹:

Պետական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու համար միայն տեքստիլ կոմբինատի բանվոր-բանվորուհիներից շուրջ 1500 մարդ պարգևատրվեցին Աշխատանքային արիության, Կուլկասի պաշտպանության և Հաղթանակի համար մեդալներով:

Բաղմադադգահայիներին շարժման շնորհիվ բարձրացավ Հայաստանի բանվոր դասակարգի, մասնավորապես տեքստիլագործների տեխնիկական մակարդակը:

Պատերազմի ժամանակաշրջանում սպառազինությունը, ռազմական հանգերձանքը ու պարենամթերքը ժամանակին

¹ Տե՛ս «Коммунист», 15 փետրվարի 1944 թ.:

ռազմաճակատ հասցնելը, այսինքն տրանսպորտի աշխատանքը՝ առաջնակարգ նշանակություն էր ստանում:

Երկաթուղային տրանսպորտի տղամարդ աշխատողներից շատերը մեկնեցին ռազմաճակատ: Նրանց փոխարինելու եկան կանայք: Դասընթացների միջոցով հարյուրավոր կանայք դարձան մեքենավարներ, մեքենավարի օգնականներ, փականագործներ, խառատներ, կայարանի հերթապահներ, կցողներ, հեռագրիչներ և այլ մասնագետներ, որոնք տղամարդկանց հետ համահավասար աշխատում էին հայրենիքի և ռազմաճակատի համար: 1944 թ. Հայաստանում երկաթուղային կին կադրերի թիվը 1000-ից անցնում էր¹: Մարիամ Աբուլովան փոխարինեց ռազմաճակատ մեկնած մեքենավար ամուսնուն: Լենինականի դեպոյի առաջավոր մեքենավար կոմունիստ Մարիամ Աբուլովան, մտնելով սոցմրցման մեջ, աշխատում էր լուսինաբար, զնացքները վարում ինքնուրույն: Տիրապետելով մեքենավարի բարդ մասնագիտությանը, իր շոգեբարշը պահում էր սարքին վիճակում, երկարացնում շոգեբարշի բոլոր մասերի օգտագործման ժամկետը, միաժամանակ տալով մեծ քանակությամբ վառելիքի խնայողություն:

1941 թ. նոյեմբերի 24-ին անվանի մեքենավարը Լենինականից Սանահին անխափան տարավ առաջին փորձնական զնացքը:

Մրցությամբ ստանձնած առաջադրանքները օրինակելիորեն կատարելու համար ՍՍՀՄ Հաղորդակցության ճանապարհների ժողովրդական կոմիսարիատը նրան պարգևատրեց «Պատվավոր երկաթուղային» կրծքանշանով, իսկ ռազմական հատուկ փոխադրումները կատարելու համար ՍՍՀՄ Գերագույն Սովետի Նախագահության հրամանագրով 1942 թ. պարգևատրվեց Պատվո նշան շքանշանով:

Լենինականի դեպոյի կին լավագույն մեքենավարներից էր կուսակցության անդամ Ռաիսա Դուտկինան: Նրա ղեկավարած ծանր շոգեբարշը տեղ էր հասնում ժամանակին, ա-

¹ ՀՍՍՀ ԶՆՍԾ ՊԿԱ, ֆ. 163, ց. 15, դ. 252, թ. 60:

ռանց չվացուցակի խախտման: Որպեսզի անձամբ ապահովի իր շոգեքարշի ընթացիկ նորոգումները, նա ավարտեց փակահագործների դասընթացները, ստանալով 4-րդ կարգի փակահագործի կոչում:

Որպես մեքենավարի օգնականներ էին աշխատում Անիշկա խաչատրյանը, կուսակցության անդամներ Տալիսա Արեշկինան, Աննա Աբգիևան, Վերժինե Քնարյանը, Ֆենյա Տոնոյանը, Մարիա Հայրապետյանը, Եպրաքսյա Սիմոնյանը և Արփիկ Եղիկյանը: Նրանք թույլ չէին տալիս խոտանի դեպքեր, խնայողությամբ էին օգտագործում վառելանյութը, ճշտությամբ էին կատարում շահագործման տեխնիկական կանոնները:

Լենինականի շոգեքարշային և վագոնային դեպոնների և գծի 16-րդ ուղեմասի տասից ավելի կոմերիտուհիներ նույնպես տիրապետեցին նոր մասնագիտության՝ դարձան մեքենավարի օգնականներ:

Կոմերիտուհիներ Վարդուշ Կիրակոսյանը, Պայծառ Սարգըսյանը, Լենա Մարտիրոսյանը, Մանիկ Կարապետյանը մինչև պատերազմը չունեին տեխնիկական պատրաստություն: Նրանք դեպույտ սովորեցին փականագործի մասնագիտությունը: Փականագործ Հայաստան Բաղդասարյանը օրվա առաջագրանքը կատարում էր 300—400 տոկոսով:

Հայրենական պատերազմի դժվարին օրերին Լենինականի կայարանում աշխատանքի ընդունված Ազգուշ Զատիկյանը ժամանակին ապահովում էր զնացքների բարձման-բեռնաթափման գործը, ինչպես նաև զնացքների ընդունումն ու ուղեկցումը: Կավագույն կերպով էր աշխատում Ղալթախչի կայարանի հերթապահ Թամարա Պողոսյանը: Ռազմական ժամանակի ձևով աշխատելու հիանալի օրինակ էին ցույց տալիս Համամլու (Սպիտակ) կայարանի սլաքավար Օֆելյա Եղիազարյանը, 16-րդ ուղեմասի գծի պահակներ Աննա խաչատրյանը և Սուսաննա Ղազարյանը:

Հիշատակության արժանի է հեռախոսային ու հեռագրական կապի ցանցում աշխատող հայրենասիրուհիների աշխա-

տանքը: Կին կապալվորները գիշեր-ցերեկ աշխատում էին բրտնաշան կերպով, նշանաբան ունենալով՝ որքան կարելի է ավելի ռիթմիկ կատարել առաջադրանքները, ժամանակին տեղ հասցենել նամակները ռազմաճակատից թիկունք և թիկունքից ռազմաճակատ:

Պատերազմի դժվարին օրերին լավ էր աշխատում Լենինականի հանգուցային կապի 8-րդ ուղեմասի կուկկտիվը: Նա պատվով կատարեց համամիութենական սոցիալիստական մրցությամբ ստանձնած պարտավորությունները, շահեց առաջին տեղը և արժանացավ Անդրկովկասյան երկաթուղու ճանապարհների վարչության փոխանցիկ կարմիր դրոշին:

Իրենց լավ աշխատանքով առանձնապես աչքի ընկան Ռոդա Պետրոսյանը, կապի ուղեմասի հրահանգչուհի Օֆելյա Փիլոյանը, Նվարդ Բաղդասարյանը, որոնք պլանները կատարում էին 200 տոկոսով:

Ինժեներատեխնիկական անձնակազմի կին մասնագետները գործարաններում, հանքերում, տրանսպորտում հանգես բերեցին նախաձեռնություն, արտադրությունը կազմակերպելու հմտություն: Նրանք դարձան արտադրության շնորհալի հրամանատարներ ու կազմակերպիչներ:

Նրևանի ապակու գործարանում որպես գլխավոր ինժեներ աշխատում էր Մարիա Բաբաջանյանը: Գործարանը զրկվել էր սովետական մյուս հանրապետություններից ստացվող հումքից: Մ. Բաբաջանյանի նախաձեռնությամբ գործարանի կուկկտիվը կարճ ժամանակամիջոցում յուրացրեց նոր հումքի ստացումը: Ինժեներ Մինասյանի հետ միասին նա ստեղծեց էլեկտրաէներգիայով ջերմացնող վառարան:

Ապակու և հրակայուն նյութերի էլեկտրահալման յա նոր մեթոդը, որը պահանջում էր ավելի քիչ կապիտալ ներդրումներ, ստեղծեց ռացիոնալ և կուլտուրական արտադրության պայմաններ, թեթևացրեց բանվորների աշխատանքը, հնարավորություն տվեց բարձր ջերմաստիճանում ստանալ բարձրորակ ապակի: Այս նորարարություն համար, որը գործարա-

ներին տվեց մեծ խնայողություն, 1948 թ. Բաբաջանյանը և Մինասյանը արժանացան պետական լաուրեատի կոչման:

Երևանի Ձերժինսկու անվան գործարանը, որի գլխավոր ինժեներն էր Ե. Գրուզդովան, արտադրական հաջողությունների համար 1943 թ. նվաճեց Լենինյան շրջանի փոխանցիկ կարմիր դրոշը, իսկ գործարանի № 2 ցեխի պետ Նոյեմ Աճեմյանը ծանր արդյունաբերության ժողովումտի կողմից մի բանի անգամ արժանացավ դրամական պարգևատրության:

1943 թ. Ս. Մ. Կիրովի անվան գործարանում ընդունված նորարարական առաջարկություններից հինգի հեղինակները կանայք էին: Բանվորուհի Զարիկ Վասյանը դրսից ներմուծվող զեֆիրիտային նյութը տեղականով փոխարինելու նորարարական առաջարկների համար գործարանի կողմից արժանացավ դրամական պարգևի:

Մայրաքաղաքի ձեթ-օճառ գործարանի կուեկտիվը, ղեկավարվելով ինժեներ Վերա Բաթխուջյանի առաջարկությամբ, հասավ զգալի հաջողությունների՝ էլեկտրաէներգիայի տնտեսման գծով: Գործարանի մասնագետների ջանքերով դրսից ստացվող շատ նյութեր փոխարինվեցին տեղականով: Օգտագործելով բուսական յուղը, գործարանը սկսեց արտադրել ախտահանող օճառի նոր տեսակ:

Պահածոների գործարանի մրդի ցեխի կոմերիտական ճակատային բրիգադը (բրիգադավար Մանյա Ժամկոչյան), աշխատանքը վերակառուցելով նորարարական մեթոդով, հասավ հիանալի արդյունքների: Բրիգադի կանայք, որոնք առաջ կատարում էին 26 վազոնետկայի ծավալի աշխատանք, ժամկոչյանի մշակած մեթոդով, և կրճատելով աշխատողների թիվը, օրվա աշխատանքների ծավալը հասցրին 35 վազոնետկայի:

Պատերազմի ծանր օրերին կանանց ակտիվ մասնակցությամբ ստեղծվեցին նոր սարքավորումներ, կատարելագործվեցին շատ մեքենաներ, դրսից բերվող շատ նյութեր փոխարինվեցին տեղականով: Այդ բոլորը նպաստում էր պլանների հաջող կատարմանը:

Այսպիսով, Հայրենական պատերազմի սկզբից մինչև նրա հաղթական ավարտը, Սովետական Հայաստանի արգյունաբերության մեջ աշխատող կանայք, որպես բոցաշունչ հայրենասերներ, իրենց անդուլ աշխատանքով անգնահատելի ծառայություն մատուցեցին և պատվով կատարեցին հայրենիքի հանդեպ իրենց սրբազան պարտքը:

ԿՈԼՏԵՆՍՍՈՒՀԻՆՆԵՐԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Պատերազմը մեծ փորձությունների առաջ կանգնեցրեց նաև կոլտնտեսային գյուղացիությանը: Ինչպես բանվոր դասակարգը, այնպես էլ աշխատավոր գյուղացիությունը մեր հայրենիքի համար ծանր օրերին ցուցաբերեցին վառ հայրենասիրություն և, հաղթահարելով պատերազմի ժամանակաշրջանի դժվարությունները, կարմիր բանակի համար դարձան ամուր հենարան:

Պատերազմի տարիներին պետությունը լուրջ խնդիրներ դրեց գյուղատնտեսության աշխատավորների առջև, որոնք անձնվեր աշխատանքով ապահովեցին ռազմաճակատին անհրաժեշտ սննդամթերքներով, իսկ զործարանները՝ հումքով:

Հայրենական պատերազմի ժամանակ Սովետական Հաստատանք թիկունքային շրջան էր: Չնայած դրան, պատերազմը ծանր հետևանքներ թողեց նաև մեր հանրապետության վրա: Կոլտնտեսային գյուղացիությունը խոր կերպով դիտակցեց մեր հայրենիքի վրա կախված վտանգի լրջությունը, թշնամուն հաղթելու զործում թիկունքի կարևոր նշանակությունը: Ուստի, շինաչելով իր ուժերն ու կարողությունները, նա ամեն կերպ ձգտում էր ընդարձակել ցանքատարածությունները, բարձրացնել գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունը և անասնաբուծության մթերատվությունը:

Գյուղատնտեսության նեղ տեղերից էր բանվորական ուժի և տեխնիկայի պակասը:

Կուսակցական, կոմերիտական և հասարակական կազմակերպությունների քաղաքական-մասսայական լուրջ աշխատանքի շնորհիվ հանրային տնտեսության մեջ աշխատանքի ներգրավվեց գյուղի առկա ամբողջ բնակչությունը, որի գերակշռող մասը կազմում էին կանայք, ծերերը և անչափահասները:

Գյուղատնտեսական աշխատանքներում նոր մարդկանց ներգրավելու համար կարևոր դեր խաղաց ՀամԿ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեի և ՍՍՀՄ Ժողկոմսովետի՝ քաղաքային և գյուղական վայրերի աշխատունակ բնակչության մոբիլիզացիայի կարգի մասին որոշումը, որի համաձայն հանրապետության քաղաքներից հաղարավոր մարդիկ մեկնեցին աշխատելու կոտնտեսություններում, սովխոզներում և ՄՏ կայաններում:

1941 թ. հունիսին Ախտայի (այժմ Հրազդան) շրջանում տեղի ունեցավ երիտասարդ կանանց և աղջիկների հավաք: Հավաքի շուրջ 500 մասնակիցներ հանդես եկան հանրապետության երիտասարդությանն ուղղված բաց նամակով: Նրանք գրում էին. «...Մենք, ինչպես միշտ, այնպես էլ այժմ առանց խուճապի մատնվելու, պատրաստ ենք ամեն կերպ օգնել մեր հարազատ ու հերոսական Կարմիր բանակին՝ թշնամուն կործանիչ և ոչնչացնող հարված հասցնելու համար»¹: Նրանք բոլոր կոմերիտոհիներին և մյուս աղջիկներին կոչ էին անում փոխաբինել բանակ մեկնած իրենց եղբայրներին ու մյուս հարազատներին, ավելի մեծ եռանդով մասնակցել գյուղատնտեսական աշխատանքներին, դրանք կատարել սահմանված ժամկետում, սովորել ռազմական գործը: Հավաքից հետո 100 երիտասարդ կին ու աղջիկ ընդգրկվեցին գյուղատնտեսությունն ուսումնասիրող խմբակներում: Նրանց օրինակին հետևեցին հաղարավոր կանայք Սիսիանի, Ղամարլուճի, Սպիտակի, Ստեփանավանի, Վաղարշապատի, Աշտարակի և մյուս շրջաններում:

¹ «Սովետական Հայաստան», 28 հունիսի 1941 թ.:

Ախտալի շրջանի ներքին Ախտա գյուղում 72 կին, փոխարինելով ռազմաճակատ մեկնած իրենց հարազատներին, կադմեցին ութ օղակ: Նրանք գերազանցորեն կատարեցին խոտհոռնձը: 1941 թ. հունիսին Վաղարշապատի շրջանում հազարավոր կանայք դուրս եկան դաշտ գյուղատնտեսական աշխատանքներին մասնակցելու համար: Պատերազմի սկզբում Կիրովականի շրջանում կոլտնտեսային արտադրության մեջ ընդգրկված երիտասարդ կանանց ու աղջիկների թիվը հասավ 5000-ի¹: Պատերազմի առաջին օրերին Ստեփանավանի շրջանի Կուրթան գյուղում դաշտ դուրս եկան ավելի քան 500 կին: Կանանց անձնվեր աշխատանքի շնորհիվ կոլտնտեսությունը ժամանակից շուտ ավարտեց 700 տոննա սիլոսի պատրաստումը: Կուրթանցիներից էտ չմնացին Սպիտակի շրջանի Համամլու գյուղի 600 կանայք և աղջիկներ, որոնք աշխատում էին բերքահավաքը կազմակերպել անկորուստ: Սեանի շրջանի Օրդաբլու (Լճաշեն) գյուղի կոլտնտեսություն 520 կանայք և աղջիկներ ժամանակին կատարեցին բերքահավաքի աշխատանքները: «Ավելի շատ հաց Կարմիր բանակին», «Անխոցելի դարձնենք Կարմիր բանակի թիկունքը», «Եթե հաբէ լինի, հրացանները ձեռքներիս կկանգնենք կարմիր բանակի շարքերում, թշնամուն հաղթելու համար»—այս էր Օրդաբլուի կոլտնտեսուհիների աշխատանքային նշանաբանը:

Ռազմաճակատ ուղարկելով իրենց ամուսիններին, եղբայրներին, որդիներին, Վարդաշենի կոլտնտեսուհիները կրրկնապատկված եռանդով աշխատեցին կոլտնտեսային դաշտերում: Վ. Մելիքյանի բրիգադում աշխատող կանանց թիվը պատերազմի առաջին ամիսներին հասավ 35—40-ի՝ այն ղեկավարում, երբ մինչև պատերազմը բրիգադի կին անդամների թիվը 20—25-ից չէր անցնում: «Ես սիրով կփոխարինեմ բանակ մեկնած եղբորս,—ասում էր կոլտնտեսուհի Շողիկ Հարությունյանը,— և պարտավորվում եմ ժամանակին և բարձրորակ

¹ «Սովետական Հայաստան», 24 սեպտեմբերի 1941 թ.:

կատարել հացահատիկի, ծխախոտի բերքահավաքի աշխատանքները»¹:

Հանրապետության աշխատավորուհիների ներգրավումը կոլտնտեսությունների աշխատանքներին ավելի ուժեղացավ Սովետական Միության կանանց համապատասխան կոչի հրապարակումից հետո: «Բանվորուհիներ, կոլտնտեսուհիներ և ծառայողներ. է՛լ ավելի վստահորեն տիրապետեցե՛ք տղամարդու պրոֆեսիաներին, դադարահների, տրակտորների մոտ, կոլտուրայի և արվեստի տեղամասերում ավելի վճռականորեն փոխարինե՛ք նրանց, ովքեր մեկնել են առաջավոր դիրքերը: ...Հայրենիքի նկատմամբ ձեր ամբողջ սիրով, թշնամու նկատմամբ ամբողջ ատելությամբ ամրապնդեցե՛ք հաղթական թիկունքը» — ասված է հիշյալ կոչում²:

Հանրապետության կոլտնտեսուհիները միահամուռ կերպով միացան այդ կոչին: Իջևանի շրջանի կոլտնտեսային առաջավորների միտինգը կոչ արեց հանրապետության կանանց՝ փոխարինել իրենց ամուսիններին, եղբայրներին ու որդիներին, աշխատել նոր եռանդով, կրկնապատկված ուժով, առանց քուն ու դադարի, հարկ եղած դեպքում հրացան վերցնել և կրճքով պաշտպանել Սովետական հայրենիքը:

Կանանց ուժը գյուղատնտեսական աշխատանքներում ավելի լրիվ օգտագործելու համար կոմունիստական կուսակցությունը և Սովետական կառավարությունը մեծ ուշադրություն նվիրեցին մանկապարտեզների, մանկամսուրների և մանկական հրապարակների ընդլայնմանը: Ձեռնարկած միջոցառումների շնորհիվ Հայաստանի մանկական մսուրներում տեղերի քանակը զգալի չափով աճեց: Եթե 1940 թ. հունվարի 1-ին հանրապետության մանկական մսուրներում կար 16.924 երեխա, ապա 1943 թվականի հունիսին այդ թիվը հասավ 35.092-ի³:

¹ «Կոլխոզ ուղի», № 57, 1941:

² «Правда», 18 հուլիսի 1941 թ.:

³ ՄԼԽ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 32, գ. 45, թ. 31:

Հայրենական պատերազմի ծանր օրերին լուրջ ուշադրություն դարձվեց տրակտորիստների, կոմբայնավարների, օդակավարների, բրիգադավարների, ֆերմաների վարիչների և կոլտնտեսության նախագահների որակյալ կադրեր պատրաստելու վրա: Ինչպես Սովետական Միության, այնպես էլ նրանք անբաժանելի մասը կազմող Հայկական ՍՍՀ-ում կանայք մեծ թիվ էին կազմում հիշյալ մասնագետների շարքում:

1941 թ. հունիսին հանրապետությունում կազմակերպվեցին գյուղատնտեսական տարբեր մասնագիտությունների կարճատև դասընթացներ, որոնք տևեցին մինչև 1942 թ. փետրվարը: Այդ դասընթացների շրջանավարտներից կոլտնտեսություն նախագահներ ընտրվեցին 21 մարդ, գյուղսովետի նախագահներ՝ 169, բրիգադավարներ դարձան 455, ֆերմայի վարիչներ՝ 166 մարդ¹:

Դասընթացներ կազմակերպվեցին նաև հետագա տարիներին: Դասընթացներում իրենց որակավորումը բարձրացրին 350 կոլտնտեսային սկզբնական կուսակցական կազմակերպությունների քարտուղարներ, 556 կոլտնտեսությունների նախագահներ, 29.210 մեխանիզատոր, բրիգադավար և ֆերմայի վարիչ: Անհատական ուսուցման կարգով դասընթացներում և ագրոտեխնիկայի խմբակներում որակավորվեց քսան հազարից ավելի մարդ²: Դասընթացներում սովորողների ղդալի մասը կազմում էին կանայք:

1941—1944 թթ. հանրապետության կոլտնտեսություններում ղեկավար աշխատանքի առաջ քաշվեցին 700 կոլտնտեսուհիներ:

Պատերազմի ամբողջ ընթացքում կազմակերպված դասընթացներում մասսայական որակավորում ձեռք բերեցին 58 հազար մարդ: ՄՏ կայանների մեխանիզատորներ դարձան

¹ ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 31, գ. 52, թ. 17:

² Նույն տեղում, ֆ. 1, ց. 33, գ. 8, թ. 18:

6710 մարդ, իսկ բուհերը գյուղատնտեսությունը տվեցին 1500 մասնագետ¹:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին հանրապետության բոլոր 1035 կոլտնտեսություններում կանայք ակտիվ մասնակցություն ունեցան գյուղատնտեսական աշխատանքներին: Եթե 1940 թվականին 146 հազար աշխատունակ կանանցից հանրային աշխատանքներին մասնակցում էին 133 հազարը, ապա 1942 թվականին 150 հազար աշխատունակ կանանցից մասնակցում էին 147 հազարը²:

1944 թ. հանրապետության կոլտնտեսային աշխատավորների թվում կանայք կազմում էին 68,3 տոկոսը: Նրանք վաստակեցին կոլտնտեսականների բոլոր աշխօրերի 49,7 տոկոսը³:

Եթե 1940 թվականին հանրապետության կոլտնտեսուհիներից 200—300 աշխօր էին վաստակել 5880-ը, 300—400 աշխօր՝ 1040-ը և 400-ից ավելի աշխօր՝ 261 մարդ, ապա 1944 թ. 19 հազար կոլտնտեսուհիներ վաստակեցին 200—300 աշխօր, 4800-ը՝ 300—400 աշխօր և 1000-ը՝ 400-ից ավելի աշխօր⁴: Այս թվերը վկայում են Հայրենական պատերազմի տարիներին կոլտնտեսությունների հանրային աշխատանքներում կանանց մասնաշաղկապ մասնակցության մասին:

Կոլտնտեսականների աշխօրերի մինիմումը բարձրացնելու վերաբերյալ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և ՍՍՀՄ Ժողկոմսովետի 1942 թվականի ապրիլի 12-ի որոշումը նպաստեց կոլտնտեսականների աշխատանքային կարգապահության ամրապնդմանը:

Ելնելով այդ որոշումից, Հայաստանի Կոմունիստական էության կոլտնտեսության Կենտրոնական կոմիտեն և ՀՍՍՀ Ժողկոմսո-

1 «Սովետական Հայաստանի տնտեսական զարգացումը 1920—1960 թթ.», Երևան, 1960, էջ 260:

2 ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 33, գ. 176, թ. 27:

3 «Սովետական Հայաստանի տնտեսական զարգացումը 1920—1960 թթ.», էջ 259:

4 Ա. Ն. Մնացականյան, Հայ Ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմում, Երևան, 1954, էջ 425:

վետը սահմանեցին աշխօրերի մինիմումը՝ բամբակացան շրջանների համար 150 և մյուս շրջանների համար՝ 120 աշխօր:

Հայաստանի Կոմունիստական կուսակցության Կենտկոմը, շրջանային կոմիտեները և կոլտնտեսային սկզբնական կազմակերպությունները մեծ աշխատանք ծավալեցին այդ որոշման կենսագործման համար: Եթե 1940 թվականին յուրաքանչյուր կոլտնտեսականի վաստակած աշխօրի տարեկան միջինը չէր անցնում 88-ից, ապա 1942 թվականին այն հասավ 122-ի: Դեռահասների աշխօրերի քանակը համապատասխանորեն՝ 32-ից բարձրացավ 57-ի:

Կուսակցության և կառավարության որոշմամբ ստեղծված քաղաքական բաժինները մեծ աշխատանք կատարեցին կոլտնտեսային, սովխոզային և մեքենատրակտորային կայանների աշխատավորների աշխատանքային կարգապահությունը ամրապնդելու, գյուղատնտեսական աշխատանքների ժամանակին կատարումը ապահովելու ուղղությամբ: Քաղբաժինները ղեկավարում էին կադրերի որակավորման և տեղաբաշխման հարցերով, կազմակերպում էին կոլտնտեսային աշխատավորության քաղաքական դաստիարակության գործը, ղեկավարում սոցիալիստական մրցությունը: Ընդգրկվելով համաժողովրդական մրցության մեջ, կանայք պայքարում էին գյուղատնտեսական կոլտուրաների բերքատվության և անասնապահության մթերատվության բարձրացման համար:

Հայկական ՍՍՀ կոլտնտեսություններում կազմակերպվեցին բարձր բերքի համար պայքարող ճակատային երիտասարդական-կոմերիտական օղակներ: 1943 թ. աշգյիսի օղակների թիվը հասավ 775-ի, իսկ 1945 թ. 1648-ի¹:

Բարձր բերք ստանալու համար օղակավարուհիներին Աշխատանքային Կարմիր դրոշի շքանշանով պարգևատրվեցին Սրմա Աստույանը (Սպիտակի շրջանի Զկալովի տնվան կոլ-

1 Կ. Միրզախանյան, Հայաստանի կոմերիտիությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին, էջ 110:

տնտեսություն), Մագթաղ Հակոբյանը (Ալավերդու շրջանի Շնողի կոլտնտեսություն), Մարգարիտ Սուքիասյանը (Մարտունու շրջանի «Հոկտեմբեր» կոլտնտեսություն) և Եպրաքսիա Կոդայանը (Ախուրյանի շրջան)¹։ Պատվո նշան շքանշանի արժանացան երեք օղակավարուհի, իսկ Աշխատանքային արիության և Աշխատանքային գերազանցության համար մեդալներին՝ 23 օղակավարուհի։ Բարձր բերքի համար պայքարող օղակներում ընդգրկված կանայք և աղջիկները բարեխիղճ աշխատանքով հասան մեծ հաջողությունների։

Վաղարշապատի շրջանի Լենինի շքանշանակիր «Անաստված» կոլտնտեսության աշխատավորները 1942 թ. Ագրեջանի, Վրաստանի և Հայաստանի կոլտնտեսականներին ուղղած դիմումում գրում էին՝ «Մենք լիովին գիտակցում ենք այն լուրջ վտանգը, որ կախվել է մեր երկրի վրա։ Մենք գիտենք, որ գերմանա-ֆաշիստական զիշատիչ իմպերիալիզմը բերում է մահ ու ավերածություն, նա ուղում է ոչնչացնել այն բարեկամությունը, որով միաձուլված են միասնական հզոր ընտանիք կազմած Անդրկովկասի ժողովուրդները։ Բայց այդ նրան չի հաջողվի... Հակառակ պատերազմական իրադրության հետ կապված դժվարություններին, մենք սեղմ ժամկետում, ընդամենը տաս օրում ավարտեցինք 345 հեկտար հացահատիկային կուլտուրաների բերքահավաքը։ Անցյալ տարվա համեմատությամբ քսան օր առաջ կատարել ենք մեր բոլոր պարտավորությունները հարավատ սովետական պետության հանդեպ։ Հաջողությամբ ավարտել ենք 301 հեկտար բամբակի դաշտերի, 224 հեկտար խաղողի այգիների մշակությունը և պատրաստ ենք բերքահավաքին»²։

Վաղարշապատի շրջանի «Անաստված» կոլտնտեսության անդամների նամակը լայն արձագանք գտավ Հայկական ՍՍՀ կոլտնտեսային աշխատավորների շրջանում։ 1942 թվականին նրանք պլանից դուրս կարմիր բանակի ֆոնդը մոծեցին

¹ «Коммунист», 11 փետրվարի 1944 թ.։

² «Սովետական Հայաստան», 30 օգոստոսի 1942 թ.։

84.000 փութ հացահատիկ: Միայն Ստեփանավանի շրջանի կոլտնտեսականները սովետական բանակի ֆոնդին հատկացրին 1.483 ցենտներ ցորեն և 40.535 ցենտներ կարտոֆիլ, իսկ Ստալինգրադի վերականգնման համար՝ 1.266 հազար ռուբլի:

Համկ(բ)կ Ստալինգրադի քաղկոմի քարտուղար Պիսկինը այդ առթիվ, շնորհակալություն հայտնելով Ստեփանավանի կոլտնտեսային աշխատավորությանը, գրել է. «Ստալինգրադը պաշտպանեց մեր ամբողջ երկիրը: Այժմ ամբողջ երկիրն է օգնում նրա վերականգնմանը: Մեծ գործ են կատարում հատկապես Հայաստանի աշխատավորները: Ստալինգրադցիները շնորհակալություն, մեծ շնորհակալություն են հայտնում Հայկական ՍՍՀ Ստեփանավանի շրջանի աշխատավորներին. նրանց եղբայրական օգնություն համար»¹:

* * *

Հայրենական պատերազմի օրերին Սովետական Հայաստանի կոլտնտեսություններում զգալի չափով փոքրացավ գյուղատնտեսական մեքենաների պարկը: Դա բացասաբար անգրադարձավ գյուղատնտեսության վրա:

Գյուղատնտեսական տեխնիկան ոչ միայն չհամալրվեց, այլև նրա զգալի մասը տրվեց բանակին: Զկային նաև պահեստամասեր, որոնք անհրաժեշտ էին հների կանոնավոր աշխատանքի համար:

Հանրապետության մեքենա-տրակտորային կայանների 1945 թ. կատարած աշխատանքը, փափուկ վարի վերածած, կազմեց 392 հազար հեկտար, որը կազմում էր ՄՏԿ-ների նախատեսված շրջանում կատարած աշխատանքների 71 տոկոսը: Տրակտորային աշխատանքների ծավալը կրճատվեց հատկապես նախացանքային աշխատանքներում: Այսպես, գարնանավարը 90 հազար հեկտարից իջավ 55 հազար հեկ-

¹ «Սովետական Հայաստան», 22 հոկտեմբերի 1943 թ.:

տարի, իսկ 77 հազար հեկտար ցրտահերկի դիմաց փաստորեն կատարվեց 55 հազար հեկտար¹:

Պատերազմի առաջին իսկ օրերին տրակտորների պակասը զգալի դարձավ: Հազարավոր մեխանիզատորներ մեկնեցին գործող բանակ: Հանրապետության կանաչք մեծ խանդավառությամբ նվիրվեցին գյուղատնտեսական տեխնիկան տիրապետելու գործին: Բացված կարճատև դասընթացներում միայն 1943 թ. պատրաստվեցին 7925 մեխանիզատորներ, որոնցից 858-ը կանաչք էին², իսկ 1944 թ. պատրաստվեցին 441 կին տրակտորիստներ և 60 կին կոմբայնավարներ³:

Հոկտեմբերյանի մեքենա-տրակտորային կայանը պատերազմի տարիներին տարբեր մասնագիտություններ սովորեցրեց 300 կոլտնտեսուհիներին⁴: Ալազգազի շրջանում ՄՏ-կայանների գծով կազմակերպվեց երեքամսյա դասընթաց, որտեղ տրակտորի տեխնիկան յուրացնելու համար սովորում էին 22 երիտասարդ աղջիկներ, իսկ 15 մարդ տրակտորիստի որակավորում ստացան Երևանի մեխանիզատորների կարճատև դասընթացներում: Նման դասընթացներ կազմակերպվեցին նաև Մարտունու ՄՏ կայանին կից, որտեղ սովորում էին 29 կին, իսկ Կալինինոյի ՄՏ կայանը պատրաստեց 36 աղջիկ-մեխանիզատորներ:

Դասընթացներն ավարտողների մեծ մասը բարեխղճորեն աշխատում էր գյուղատնտեսության մեջ: Տրակտորիստուհիները ջանում էին խնայել վառելանյութը, պահեստամասերը և վարը կատարել ժամանակին: Ուստիան Հովակիմյանը, որը 1937 թվականից աշխատում էր Աշտարակի ՄՏ կայանում, սիստեմատիկորեն գերակատարում էր առաջադրանքները: 1941 թ. օգոստոս ամսին 13 աշխատանքային օրվա

1 «Սովետական Հայաստանի էկոնոմիկայի զարգացումը 1920—1960 թթ.», էջ 263:

2 Վ. Միլզախանյան, Հայաստանի կոմերիտմիությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին, էջ 107:

3 ՀՍՍՀ ՀՀՍՀ ՊԿԽ, ֆ. 163, ց. 15, գ. 242, թ. 35:

4 ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 31, գ. 103, թ. 13:

պլանը գերակատարեց կրկնակի, տնտեսելով 140 կիլոգրամ վառելանյութ:

Ղուկասյանի շրջանի Ղաղանչի գյուղի տրակտորիստուհիներ Օֆիկ Գրիգորյանը, Պայծառ Ղաղարյանը, Եպրաքսյա Քերորյանը և Եվգինե Գրիգորյանը գերակատարում էին իրենց աշխատանքային պլանները:

Սեդա Հովհաննիսյանը, Ծաղիկ Խաչատրյանը և Ծաղիկ Պողոսյանը (Քանաքեռ), ստանձնելով բանակ մեկնած իրենց ամուսինների տրակտորները, հրավեցին մինչև պատերազմի հաղթական ավարտը բարձր պահել ռազմաճակատ մեկնած տրակտորիստների աշխատանքային ավանդները: 1941 թվականի աշնանը նրանք օրվա առաջադրանքները կատարում էին 130—150 տոկոսով: Նույնպիսի ցուցանիշներ ունեւր Ախտայի ՄՏ կայանի տրակտորիստուհի Ս. Գրիգորյանը:

Հոկտեմբերյանի շրջանի Շահրիարի ՄՏ կայանում աշխատում էին 37 կին տրակտորիստներ, որոնք ամեն կերպ ձգտում էին աշնանացանը և ցրտահերկը կատարել ժամանակին և որակով: Նույն շրջանից Հրանուշ Սուքիասյանը, երբ հայրը մեկնեց ռազմաճակատ, ընդունվեց տրակտորիստների դասընթացը, ավարտելուց հետո սկսեց ինքնուրույն վարել մեքենան, իսկ 1943 թ. արժանացավ «Սոցիալիստական գյուղատնտեսության գերեզանցիկ» կրծքանշանի:

1942 թվականին հանրապետության տրակտորիստներն ու տրակտորիստուհիները, արձագանքելով երկրի առաջավոր տրակտորիստուհիների զիմումին, վերցրին նոր պարտավորություններ:

1942 թ. բերքահավաքը կազմակերպված անցկացնելու համար կոմերիտական կազմակերպությունները կարճ ժամանակամիջոցում հավաքեցին 214 հազար ռուբլու արժողությամբ տրակտորի և գյուղատնտեսական այլ մեքենաների պահեստամասեր: Կազմակերպվեց կին տրակտորիստների 28 տրակտորային բրիգադ, որոնք բերքահավաքը անցկացրին սեղմ ժամկետում¹:

¹ ՀՍՍՀ ՀՆՍՀ ՊԿԱ, ֆ. 575, ց. 1, դ. 118, թ. 28:

Կիրովականի շրջանի ՄՏ կայանի կոլեկտիվը, մտնելով համաժողովրդական սոցմրցման մեջ, ստանձնեց բարձր պարտավորություններ: Տրակտորիստուհի Նատաշա Ավետիսյանը խնդիր դրեց կատարել 300 հեկտար բարձրորակ վար և տնտեսել 600 կիլոգրամ վառելանյութ, վերանորոգման ծախսերը կրճատել 10 տոկոսով, գարնանացանի ընթացքում պատրաստել երկու տրակտորիստ: Իր պարտավորությունը նա կատարեց պատվով: Տրակտորիստուհի Թագուհի Դարբինյանը պարտավորվեց 2,2 հեկտարի փոխարեն մեկ հերթափոխում կատարել 3 հեկտար վար, յուրաքանչյուր հեկտարում տնտեսելով երկու կիլոգրամ վառելանյութ: ՍՍՀՄ Գերագույն Սովետի Նախագահության 1944 թ. փետրվարի 8-ի հրամանագրով Թագուհի Դարբինյանը պարգևատրվեց Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով:

Մտնելով համամիութենական սոցիալիստական մրցման մեջ, իրենց հայրենանվիր գործերով լավագույն արդյունքների հասան Բասարգեղարի և Իջևանի շրջանների ՄՏ կայանների աշխատողները: Իջևանի ՄՏ կայանի 5-րդ տրակտորային բրիգադը, որի ղեկավարն էր Անահիտ Գյուզալյանը, 1942 թ. գարնանացանի պլանը կատարեց 166 տոկոսով, տնտեսելով 1342 կիլոգրամ վառելանյութ, իսկ Բասարգեղարի կոլտնտեսության կանանց 7-րդ բրիգադը 350 հեկտար վարի փոխարեն կատարեց 571 հեկտար, տնտեսելով 3620 կիլոգրամ վառելանյութ¹:

Հոկտեմբերյանի շրջանի Մեծ Շահրիարի ՄՏ կայանի տրակտորիստուհիներ Նազանի Մարտիրոսյանը, Վերգուշ Գրիգորյանը, Հռիփսիմե Աղարյանը և էմմա Հարությունյանը 1942 թ. գարնանը հերկեցին 1014 հեկտար հողամաս, տնտեսելով 1115 կիլոգրամ վառելանյութ: Նրանց աշխատանքային սխրանքների մասին պատմեց «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթը²: Թերթը կարդալուց հետո Ռ. ավիազորամասից սերժանտ Ժորժ Գունկոն և Վիկտոր Բորյուժեն տրակտորիստու-

1 «Սովետական Հայաստան», 6 սեպտեմբերի 1942 թ.:

2 «Комсомольская правда», 29 ապրիլի 1942 թ.:

հիներին ուղարկեցին նամակ, որտեղ ասված է. «Ձեր աշխատանքը մեզ ոգեշնչում է է՛լ ավելի լավ յուրացնել ավիացիոն ձևարպետությունը: Մենք պատրաստ ենք ամեն լուրջ հակահարված տալու թշնամուն: Յանկանում ենք ձեզ ավելի լավ աշխատանք, դրանով իսկ ամուր կլինի ձեր հարվածը թշնամուն»¹:

Հանրապետության մի շարք ՄՏ կայաններ գերազանց կատարեցին գարնանացանի և աշնանացանի աշխատանքները, համամիութենական սոցիալիստական մրցության մեջ դուրս եկան հաղթողներ և արժանացան փոխանցիկ կարմիր դրոշի:

Երկրորդ կարգի մրցանակի արժանացավ Հոկտեմբերյանի ՄՏ կայանը, որի աշխատողների ղգալի մասը կանաչ էին:

1942 թ. արտադրական պլանները գերազատարելու, ինչպես նաև ինքնարժեքի իջեցման ու վառելանյութի տնտեսման համար ՀՍՍՀ Գերագույն Սովետի պատվոգրով պարգևատրված մեքենատրակտորային արհեստանոցների 90 լավագույն աշխատողներից ութը կին էին: Դրանց թվում էին Իջևանի ՄՏԿ-ի տրակտորային բրիգադի բրիգադավար Արաքսյա Իսկանդարյանը, Շամշադինի ՄՏԿ-ից՝ Հրանուշ Հովակիմյանը, Գորիսի ՄՏԿ-ից՝ Հասմիկ Սևիկյանը, Շահրիարի ՄՏԿ-ից՝ Անահիտ Թորոսյանը, Կիրովականի ՄՏԿ-ից՝ Աննա Գրիգորյանը²:

Ամփոփելով կանանց տրակտորային բրիգադների համամիութենական սոցիալիստական մրցության 1943 թ. արդյունքները, ՀամԼԿԵՄ Կենտկոմը որոշեց գյուղատնտեսական աշխատանքներին ակտիվորեն մասնակցելու համար Կենտկոմի փոխանցիկ կարմիր դրոշը հանձնել Իջևանի շրջանի կին տրակտորիստների բրիգադին, որի բրիգադավարն էր Արաքսյա Իսկանդարյանը: ՀամԼԿԵՄ Կենտկոմի պատվոգրով պարգևատրվեցին Բասարգեղարի և Հոկտեմբերյանի ՄՏԿ-ների տրակտորիստուհիները:

1 «Սովետական Հայաստան», 3 հուլիսի 1942 թ.:

2 Նույն տեղում, 5 մայիսի 1943 թ.:

Մինչև Հայրենական պատերազմը հանրապետության կուլտնտեսությունները բնակչությանը չէին բավարարում սեփական հացով: Հացը ներմուծվում էր ՌՍՖՍՀ-ից: Հայրենական պատերազմի տարիներին փոխվեց գյուղատնտեսական կուլտուրաների ցանքատարածությունների կառուցվածքը: Եթե 1940 թ. հացահատիկային կուլտուրաների ամբողջ ցանքատարածությունը կազմում էր 334.483 հեկտար, ապա 1945 թ. այն հասավ 353.859 հեկտարի, այսինքն աճեց մոտ 20 հազար հեկտարով¹:

1940 թ. հանրապետության բնակչության մեկ շնչին ընկնող հացահատիկի արտադրությունը կազմում էր 2,1 ցենտներ, 1943—1944 թվականներին այն հասավ 2,6 ցենտների²:

Հանրապետության կուլտնտեսականներն իրենց անձնվեր աշխատանքով հացահատիկի ներմուծումը հասցրին մինիմումի, ձգտելով հացի մատակարարումը ապահովել սեփական արտադրությամբ:

Նովոսիբիրսկի մարզի Զիստոօլյորնիի շրջանի «Պուտ կրեստյանինա» և Ղազախական ՍՍՀ Ալմա-Աթայի մարզի Կուզալինի շրջանի գյուղատնտեսական արտելների անդամները երկրի բոլոր կուլտնտեսականներին կոչ արեցին մտնել համամիութենական սոցիալիստական մրցության մեջ, պահանջելով 1942 թ. բերքահավաքը կատարել բարձր որակով և անկորուստ: Հայրենիքի համար ստեղծված ծանր դրությունը պահանջում էր ոչ մի հասկ չթողնել դաշտում:

Կոչը լայն արձագանք գտավ ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Հայկական ՍՍՀ գյուղատնտեսության աշխատողների մեջ:

1 Գր. Հաղուրյունյան, Հաշվետու ղեկուցում Հայաստանի Կ(Բ)Պ XIV համագումարում ՀԿ(Բ)Պ Կենտրոնական կոմիտեի աշխատանքի մասին, էջ 41:

2 «Սովետական Հայաստանի տնտեսական զարգացումը 1920—1960 թթ.», էջ 262:

Համամիութենական սոցիալիստական մրցության հրավերը ընդունած Միկոյանի շրջանի Շատին գյուղի կոլտնտեսականները պարտավորվեցին աշնանացան ցորենի յուրաքանչյուր հեկտարից, պլանով նախատեսված 11 ցենտների փոխարեն, ստանալ 15 ցենտներ, իսկ գարնանացան ցորենի յուրաքանչյուր հեկտարից, 9 ցենտների փոխարեն՝ 11 ցենտներ: 1942 թ. հացահատիկային կոլտնտեսների ցանքի պլանը շատինցիները կատարեցին 106 տոկոսով, կտավհատինը 140, կարտոֆիլինը 130, բրնձինը 135, կորեկինը 550 տոկոսով:

Սոցիալիստական մրցություն ծավալվեց տարբեր շրջանների կոլտնտեսությունների միջև:

Աղիզբեկովի շրջանի կոլտնտեսականները մրցման հրավիրեցին Միկոյանի շրջանի կոլտնտեսականներին: Մինչև 1942 թ. հուլիսի 20-ը երկու շրջաններում միմյանց հետ պայմանագիր ստորագրեցին 30 կոլտնտեսություն, 86 բրիգադ, 3130 կոլտնտեսականներ, այդ թվում ավելի քան 1700 կին:

Վաղարշապատի շրջանի կոլտնտեսուհիները դիմեցին շրջանի գյուղատնտեսության կին աշխատավորներին՝ մասնակցել կոլտնտեսային աշխատանքներին, առաջարկելով 1942 թ. վաստակել ոչ պակաս 250—300 աշխօր (յուրաքանչյուրի համար): Փոխարինելով բանակ մեկնած մեր հայրերին, ամուսիններին, եղբայրներին, հարազատներին, զրում էին Վաղարշապատի շրջանի առաջավոր կոլտնտեսուհիների հավաքի մասնակիցները, կաշխատենք այնպես, ինչպես նրանք կովում են գերմանական ֆաշիստների դեմ:

Համամիութենական մրցության մեջ մտան նաև Նոր Բայազետի շրջանի Նորադուղ գյուղի կոլտնտեսության 100 աղջիկներ: Նրանք դաշտից տուն վերադարձան միայն հացահատիկի վերջին հասկը հավաքելուց հետո:

Հացահատիկի արտադրությունն ավելացնելու գործում ղգալի հաջողությունների հասան իջևանի շրջանի կոլտնտեսությունները: Նրանք 1941 թ. ունեին 4638 հեկտար հացա-

1 Մի-ի Հակական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 31, գ. 101, թ. 1:

հատիկային ցանք: Սևբարի «Ահնուղի» կոլտնտեսությունն ուներ 593 հեկտար հացահատիկային ցանք, որը մշակվում էր գլխավորապես կանանց ուժերով: Եթե մինչև պատերազմը դաշտ էին դուրս գալիս 150—160 հնձվող, ապա պատերազմի առաջին տարվա բերքահավաքի ժամանակ հնձվորների թիվը հասավ 270-ի, որից 155-ը կանայք էին: Կուսակցության թեկնածու Շուշան Մովսիսյանի օղակը օրական հնձում էր 1,5—2,0 հեկտար տարածություն: Իսկ օղակավար, կոմունիստ Շուշան Մալիկյանը օրական հնձում էր 1,2 հեկտար:

Հացահատիկի հնձի օրվա առաջագրանքները 150—200 տոկոսով էին կատարում նույնմբերյանի շրջանի կամբալուկի կոլտնտեսության դաշտավարական 4-րդ բրիգադի անդամները: Օրինակելի և նվիրված աշխատանքով աչքի ընկան կոլտնտեսուհիներ Ֆաթմա Հաշտա կզին, Խեյվանոս Ալի կզին, Սաֆորա Օսման կզին և ուրիշներ:

Ռինդ գյուղի (Միկոյանի շրջան) կոլտնտեսության գրեթե բոլոր կանայք մասնակցում էին հացահատիկի բերքահավաքին: Կոլտնտեսուհիներ Աստղիկ Ստեփանյանը, Նունո Ասատրյանը, Նունուֆար Կարլենյանը պլանով նախատեսված 1000 քառակուսի մետրի փոխարեն օրական հնձում էին 1800 քառակուսի մետր¹:

Պատերազմի առաջին օրերին Թալինի շրջանի Զիթհանբով գյուղի Բուդյոննու անվան կոլտնտեսության նորեկ կոլտնտեսուհիներից էր 16-ամյա Մարիամ Մարտիրոսյանը, որը մեծ ցանկությամբ փոխարինեց ռազմաճակատ մեկնած տրակտորիստ եղբորը: Մարիամը գործուղվեց Երևանի գյուղատնտեսական դպրոց: Ավարտելով 4-ամսյա դասընթացը, նա որպես տրակտորիստ սկսեց աշխատել կոլտնտեսային դաշտերում: Շուտով կոլտնտեսության վարչությունը նպատակահարմար գտավ եռանդուն կոմերիտուհուն նշանակել դաշտավարական օղակի օղակավար: Օղակին հատկացված էր 10 հեկտար հողամաս: Հմտորեն կազմակերպելով գործը, Մարտիրոսյանի օղակը նվաճեց ռեկորդային բերք: Օղակի

¹ «Սովետական Հայաստան», 5 օգոստոսի 1942 թ.:

անդամները խնամքով էին մշակում հողամասը, ցանում տեսակավոր սերմ: Օղակը տարեցտարի բարձրացնում էր հացահատիկի բերքատվությունը: Հաղթանակի տարվա աշնանը օղակը ցանեց աշնանացան ցորեն, որի արդյունքը հրաշալի էր. 1946 թվականին պլանով նախատեսված 16 ցենտների փոխարեն յուրաքանչյուր հեկտարից ստացվեց 39,5 ցենտներ ցորեն¹:

Սիսյանի շրջանի Շաքիի կոլտնտեսությունից 6-րդ բրիգադի բրիգադավար Լուսիկ Մանգասարյանը, փոխարինելով ռազմաճակատ մեկնած ամուսնուն, պայքարում էր բրիգադում կարգապահությունը բարձրացնելու համար, ճշտությամբ էր կիրառում ագրոկանոնները, կազմակերպում էր սոցմրցությունը և, որ գլխավորն է, անձնական աշխատանքով օրինակ էր ծառայում բոլորին: Հետևելով Մանգասարյանի մեթոդին, Լուսիկ Սարգսյանը, որը խոստացել էր իր բրիգադին ամրացված 117 հեկտար հացահատիկային կուլտուրաների մշակումը և բերքահավաքը կատարել ժամանակին և անկորուստ, կարողացավ բարձր որակով ավարտել նաև 100 հեկտար ցելը և կատարել խոտհնձի պլանը:

Պատերազմի տարիներին կոլտնտեսությունը ղեկավարելու անսպառ եռանդ, մեծ հմտություն ցուցաբերեց Ազինի շրջանի Քյալալի (Նորաբեր) գյուղի կոլտնտեսության նախագահ, կուսակցության անդամ Փառանձեմ Աբգարյանը: Նա կոլտնտեսության աշխատանքները ղեկավարում էր հմտորեն: Կոլտնտեսությունը 1943 թվականին ստացավ հարուստ բերք՝ հեկտարից 20 ցենտներ հացահատիկ: 230 հեկտար հացահատիկի հունձը, նախատեսված 20 օրվա փոխարեն, կոլտնտեսականները կատարեցին 12 օրում: Փառանձեմը կարողացավ հնձի դուրս բերել գյուղի բոլոր կանանց: Կոլտնտեսությունը ժամկետից շուտ կատարեց 1943 թ. պետական մթերումների պլանը:

1 Վ. Մ. Սահակյան, Վ. Ն. Գևորգյան, Հայաստանի սոցիալիստական աշխատանքի հերոսները, Երևան, 1960, էջ 44:

Հայրենական պատերազմի տարիներին հանրապետությունում ավելացան նաև կարտոֆիլի ցանքատարածությունները:

1940 թ. համեմատությամբ 1945 թ. կարտոֆիլի ցանքատարածությունը կրկնապատկվեց, բարձրացավ բերքատվությունը, իսկ համախառն բերքը հասավ մեկ ու կես միլիոն ցենտներին¹:

Կարտոֆիլի բերքատվության բարձրացման գործում մեծ դեր խաղացին գյուղատնտեսության երկուհարյուրակայինները, որոնց շարքերը խտացրին շատ անվանի կոլտնտեսուհիներ:

Ալավերդու շրջանի Ծաթեր գյուղի կոլտնտեսության օղակավարուհի Հայկանուշ Գալստյանը, որը փոխարինել էր ռազմաձևակատ մեկնած ամուսնուն, անձնվիրաբար պայքարում էր կարտոֆիլի առատ բերք արձեցնելու համար: Հայկանուշը մեծ խնամքով մշակում էր իրեն հատկացված չորս հեկտար հողամասը: Դրա շնորհիվ 1944 թ. մեկ հեկտարից, պլանով նախատեսված 90 ցենտների փոխարեն, նա ստացավ 280 ցենտներ կարտոֆիլ: Դա ռեկորդային բերք էր, որի համար Հ. Գասպարյանը արժանացավ կառավարական բարձր պարգևի՝ Լենինի շքանշանի:

Ստեփանավանի շրջանի Կուրթան գյուղի Միկոյանի անվան կոլտնտեսությունում կարտոֆիլի բարձր բերքի վարպետներ դարձան Արուսյակ Դարբինյանը, Աստղիկ Գալոյանը, Հասմիկ Խանամյանը և Հայկանուշ Մազդալյանը:

Արուսյակ Դարբինյանի օղակը 1944 թ. պլանով նախատեսված 95 ցենտների դիմաց յուրաքանչյուր հեկտարից ստացավ 164 ցենտներ կարտոֆիլի բերք:

Նախորդ տարվա արդյունքներով ոգևորված, Դարբինյանի օղակը խոսք տվեց 1945 թ. հեկտարից ստանալ 200 ցենտներ կարտոֆիլ: Պարարտացնելու համար օղակի ան-

1 Հ. Ե. Թումանյան, Հայաստանի սոցիալիստական էկոնոմիկայի զարգացումը, Երևան, 1962, էջ 180:

դամները դաշտ փոխադրեցին 200 տոննա զոմաղը, մի քանի տոննա մոխիր և թռչնաղբ: Արդյունքը լավ էր: Կուրթանի կոլտնտեսության առաջավոր օղակներից ետ շմնացին շրջանի Ուռուտ և մյուս գյուղերի կոլտնտեսությունների մի շարք օղակներ: Վերջիններս, մրցության մեջ մտնելով Կիրովականի կարտոֆիլագործների հետ, խոստացան ավելի շատ կարտոֆիլ տալ հայրենիքին: Այդ տեսակետից ուշագրավ է մրցության մասնակից, Ուռուտ գյուղի կոլտնտեսության օղակավարուհի Շ. Շահբազյանի աշխատանքի փորձը: Պատերազմի հենց առաջին օրվանից փոխարինելով ռազմաճակատ մեկնած ամուսնուն, Շ. Շահբազյանը սկսեց աշխատել որպես օղակավարուհի: 1942 թվականին նրա օղակը յուրաքանչյուր հեկտարից ստացավ 115 ցենտներ կարտոֆիլ, 12 ցենտներ արևածաղիկ, 253 ցենտներ ճականդեղ: Օղակը բարձր որակով ավարտեց 8,75 հեկտար տարածությամբ կոլտնտեսաների մշակությունը, միաժամանակ կատարելով 75 հեկտար քաղհան և քարահավաք:

Ագարակի կոլտնտեսության հմուտ կարտոֆիլագործներից էր Աշխեն Գաբրիելյանը: 1943 թ. նրա օղակը յուրաքանչյուր հեկտարից ստացավ 1708 փութ կարտոֆիլ: Աշխեն Գաբրիելյանին օգնում էին նրա աշխատանքային ընկերուհիները՝ Սիրանուշ Սահակյանը, Գոհար Հարությունյանը, Հրանուշ Սաքանյանը, Լուսիկ Մկրտչյանը, Սուսանբար Սահակյանը, Հռիփսիկ Կոտինյանը և շատ ուրիշներ:

Ագարակի կոլտնտեսությունում աշխատողների մեծ մասը երիտասարդ կանայք էին: Դրանց մեջ աչքի էր ընկնում Աշխեն Մելիքջանյանը, որի ղեկավարած օղակում աշխատում էին 13 կին: Օղակը կարողացավ կարտոֆիլի առաջին և երկրորդ բուկիցը ավարտել աշխատանքային հինգ օրում: Օղակի անդամները հաճախ աշխատում էին նաև գիշերը: Ա. Մելիքջանյանի օղակը կոլտնտեսությունում գրավեց առաջին տեղը, պլանով նախատեսված 75 ցենտների դիմաց հեկտարից ստանալով 190 ցենտներ կարտոֆիլ: Օղակի անդամները, որպես լրացուցիչ վարձատրություն, ստացան 13 տոննա կարտոֆիլ:

Հանրապետությունում մշակվող կարևոր տեխնիկական կոլտուրաներից էր բամբակը: Հայրենական պատերազմի տարիներին կրճատվեց բամբակի ցանքսերի տարածությունը հօգուտ հացահատիկի: Բամբակի ցանքատարածությունը 1940 թ. մոտ 16 հազար հեկտարից իջավ և 1945 թվականին կազմեց 13,5 հազար հեկտար¹:

Հայրենական պատերազմի տարիներին բամբակի նշանակությունը ավելի բարձրացավ: Բամբակն անհրաժեշտ էր արդյունաբերության, ռազմաճակատի կարիքները, առավելապես հոսպիտալների պահանջները բավարարելու համար: Կուսակցության և կառավարության պահանջով բամբակացան շրջանների կուսակցական կազմակերպությունները, կոլտնտեսությունների ղեկավարները և կոլտնտեսականները լարված աշխատանք էին տանում բամբակի առատ բերք աճեցնելու և այն անկորուստ հավաքելու համար:

Առատ բերք ստանալու համար Հոկտեմբերյանի շրջանը մրցության մեջ մտավ Զանգիբասարի շրջանի հետ: Հոկտեմբերյանի շրջանի Հոկտեմբեր, Բամբակաշատ, Մեծ և Փոքր Շահրիար, Զանֆիդա, Իգդալու, Արմավիր, Ղուռու-Արազ և այլ գյուղերի կոլտնտեսությունները, պաշտպանելով համամիութենական սոցիալիստական մրցություն կազմակերպելու մասին Նովոսիբիրսկի մարզի Զիստոօլյորնիի շրջանի «Պուտ կրեստյանինա» գյուղատնտեսական արտելի անդամների և Ղազախական ՍՍՀ-ի Ալմա-Աթայի մարզի Կուդալինի շրջանի կոլտնտեսականների դիմումը, վերցրին կոնկրետ պարտավորություններ: Բամբակի արտադրության պլանը կատարելու, պետությունը բարձրորակ բամբակ հանձնելու գործում նրանք հանրապետությունում գրավեցին առաջին տեղը: Պա-

¹ Գր. Հաբուսյունյան, Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ(բ)Պ XIV համագումարում ՀԿ(բ)Պ Կենտրոնական կոմիտեի աշխատանքի մասին, էջ 42:

տերազմի տարիներին շրջանը հարստացավ բամբակի համար պայքարող նոր կին վարպետներով:

Շրջանի Փոքր Շահրիար գյուղի կոլտնտեսությունը մերցման հրավիրեց Վրացական ՍՍՀ Մախարաձեի շրջանի նախնների գյուղի կոլտնտեսությանը: Սոցմրցման մեջ մտան կոլտնտեսության 6 բրիգադ և 22 օղակ: Փոքր Շահրիարի բամբակագործները հաջողությամբ կատարեցին իրենց առաջ դրված խնդիրները: 1942 թվականին, ժամանակին կատարելով բամբակի մթերման պլանը, նրանք պետությունը հանձնեցին մոտ կես միլիոն փութ բարձրորակ հումք:

Ուղունօբայի (Արգավանդ) կոլտնտեսությունում օղակավարուհի Սոնիկ Գրիգորյանը պայքարում էր բամբակի հարուստ բերքի համար: Անվանի բամբակագործուհին խոստացել էր յուրաքանչյուր հեկտարից ստանալ 50 ցենտներ բամբակ: Տարիներ շարունակ նրա օղակը ստանում էր բարձր բերք:

Մեծ Շահրիարի կոլտնտեսությունում Հայաստան Մակարյանը օրական կատարում էր երեք և ավելի նորմա, հավաքելով 160—170 կիլոգրամ բամբակ:

Բամբակի բարձր բերքի համար պայքարը գտնվում էր Հոկտեմբերյանի շրջանի Սովետական գյուղի կոլտնտեսության ղեկավարության և ամբողջ կոլեկտիվի ուշադրության կենտրոնում: Շրջանի աշխատավորուհիներին ուղղված նրանց կոչի մեջ ասված է. «Սովետական կանանց ղեքը կոլտնտեսային արտադրության բարձրացման գործում հայրենական պատերազմի օրերին ստանում է ավելի խոր և վճռական նշանակություն: Մենք մնալով թիկունքում, լավագույն կերպով պետք է կազմակերպենք կոլտնտեսային արտադրությունը և պայքարենք է՛լ ավելի բարձր բերքատվության համար, հայրենիքին, Կարմիր բանակին տրվող օգնությունը է՛լ ավելի կրկնապատկելու համար»: Վերցնելով կոնկրետ պարտավորություններ, կոչի հեղինակները դիմեցին Հոկտեմբերյանի շրջանի աշխատավոր կանանց՝ հետևելու իրենց օրինակին, «ամբողջ թափով

լծվելու սոցմրցման մեջ՝ հանուն 1942 թ. ռեկորդային բերքատվության, հանուն մեր հայրենիքի վերջնական հաղթանակի»¹։

Շրջանի աշխատավոր կանայք, ուսումնասիրելով դիմումը, նոր պարտավորություններ վերցրին, խոստանալով բամբակի հարուստ բերք ամբարել ոչ միայն 1942 թվականին, այլև հաջորդ տարիներին։

1942 թ. սեպտեմբերին, բամբակի բերքահավաքի առաջին օրը, Փոքր Շահրիար գյուղի կոլտնտեսությունը գործարանին հանձնեց 2,5 տոննա բամբակ։ Կոլտնտեսուհի Աննա Ավչյանը մեկ օրվա ընթացքում հավաքեց 100 կիլոգրամ բամբակ²։ Բամբակաշատ գյուղի կոլտնտեսուհի Ասանես Սիմոնյանը պլանով նախատեսված 45 կիլոգրամի փոխարեն օրական հավաքում էր 220—230 կիլոգրամ բարձրորակ բամբակ։

Հոկտեմբերյանի շրջանի Զաֆարաբադի կոլտնտեսության օղակավարուհի Թամարա Շահբաղյանը աշխատում էր 1934 թվականից ի վեր, բազմիցս արժանանալով համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու իրավունքին։ Թ. Շահբաղյանը, պլանով նախատեսված 13 ցենտների դիմաց, հեկտարից ստացավ 30 ցենտներ բամբակ և 75—80 ցենտներ խաղող։ Մտնելով սոցմրցման մեջ, նա պարտավորություն ստանձնեց հավաքել 250 կիլոգրամ բամբակ, այսինքն՝ օրական կատարել 6 նորմա։

Ղամարլուի (Արտաշատ) շրջանի Վերին Աղբաշ գյուղի կոլտնտեսության օղակավարուհի Նազիկ Ստեփանյանը 1941 թվականին յուրաքանչյուր հեկտարից ստացավ 50 ցենտներ բամբակ, իսկ հաջորդ տարին՝ 60 ցենտներ։ Նույն շրջանի Ներքին Աղբաշ գյուղի կոլտնտեսության բամբակի բարձր բերքի վարպետ Եսթեր Հովհաննիսյանը պատերազմի տարիներին իր օղակի անդամների հետ միասին հանրապետությունում ստացավ բամբակի ռեկորդային բերք։

1 «Բոլշեկիյան տեմպով», № 19, 1942։

2 «Սովետական Հայաստան», 8 սեպտեմբերի 1942 թ.։

«Սիրելի Սիրուշ,—գրել է բամբակագործական բրիգադի բրիգադավար Սիրուշ Դավթյանի ամուսինը ռազմաճակատից,—անշափ ուրախ եմ, որ քո բրիգադը կոլտնտեսություն առաջավոր բրիգադներից է: Թիկունքի ձեր հերոսական աշխատանքը մեզ ռազմաճակատում ավելի է ոգևորում: Մենք ավելի անողոք կլինենք դեպի գերմանական բարբարոսները, որոնք պղծում են մեր հայրենի հողը: ...Մեր բոլորի սրտերը լի են վրեժխնդրությամբ: Դուք թիկունքում բազմապատկեցեք ձեր ուժերը, միշտ գերակատարեցեք ձեր պլանները և տվեք ռազմաճակատին ավելի շատ արտադրանք: Ռազմաճակատի և թիկունքի միասնությունը կկոփի և կարագացնի հաղթանակը»¹:

«Այդ խոսքերը,— գրել է պատասխանում Սիրուշ Դավթյանը,—ինձ շատ պարտավորեցրին, ես ուզում եմ, որ ամուսինս իմ աշխատանքից գոհ մնա, դրա համար էլ իմ բրիգադի ամբողջ աշխատանքը ես վերակառուցել եմ պատերազմի ժամանակվա տեմպերին համապատասխան»: Ս. Դավթյանի բրիգադը պլանով նախատեսված 1400 կիլոգրամի փոխարեն օրական հավաքում էր 1800—2100 կիլոգրամ առաջին տեսակի բամբակ:

Ս. Դավթյանի նման անձնուրաց և աշխատասեր բրիգադավարների թիվը քիչ չէր հանրապետությունում: Հիշատակության արժանի են բրիգադավարներ՝ Աշխատանքային արիություն համար մեղավակիր Սիրանուշ Մկրտչյանը (Հոկտեմբերյանի շրջանի Լենինի անվան կոլտնտեսություն), Սիրան Բալայանը (Գորիսի շրջանի Կիրովի անվան կոլտնտեսություն), Աշխատանքային գերազանցության համար մեղավակիրների Դուխիկ Կարապետյանը (Հոկտեմբերյանի շրջանի «Սոցիալիզմ» կոլտնտեսություն), Նուբար Մուրադյանը (Աշտարակի շրջանի Օրջոնիկիձեի անվան կոլտնտեսություն), ինչպես նաև Սանամ Շիմալյանը (Ալավերդու շրջանի Շամուտ գյուղ), Կոմունիստ Նրջանիկ Մելքոնյանը (Նոր Բայազետի շրջանի Փաշաբյան գյուղ) և ուրիշներ:

¹ «Կոմունիզմի ուղիով», № 28, 1941:

Պատերազմի տարիներին մեծ ուշադրություն դարձվեց նաև ծխախոտի ցանքերի ընդարձակմանը: Եթե ծխախոտի պլանտացիաները 1940 թ. գրավում էին 5.029 հեկտար տարածություն, ապա 1945 թ. այն հասավ 7.803 հեկտարի: Անհրաժեշտ է նշել, որ ծխախոտի ցանքերի տարածության ընդարձակումը զուգակցվեց նրա բերքատվության բարձրացման հետ: Ծխախոտագործությունը տարածվեց նաև նոր շրջաններում: Պատերազմի տարիներին ծխախոտի կուլտուրան մշակվում էր Հայաստանի շուրջ քսան շրջաններում:

Հանրապետության ծխախոտագործության գլխավոր կենտրոններն են Շամշադինի և Իջևանի շրջանները: Ծխախոտագործների ավանգարդում էր Շամշադինի շրջանի Նորաշեն գյուղի կոլտնտեսությունը: Այստեղ մեծ խանդավառությամբ էին աշխատում ծխախոտագործուհիներ Սանամյանը և Փայտյանը: Ռազմաճակատում գտնվող իրենց հարազատներին նրանք գրել են. «Մեր ամուսինների ղեկավարած օդակները այժմ մենք ենք ղեկավարում: Մենք պատվով կկատարենք մեզ վրա դրված պարտավորությունները և կապահովենք սոցիալիստական դաշտերի բարձր բերքատվությունը: Մենք պարտավորվում ենք մեր պոստում աշխատել ազնվորեն և բարեխղճորեն: Թող մեր թշնամիներն իմանան, որ սոցիալիզմի երկրի կանայք ընդունակ են ամեն ինչի, նույնիսկ զենք կրելու: Մենք կանգնած ենք մեր ամուսինների և եղբայրների թիկունքում: Նրանք ռազմաճակատում, մենք սոցիալիստական դաշտերում, անընդհատ պայքարով կապահովենք հաղթանակը»¹: Նրանք կատարեցին իրենց խոստումը և օրինակ ծառայեցին շատ կոլտնտեսուհիների համար:

Բերդ գյուղի «Նոր կյանք» (Շամշադինի շրջան) կոլտնտեսության առաջավորներ Անիշկա և Նազրաֆին Մելքոնյանները, Ներքին: Կարմիրապլյուր գյուղի օդակավարուհի Սաթենիկ Գալոյանը և շատ ուրիշներ, իրենց ամուսիններին բանակ ճանապարհելուց հետո, աշխատանքի լծվեցին նոր եռանդով:

¹ «Շամշադինի կոլխոզնիկ», № 27, 1941:

օրական կատարելով մեկ ու կես նորմա: Նրանք ամեն տարի ապահովում էին ծխախոտի բարձր բերք:

Ծխախոտագործների սոցմրցությունը կազմակերպելու գործում խրախուսելի աշխատանք էին կատարում ինչպես կենտրոնական, այնպես էլ շրջանային թերթերը: «Շամշադինի կոլխոզնիկ» թերթը 1941 թ. «Ինչ ես արել դու թշնամուն հաղթելու համար» վերնագրի տակ, հաճախակի տպագրում էր նյութեր սոցմրցության առաջավորների մասին, լուսաբանում էր առաջավոր ծխախոտագործների փորձը, մասսայականացնում նրանց աշխատանքի մեթոդները:

Ծխախոտի ցանքատարածությունները ընդարձակվեցին նաև Իջևանի շրջանում: Եթե 1942 թ. շրջանը ծխախոտի մշակման համար հատկացրել էր 670 հեկտար տարածություն, ապա 1943 թ. ցանվեց 816 հեկտար և 50 օր ժամկետից շուտ պետությունը հանձնեց 35 հազար փութ ծխախոտ¹:

Պատերազմի օրերին մեծ եռանդով աշխատեցին շրջանի Սեբար և Ուղունթալա գյուղերի ծխախոտագործները: Շարմաղ Հովսեփյանը (Ուղունթալայի կոլտնտեսություն) իր նորման կատարում էր 200—225 տոկոսով, յուրաքանչյուր օր շարելով 32—37 շարան ծխախոտ: Նրանից ետ չէին մնում Մանյակ Ալավերդյանը, Սոնյա Մուրադյանը և ուրիշներ: Շրջանի 423 կոլտնտեսուհիներ 1943 թ. ստացան 34.539 ուրբու լրացուցիչ վարձատրություն:

Հայրենական պատերազմի տարիներին իրենց քրտնաջան աշխատանքով լավագույն արդյունքի հասան Իջևանի շրջանի Սարիգյուղի Շահումյանի անվան կոլտնտեսության ծխախոտագործուհիներ Սիրան Մկրտումյանը, Հովհաննես Մադաթյանը և Լիլիֆար Գալստյանը, որոնք արժանացան Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման:

Նոր Բայազետի Նորագույն գյուղում աչքի էին ընկնում օղակավարուհի Պարզիկ Ասոյանը և Սիրան Ասատրյանը: 1942 թ. Ասոյանը նշանակվեց դաշտավարական № 2 բրիգադի

¹ «Սովետական Հայաստան», 18 հունվարի 1944 թ.:

ծխախոտագործական օղակի օղակավարուհի: Նրա օղակը բարձր որակով մշակեց ծխախոտի պլանտացիաները:

Նոյեմբերյանի շրջանի Վ. Քյորփլու գյուղի Սվերգլովի տնվան կոլտնտեսության անդամ Մուստաֆա Մարզա Մահմուդ կղու ամուսինը հերոսաբար ղոհվեց ռազմաճակատում: Ընտանիքի ու երեխաների խնամքն ու դաստիարակությունը նկատվեց Մարզայի վրա: Նա մեծ ջանքեր գործադրեց ծխախոտի բարձր բերք ստանալու համար և պատերազմի դժվարին պայմաններում ձեռք բերած հաջողությունների համար պարգևատրվեց «Աշխատանքային գերազանցության համար» մեդալով, իսկ ՍՍՀՄ գյուղատնտեսության մինիստրության կողմից՝ «Սոցիալիստական գյուղատնտեսության գերազանցիկ» կրծքանշանով: Հետագայում, 1950 թ. անվանի ծխախոտագործուհին արժանացավ Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման:

Հանրապետության ծխախոտագործության բնագավառում աշխատողների մեծամասնությունը կանայք էին: Նրանք ավանգարդային դերում էին նաև գյուղատնտեսության տվյալ ճյուղի զարգացման պայքարում:

* * *

Շերամապահությունը Հայաստանի գյուղատնտեսական հնագույն ճյուղերից է:

Շերամապահության կերի բազան ընդլայնելու համար 1941—1943 թթ. պատվաստվեց 450 հազար և տնկվեց մեկ միլիոն թթենու ծառ:

Պատերազմի տարիներին Հայաստանը գրենայի մեկ տուփից ստացվող բոժոժի քանակով Սովետական Միությունում գրավեց առաջին տեղը: Հանրապետությունում գրենայի մեկ տուփից ստացվեց 56,5 կիլոգրամ բոժոժ: Հայաստանի կոլտնտեսականները բոժոժի հանձնման 1941 թվականի պե-

1 ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 33, գ. 176, թ. 17:

տական պլանը կատարեցին 91,5, 1942 թ.¹ 101,7, 1943 թ.¹ 100,7, 1944 թ.¹ 101 և 1945 թ.¹ 101,3 տոկոսով¹:

Կոլտնտեսություններում շերամապահությանը զբաղվում էին բացառապես կանայք:

Նոյեմբերյանի շրջանի Բաղանիս գյուղի կոլտնտեսության շերամագործներ Սիրան և Նատո Հարությունյանները 1941 թ. բոժոժի արտադրության պլանը գերակատարեցին, իսկ Շահոյանի շրջանի 18-րդ կուսամագոմարի անվան կոլտնտեսության շերամագործ Սրապիոն Ղաղարյանը 1941 թ. մեկ տուփ գրենայից ստացավ 74 կիլոգրամ բոժոժ:

1942 թ. Ղափանի շրջանի շերամագործները առաջին բերքի ժամանակ պլանից դուրս պետությանը հանձնեցին 200 կիլոգրամ բոժոժ, իսկ երկրորդ բերքի ժամանակ՝ կրկնակի չափով ավելի: Առաջավոր շերամագործ Փառանձեմ Նղյանը մեկ տուփ գրենայից պլանով նախատեսված 31 կիլոգրամի փոխարեն, ստացավ 43 կիլոգրամ բոժոժ: Տեղ գյուղի կոլտնտեսության շերամագործ Ս. Փարսաղանյանը պլանով նախատեսված 31 կիլոգրամի փոխարեն յուրաքանչյուր տուփից ստացավ 58,4 կիլոգրամ բոժոժ:

Բոժոժի բարձր բերք ստացան նաև նույն շրջանի Քարատղա, Նեղբին Հունուտ և Վաչագան գյուղերի կոլտնտեսությունների շերամագործները: Վաչագանի կոլտնտեսուհիները ամեն մի տուփից ստացան 74,2 կիլոգրամ սերմացու բոժոժ: Բոժոժի բարձր բերք ստացան Մեղրու շրջանի Ալգարա գյուղի կոլտնտեսականները: Նրանք 65 տուփ շերամորդի ամեն մի տուփից ստացան 76,6 կիլոգրամ բարձրորակ սերմացու բոժոժ:

Նույն շրջանի «Նոր կյանք» կոլտնտեսությունը, ընդունելով Ալգարա գյուղի մրցահրավերը, իր արդյունքներով համընթաց քայլում էր մրցակցի հետ: Այդ կոլտնտեսության անդամ Արծվիկ Մարտիրոսյանը, ստանալով ռեկորդային

¹ Ա. Ն. Մնացականյան, Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմում (1941—1945), էջ 468:

բերք, արժանացաւ «Աշխատանքային գերազանցութեան համար» մեդալի: Նույն պատվին արժանացաւ նաև «Կարմիր սահմանապահ» (Մեղրու շրջան) կոլտնտեսութեան շերամագործ Սոնա կզին:

Քանաքեռի շերամագործները իրենց լավագույն աշխատանքի շնորհիւ 1942 թվականին ստացան բոժոժի ամենաբարձր բերքը Հայաստանում: 46 տուփ շերամորդի ամեն մի տուփից կոլտնտեսականները, միջին հաշվով, ստացան 75 կիլոգրամ բարձրորակ բոժոժ: 1943 թ. քանաքեռցիները դարձյալ ստացան ռեկորդային բերք: Համամիութենական ռեկորդ սահմանեց շերամագործ Վարդուշ Եղիկյանը: Նա պարգևատրւեց Աշխատանքային արիւթյան համար մեդալով:

Բոժոժի ռեկորդային բերք ստացաւ նաև նույն շրջանի «Աշխատավոր» կոլտնտեսութեան օղակավարուհի Մագթաղ Հակոբյանը: Նրա փորձը ներդրւեց հանրապետութեան շերամապահական կոլտնտեսութեաններում: Ստացած բարձր բերքի համար Հակոբյանը արժանացաւ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանի:

Վարդուշ Եղիկյանի, Մագթաղ Հակոբյանի նման վարպետ շերամագործները շատ էին Սովետական Հայաստանում: Նրանց աճեցրած հումքով հանրապետութեան մետաքսագործուհիները արտադրում էին բարձրորակ մետաքս, հոգում ռազմաճակատի կարիքները: —

* * *

Հայրենական պատերազմի տարիներին քիչ գործ չկատարեցին Սովետական Հայաստանի ճակնդեղագործները:

Հայկական ՍՍՀ-ում շաքարի ճակնդեղի մշակութեամբ հիմնականում զբաղւում էին Ախուրյանի և Սպիտակի շրջանների կոլտնտեսութեանները: Պատերազմի տարիներին ճակնդեղագործների մեջ լայն տարածում գտաւ բազմահարյուրակայիների հայրենասիրական շարժումը:

Սպիտակի շրջանի Պարնի գյուղի կոլտնտեսութեան ճակնդեղագործները բացառապէս կանայք էին: Նրանք իրենց

օրինակելի աշխատանքով շատերի ուշադրութեանն արժանացան: Ճակնդեղագործներից առանձնապես աչքի ընկավ 4-րդ բրիգադի 2-րդ օղակի օղակավարուհի Նադիկ Զախոյանը: Նրա գլխավորած օղակը մշակում էր 2,15 հեկտար ճակնդեղի և մոտ 1,5 հեկտար կարտոֆիլի ցանք: Օղակում ընդգրկված 10 կանաչք իրենց օրվա առաջադրանքները կատարում էին 120—130 տոկոսով: Օղակի անդամ Հոռոմսիմ Սոսյանը պլանով նախատեսված 200 քառակուսի մետրի փոխարեն օրական կատարում էր 250—300 քառակուսի մետր ճակնդեղի ցանքի նոսրացում և քաղհան: Օղակի բոլոր անդամները ձգտում էին գերակատարել աշխօրերի պարտադիր միևնույնը:

Մասնակցելով սոցիալիստական մրցությանը, Դուլբենդի (Ախուրյան) շրջանի Կուլբիշևի անվան կոլտնտեսությունում հինգհարյուրակային դարձավ ճակնդեղագործ Դուխիկ Հարությունյանը: Նրա ղեկավարած բարձր բերքի երիտասարդական ճակատային օղակի հետ մրցում էր Ծաղիկ Պետրոսյանի օղակը: Ծ. Պետրոսյանը ՀամկԿԵՄ Կենտկոմի քարտուղար խոլմովից ստացավ նամակ, որտեղ ասված է, թե զարնանացանը և ցանքի մշակումը կատարելու համար նրա օղակն առաջադրված է ՀամկԿԵՄ Կենտկոմի և ՍՍՀ Միութեան Ժողկոմսովետի մրցանակները ստանալու թեկնածու: Դուխիկ Հարությունյանի օղակը մեկ հեկտարից, սոցմրցման պայմանագրով ստանձնած 500 ցենտների փոխարեն, 1944 թ. ստացավ 567 ցենտներ ճակնդեղ: Նա պարգևատրվեց Աշխատանքային գերազանցության համար մեդալով:

Սոցիալիստական մրցության մեջ մտած նույն կոլտնտեսության կոլտնտեսուհիները պայքարում էին բարձր բերքի համար, նրանցից յուրաքանչյուրը ամեն մի հեկտարի վրա առնցնում էր ճակնդեղի 100 հազար բույս:

Հինգհարյուրակայիններ Ծաղիկ Պետրոսյանը, Ծաղիկ Սարգսյանը և Ռոզա Մինասյանը հասան լավ արդյունքի: Կոլտնտեսությունը 14.825 ցենտներ ճակնդեղ հանձնեց պետությանը: Դա պլանի կատարումն էր կրկնակի չափով:

Հինգհարյուրակային դառնալու մրցությունը պայքարի մեջ էր ներառել նաև Սպիտակի շրջանի կոլտնտեսային աշխատավորությանը:

Ղարաբոյաչի (Խնկոյան) կոլտնտեսությունը պլանով նախատեսված 160 ցենտների փոխարեն յուրաքանչյուր հեկտարից ստանում էր 225 ցենտներ ձականդեղ: Այստեղ առաջավոր օղակներից մեկը ղեկավարում էր կոմերիտական Ազնիվ Մանուկյանը: Օղակը յուրաքանչյուր հեկտարից ստանում էր 280 ցենտներ ձականդեղ¹: Սպիտակի շրջանի ձականդեղագործները, մտնելով սոցմրցման մեջ, 1944 թ. նոյեմբերի վերջին կատարեցին տարեկան պլանը, որը կազմում էր հանրապետության ամբողջ պլանի 33,4 տոկոսը:

* * *

Հայրենական պատերազմի տարիներին դուղատնտեսական մի շարք կոլտուրաների թվում որոշ զարգացում ստացան նաև խաղողագործությունը և պտղաբուծությունը, որոնց համախառն արտադրանքը 1945 թվականին, 1940 թ. համեմատությամբ աճեց 18 տոկոսով:

Պատերազմի պայմաններում խաղողագործությունը, ինչպես նաև պտղաբուծությունը, չէին կարող բուռն զարգացում ապրել: Դրա համար պահանջվում էին մեծ ներդրումներ, զգալի չափով բուժանյութեր ու հանքային պարարտանյութեր, իսկ դրանց քանակը սահմանափակ էր:

Չնայած այս բոլորին, պահպանվեցին խաղողի այգիների բոլոր տարածությունները:

Մինչև պատերազմը խաղողի և պտղատու այգիների մշակման ծանր աշխատանքները կատարում էին գրեթե միայն տղամարդիկ, իսկ հայրենական պատերազմի տարիներին դրանց մեծ մասը կատարում էին կանայք:

Ղամաբլուի (Արտաշատ) շրջանի Դարդալու (Անաստասյան) գյուղի այգեգործ կանայք, քննարկելով վաղարշա-

1 ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 33, գ. 339, թ. 39:

սլառի «Անաստված» կոլտնտեսության՝ հանրապետության բոլոր կոլտնտեսականներին ուղղված նամակ-կոչը, որոշեցին ստանձնել բարձր պարտավորություններ: Այդ առթիվ կազմակերպված միտինգում իր ելույթում օղակավարուհի Սիմիդար Իսաջանյանը ասաց. «Այսուհետև մենք կաշխատենք է՛լ ավելի անձնվիրաբար: Իմ օղակի անդամները ինձ հանձնարարել են այստեղ հաղորդելու, որ նրանք խոստանում են 100 ցենտների փոխարեն յուրաքանչյուր հեկտարից հավաքել 120 ցենտներ խաղող»¹:

Լավագույն խաղողագործի անուն էր վաստակել նույն շրջանի Քաղցրաշեն գյուղի Շահումյանի անվան կոլտնտեսության օղակավարուհի, հետագայում Սոցիալիստական աշխատանքի հերոս Նոյեմդար Նդիալարյանը: Նրա անդուլ աշխատանքի լավագույն ապացույցն է այդ տարիներին վաստակած աշխօրերի քանակը, որը գերազանցում էր պարտադիր մինիմումը:

Մարինոս Բարամյանի կենսագրությունը հարուստ է նաև հեղափոխական անցյալով: Նա Հայաստանում սովետական կարգերի համար մղվող պայքարի մասնակից հայ կանանցից է: Ծառայում էր երկրորդ գնդի ութերորդ պարտիզանական վաշտի շորորոգ դասակում, որը գործում էր Վեդու շրջանում: Խիղախ պարտիզանուհին շարունակ կրակի առաջին գծում էր, իր ընկերներին օգնում էր ռազմամթերքով և պարենամթերքով: Նա ակտիվ կերպով մասնակցել է դաշնակցականների դեմ մղված պայքարին նաև Ղամաբլուի ճակատում:

Հեղափոխական պայքարում կոփված Մարինոս Բարամյանը ակտիվորեն մասնակցել է սոցիալիստական շինարարությանը: Նա առաջիններից մեկը մտավ Գետաշենի կոլտնտեսության մեջ: Օղակավարուհի Մ. Բարամյանը անդուլ աշխատանք է տարել խաղողի բերքատվության բարձրացման և նոր ալգինների ստեղծման համար: Նա աշխատանքային մեծ եռանդ ցուցաբերեց նաև պատերազմի տարիներին: Իսկ պատերազմի

¹ «Սովետական Հայաստան», 1 սեպտեմբերի 1942 թ.:

հաղթական ավարտից հետո, 1948 թ. 10 հեկտար այգիների յուրաքանչյուր հեկտարից 160 ցենտներ խաղող ստանալու համար արժանացավ Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման:

Էջմիածնի շրջանի Միկոյանի անվան կոլտնտեսության առաջավոր բրիգադավարներից էր Հայաստան Ամիրյանը: 1930 թվականից աշխատելով կոլտնտեսությունում, ջանասեր աշխատանքով նա արժանացել էր մեծ պատվի: Ամիրյանի աշխատանքային սխրանքները բազմիցս նշվել են հանրապետության կուսակցական համագումարներում և շրջանային կուսակցական կոնֆերանսներում: Հայաստան Ամիրյանը ծնվել է 1911 թ., Վանի նահանգի Խերխան գյուղում, տնայնագործի ընտանիքում: Կյանքի դառնությունը ճաշակել է մանուկ հասակից: Երբ Թուրքական ենիչերիների հալածանքներից փրկվելու համար 1915 թ. Վանի աշխատավորները բռնեցին գաղթի ճանապարհը, Ամիրյանների ընտանիքը օթևան գտավ Էջմիածնում: Սովետական կարգերի շնորհիվ ոտքի կանգնեց նաև նրանց ընտանիքը: Հայաստանը ավարտեց յոթնամյա դպրոցը, առաջինը մտավ կոլտնտեսության մեջ և ընդունվեց կոմերիտմիության, ապա կոմունիստական կուսակցության շարքերը: Հայրենական պատերազմի հենց առաջին օրերից Հայաստանը նշանակվեց դաշտավարական բրիգադի բրիգադավար: 1941 թ. բրիգադի լավ աշխատանքի շնորհիվ ամեն մի հեկտարից ստացվեց 28 ցենտներ և ընդամենը պետությունը հանձնվեց 945 ցենտներ բամբակ: 1942 թ. նույնքան տարածությունից բրիգադը ստացավ 903 ցենտներ բամբակ: 1943—1944 թթ. բրիգադը մշակեց 40 հեկտար հողամաս, պետությունը հանձնելով համապատասխանաբար՝ 820 և 840 ցենտներ, իսկ 1945 թ. 35 հեկտարից՝ 770 ցենտներ բամբակ: Պատերազմի դժվարին պայմաններում բրիգադը հմտորեն ղեկավարելու, աշխատանքները կազմակերպչական բարձր մակարդակով անցկացնելու համար կոմունիստ բրիգադավար Հայաստան Ամիրյանը 1943 թ. արժանացավ ՀԿ(բ)Կ Կենտկոմի շնորհակալությանը, իսկ 1944 թ. Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրին:

Կոլտնտեսություն կին ղեկավարների մեջ լաջբի ընկան վաղարշապատի շրջանի Վերին Խաթունարխ գյուղի կոլտնտեսության նախագահ Ռեբեկա Ղարիբջանը:

Հայրենական պատերազմի առաջին օրը, երբ Ռեբեկայի ամուսինը, կոլտնտեսության նախագահ Երվանդ Ղաղարյանը մեկնեց ռազմաճակատ, կոլտնտեսականները միաձայն նախագահ ընտրեցին կուսակցական Ռեբեկա Ղարիբջանին: 1942 թ. կոլտնտեսությունը դարձավ միլիոնատեր: Կոլտնտեսականները տանկային շարասյուն կառուցելու ֆոնդը մոծեցին մեկ միլիոն ռուբլի, իսկ կոլտնտեսության նախագահ Ղարիբջանը, արձագանքելով Սարատովի մարզի Պոկրովսկի շրջանի կոլտնտեսական Ֆերապոնտ Գոլովատիի հայրենասիրական նախաձեռնությանը, իր անձնական խնայողություններից նույն ֆոնդին հատկացրեց 50 հազար ռուբլի: ՍՍՀՄ Գերագույն սովետի Նախագահության հրամանագրով Ռեբեկա Ղարիբջանը 1945 թ. պարգևատրվեց Լենինի շքանշանով, իսկ 1946 թ. առաջավոր կոլտնտեսության նախագահը ընտրվեց ՍՍՀՄ Գերագույն սովետի ղեկավարատ:

Այսպիսով, մեր հանրապետության առաջավոր կանաչը: չխնայելով իրենց ուժերը, և հաղթահարելով մեծ դժվարություններ, ապահովեցին խաղողի, պտղի և գյուղատնտեսական մյուս մթերքների անխափան արտադրությունը:

* * *

Չնայած պատերազմի տարիներին առաջացած լուրջ դժվարություններին, այնուամենայնիվ Հայաստանի կոլտնտեսականները պայքարում էին անասունների զխաքանակի ավելացման և անասնաբուծության մթերատվության բարձրացման համար: 1941 թ. հետ համեմատած, խոշոր եղջերավոր անասունների զխաքանակը 1944 թ. աճեց 5,9 տոկոսով: Նույն ժամանակաշրջանում ոչխարների և այծերի զխաքանակը ավելացավ 23,1 տոկոսով, իսկ խոզերինը՝ 9,7 տոկոսով:

1 ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 33, դ. 4, թ. 4:

Անասունների գլխաքանակի աճման հետ մեկտեղ բարձրացավ նաև նրանց մթերատվությունը: Մեկ կովի միջին կաթնատվությունը նախապատերազմյան մակարդակի համեմատությամբ բարձրացավ 11 տոկոսով, ոչխարներինը և այծերինը՝ 7 տոկոսով:

1944 թ. առաջին կիսամյակում անասնաբուծության բնագավառում ձեռք բերած հաջողությունների համար հանրապետությունը նվաճեց Պաշտպանության պետական կոմիտեի փոխանցիկ կարմիր դրոշը: Այդ դրոշով պարգևատրվեց նաև Ստեփանավանի շրջանը:

Կանանց դերը բարձրացավ նաև անասնապահության մեջ:

Ապարանի շրջանի Բլխեր (Շենավան) գյուղի կոլտնտեսության կթվորուհի Վարդուշ Գևորգյանը 45 ոչխարից ստացավ 50 գառ, իսկ Օսանյա Հովհաննիսյանը՝ 45 ոչխարից՝ 53 գառ: Կթվորուհիներ Ս. Գասպարյանը, Կ. Դավթյանը և Վ. Պետրոսյանը շարունակ գերակատարում էին իրենց արտադրական նորմաները:

Պատերազմի ծանր օրերին աշխատանքի վերադարձած 60-ամյա անասնապահ Շողեր Սաքանյանը, դիմելով կոլտնտեսականներին, ասում էր.

«Ես խնամում եմ 15 կով և խոստանում եմ աշխատել ազնվորեն, գիշեր ու ցերեկ, որպեսզի ավելի շատ կաթ տամ հայրենիքին, կպատրաստեմ ընտիր տեսակի կարագ ու սպանիր ռազմաճակատի համար, որ մեր ասլան բալբը լավ սնվեն ու ավելի ուժեղ հարվածով շուտ ոչնչացնեն Հիտլերին ու նրա բանակին»¹:

Ստեփանավանի շրջանի Լեջան գյուղի Կամոյի անվան կոլտնտեսության անասնաբուծական ֆերմայի կթվորուհիներ Արուսյակ Գրիգորյանը և Անիշկա Աղաջանյանը, օրինակելիորեն կազմակերպելով կովերի խնամքը, ձեռք բերեցին ղգալի հաջողություններ:

Սոցմրցման արդյունքները ամփոփելուց հետո հանրապետության առաջավոր յոթ կթվորուհիներ 1943 թ. արժանա-

¹ «Սոցարշավ», 12 մարտի 1942 թ.:

յան Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրին: Պատվոգրեր ստացան Կալինինոյի շրջանի Սարատովկա գյուղի «Կոլեկտիվին տրուդ» կոլտնտեսության կթվորուհիներ Աննա Պետրովան և Տատյանա Յակուշովը:

Աննա Պետրովան իր խնամած 9 կովից ստացավ 9 հորթ, իսկ պլանով նախատեսված 2200 լիտր կաթի փոխարեն յուրաքանչյուր կովից ստացավ 2580 լիտր կաթ: Տատյանա Յակուշովան յուրաքանչյուր ֆուրաժային կովից ստացավ 24 ցենտներ կաթ:

Ազիզբեկովի շրջանի Գնդևազ գյուղի Վորոշիլովի անվան կոլտնտեսության կթվորուհի, կուսակցության անդամ Կոռնելա Ինաֆուրե Զայնալ կղին՝ կաթնատվության բնագավառում Հասած լուրջ հաջողությունների համար պարգևատրվեց Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով: 1941 թ. նա 50 ալժից ստացավ 70 ուլ¹:

1944 թ. ՍՍՀՄ Գերագույն սովետի Նախագահության հրամանագրով հանրապետության անասնաբուծության բնագավառում աշխատող առաջավոր կանայք արժանացան կառավարական պարգևների: Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով պարգևատրվեց Սիսիանի շրջանի Չկալովի անվան կոլտնտեսության կթվորուհի Օլսաննա Թորոսյանը, Պատվոնշան շքանշանով՝ Ստեփանավանի շրջանից կթվորուհի Վարսենիկ Պապյանը, Ապարանի շրջանի «Հարվածային» կոլտնտեսության ֆերմայի վարիչ Վերգինե Սազոյանը և Ղարաբաղլարի շրջանի «Հոկտեմբեր» կոլտնտեսության ֆերմայի վարիչ Ռահիմով Ատլաս Հյուսեին կղին: Աշխատանքային արիության համար մեդալով պարգևատրվեցին յոթ և Աշխատանքային գերազանցության համար մեդալով՝ ութ կթվորուհիներ²:

Ախտաչի շրջանի Արղաքյանդի կոլտնտեսության կթվորուհիները 1945 թ. յուրաքանչյուր կովից ստացան 1380

¹ ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 32, գ. 52, թ. 159:

² «Коммунист», 11 փետրվարի 1944 թ.:

կիրոգրամ կաթ: Կալինինոյի շրջանի Կաթնաղբյուր գյուղի 17-րդ կուսհամագումարի անվան կոլտնտեսության կոլտնտեսականներն ու կոլտնտեսուհիները հպարտանում էին Մարիամ Զանոյանով, որն իր ամբողջ կյանքն ու եռանդը նվիրաբերել է հանրային հոտի աճեցման, նրա մթերատվության բարձրացման գործին:

1941 թ. աշնանը Շահումյանի շրջանի Շահումյանի անվան կոլտնտեսության նախագահ ընտրվեց կոմունիստ Նազանի Գալստյանը: Նա լուրջ ուշադրություն դարձրեց անասնաբուծության զարգացման վրա: Ընդարձակվեցին խոտհարքները, ստեղծվեց անասունների կերի կայուն բազա, բարձրացավ կաթնատվությունը: 1942 թ. կոլտնտեսությունը յուրաքանչյուր կովից ստացավ 1470 կիրոգրամ կաթ, իսկ մեկ ոչխարից՝ 1,2 կիրոգրամ բուրդ:

1945 թ. կոլտնտեսությունը յուրաքանչյուր ֆուրաժային կովից ստացավ 33,5 ցենտներ կաթ 1942 թ. 24,2 ցենտների զիմաց, որը նույնպես բարձր ցուցանիշ է¹:

Պատերազմի տարիներին Աշտարակի շրջանի Ոսկեաղբյուրի կոլտնտեսությունը ղեկավարում էր ճակատայինի կին Աղավնի Դիլանյանը:

Կոլտնտեսության աշխատանքները լավ ղեկավարելու և պետական պարտավորությունները ժամանակին կատարելու համար ՍՍՀՄ Դերագույն սովետի Նախագահության հրամանագրով 1944 թ. կոմունիստ Աղավնի Դիլանյանը պարգևատրվեց Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով:

1942—1943 թթ. Մարգարայի 26 կոմիսարների անվան կոլտնտեսության նախագահի պոստում էր բաղմամբաստակ կոլտնտեսուհի, կուսակցության անդամ Սաթիկ Մաթևոսյանը: Զանգիբասարի շրջանի կոմերիտիության անվան կոլտնտեսությունը ղեկավարում էր Աշխատանքային արիության հա-

¹ ՍՍՀՄ Դերագույն սովետի Նախագահությունը 1960 թ. կոլտնտեսության նախագահ Նազանի Գալստյանին շնորհեց Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում:

մար մեղալակիր Հայկանուշ Մարջանյանը, Սևանի շրջանի «Ալվանգարդ» կոլտնտեսությունը՝ Սիրանուշ Ալավերդյանը, Զանգիբասարի շրջանի Գյոյգամբեթ գյուղի «Ինտերնացիոնալ» կոլտնտեսությունը՝ Մանյա Օհանյանը, Վաղարշապատի շրջանի Լուսազգյուղի կոլտնտեսությունը՝ Գոհար Դարբինյանը և այլն:

Գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման և պետական պարտավորությունների կատարման բնագավառում հանրապետության կին աշխատավորները կատարեցին պատվավոր գործ:

1945 թ. հանրապետությունում հացահատիկալին ցանքերի տարածությունը, 1940 թ. համեմատությամբ, ավելացավ 58 տոկոսով, ծխախոտինը՝ 34 տոկոսով, իսկ շաքարի ճակն-դեղի ցանքը կրկնապատկվեց¹:

Բոլոր կուլտուրաների գծով ցանքատարածությունը հանրապետությունում 1943 թվականին 1940 թ. համեմատությամբ աճեց 26,5 հազար հեկտարով, կամ 6,0 տոկոսով: Այս նվաճումները ձեռք բերվեցին այնպիսի պայմաններում, երբ հանրապետության ՄՏ կայանների տրակտորային պարկի կարողությունը Հայրենական պատերազմի օրերին, 1940 թ. համեմատությամբ, իջել էր 16 տոկոսով, իսկ ավտոմեքենաների քանակը՝ 30 տոկոսով²:

Որոշ նվաճումներ ձեռք բերվեցին նաև տնասնապահության ասպարեղում: Հայաստանի կոլտնտեսականների գործադրած ջանքերը տվեցին դրական արդյունք: 1940 թ. համեմատությամբ 1944 թ. խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը աճեց 37,0 տոկոսով, մանր եղջերավոր անասուններինը՝ 29,8 տոկոսով, խոզերինը՝ 10 տոկոսով³: Կաթի

1 «Սովետական Հայաստանի տնտեսական զարգացումը 1920—1960 թթ.», էջ 262:

2 ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 33, գ. 176, թ. 26:

3 Հ. Ն. Թումանյան, Հայաստանի սոցիալիստական էկոնոմիկայի զարգացումը, էջ 177:

և մսի հանձման պետական պլանի կատարման գծով Սովետական Հայաստանը համամիութենական սոցիալիստական մրցության մեջ շահեց առաջին տեղը և արժանացավ Պաշտպանության պետական կոմիտեի փոխանցիկ կարմիր դրոշին: Պաշտպանության պետական կոմիտեի փոխանցիկ դրոշին արժանացավ նաև Ստեփանավանի անասնապահական շրջանը:

1944 թ. փետրվարի 4-ին ՀամԿ(Բ)Կ Կենտրոնական կոմիտեն քննության առավ Հայկական ՍՍՀ-ի գյուղատնտեսության վիճակը: Ընդունված որոշման մեջ Կենտրոնական կոմիտեն նշեց, որ Հայաստանի կոլտնտեսային աշխատավորները, հաղթահարելով պատերազմի հետևանքով առաջացած լուրջ դժվարությունները, հայրենասիրական անձնուրաց աշխատանքի շնորհիվ կատարել են պետական պարտավորությունները: 1943 թ. հացահատիկի պետական հանձնման պլանը կատարվել էր 104, կարտոֆիլինը՝ 110,9, մսինը՝ 100,9, կաթինը՝ 100,5 տոկոսով: Բացի այդ, կոլտնտեսականները պաշտպանության ֆոնդ մուծեցին 123 հազար փութ հացահատիկ և կարտոֆիլ:

ՍՍՀՄ Գերագույն սովետի Նախագահության 1944 թ. փետրվարի 8-ի հրամանագրով հանրապետության 388 կոլտնտեսականներ պարգևատրվեցին շքանշաններով և մեդալներով: Պարգևատրվածներից 90-ը կանայք էին, այդ թվում՝ 75 հայ, 7 ռուս և 8 ադրբեջանցի: Լենինի շքանշանով պարգևատրվեցին Ալավերդու շրջանի «Դեպի կոմունա» կոլտնտեսության օդակավարուհի Հայկանուշ Գալստյանը և Կալինինոյի շրջանի «Կոլեկտիվի տրուզ» կոլտնտեսության կթվորուհի Քսենյա Եկիմովան: Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով պարգևատրվեցին 6, Պատվո նշան շքանշանով՝ 15, Աշխատանքային արիության համար և Աշխատանքային գերազանցության համար մեդալներով՝ 67 կոլտնտեսուհի:

Հայաստանի կոլտնտեսային աշխատավորությունը պատերազմի տարիներին կատարեց պետական պարտավորությունները, հայրենիքին տալով 9 միլիոն փութ հացահատիկ, 4,6 միլիոն փութ բամբակ, 960 հազար փութ ծխախոտ, 6 մի-

լիոն փութ շաքարի ճակնդեղ, 228 հազար փութ բուրդ, 35 միլիոն ձու: 1943 թ. հանրապետության կոլտնտեսականները հանձնեցին 720 ցենտներ ավելի միս, քան 1942 թվականին, իսկ 1945 թվականին 12 հազար ցենտներ ավելի, քան 1943 թվականին¹:

Այսպիսով, Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը իր ուժերը նվիրաբերեց ֆաշիստական զավթիչներին ոչընչացնելու գործին:

Պատերազմի ծանր ժամանակաշրջանում Հայաստանի կոմունիստական կուսակցությունը համախմբեց հանրապետության կանանց և բոլոր աշխատավորների ուժերը գյուղատնտեսական աշխատանքները կազմակերպված անցկացնելու, պետական պլանները կատարելու համար: Կանայք դարձան կարևոր ուժ գյուղատնտեսության բնագավառում:

Հայաստանի գյուղատնտեսության կին աշխատողները ձրբեք իրենց եռանդն ու ուժերը, աշխատանքային արիությունը չէին դրսևորել այնպիսի ուժով, ինչպես դա արվեց Հայրենական պատերազմի տարիներին: Իրենց վրա վերցնելով գյուղատնտեսական աշխատանքների գլխավոր ծանրությունը, նրանք ցույց տվեցին աշխատանքային բացառիկ եռանդ: Աշխատավոր հայ գեղջիկուհին կրեց բազում գովարություններ ու զրկանքներ, բայց երբեք չընկճվեց: Հայրենիքի սիրով համակված, կանայք թշնամուն հաղթելու գործում ներդրեցին իրենց լուսման:

¹ Լ. Ա. Խաչատրյան, Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը Հայրենական պատերազմի տարիներին: «Բանբեր» Հայաստանի արխիվների, 1961, № 1, էջ 197:

լիոն փութ շաքարի ճականդ, 228 հազար փութ բուրդ, 35 միլիոն ձու: 1943 թ. հանրապետության կոլտնտեսականները հանձնեցին 720 ցենտներ ավելի միս, քան 1942 թվականին, իսկ 1945 թվականին 12 հազար ցենտներ ավելի, քան 1943 թվականին¹:

Այսպիսով, Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը իր ուժերը նվիրաբերեց ֆաշիստական զավթիչներին ոչընչացնելու գործին:

Պատերազմի ծանր ժամանակաշրջանում Հայաստանի կոմունիստական կուսակցությունը համալսմբեց հանրապետության կանանց և բոլոր աշխատավորների ուժերը գյուղատնտեսական աշխատանքները կազմակերպված անցկացնելու, պետական պլանները կատարելու համար: Կանայք դարձան կարևոր ուժ գյուղատնտեսության բնագավառում:

Հայաստանի գյուղատնտեսության կին աշխատողները հրեք իրենց հոսանքն ու ուժերը, աշխատանքային արիությունը չէին զրսևորել այնպիսի ուժով, ինչպես դա արվեց Հայրենական պատերազմի տարիներին: Իրենց վրա վերցնելով գյուղատնտեսական աշխատանքների գլխավոր ծանրությունը, նրանք ցույց տվեցին աշխատանքային բացառիկ հոսանք: Աշխատավոր հայ գեղջկուհին կրեց բազում զոհարություններ ու զրկանքներ, բայց երբեք չընկճվեց: Հայրենիքի սիրով համակված, կանայք թշնամուն հաղթելու գործում ներգրեցին իրենց լուծման:

¹ Լ. Ա. Խաչատրյան, Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը Հայրենական պատերազմի տարիներին: «Բանբեր» Հայաստանի արխիվների, 1961, № 1, էջ 197:

Կուսակցությունը և կառավարությունը, շնայած պատերազմի ահեղ օրերին, մեծ ուշադրություն դարձրին մանկավարժական կադրերի պատրաստման և վերապատրաստման, ինչպես նաև նրանց նյութական դրությունն ու կենցաղային պայմանները բարելավելու հարցերին:

Երևանի Կրուպսկայայի և Մ. Գորկու անվան դպրոցների աշակերտության շրջանում մեծ հարգանք և սեր էին վայելում հայոց լեզվի և գրականության ուսուցիչներ Սիրանուշ Մարտիրոսյանը և Վարսենիկ Եսայանը:

Բաղմավաստակ ուսուցչուհիներ Ս. Մարտիրոսյանի և Վ. Եսայանի ղեկավարությամբ պարբերաբար լույս էին տեսնում դպրոցական գրական թերթերը և ավանախները, իսկ յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում կազմակերպվող համաքաղաքային գրական բաց երեկույթներում աշակերտները հանդես էին գալիս ինքնուրույն ստեղծագործություններով: Նույնպիսի ջանասիրությամբ էին աշխատում նաև ուսուցչուհիներ Արուս Պողոսյանը, Իզաբելա Շամամյանը, Լենինի շքանշանակիր Վահանուշ Մատինյանը, Սիրուշ Պողոսյանը, Լյուսյա Բոյաշյանը, Արուսյակ Լալազարյանը (Երևան), Հայկուշ Դրամբյանը, Պայծառ Մկրտչյանը (Լենինական), Սիրուշ Մատինյանը (Կիրովական), Աշխեն Բարխուդարյանը (Գորիս), Շուշիկ Խաչատրյանը, Էմմա Նազարյանը, Դուխիկ Բուդաղյանը (Ստեփանավան), Մանուշ Խառատյանը (Մեղրի), Ամալյա Ճշմարտյանը (Գյառգյառ), Նվարդ Մելիքսեթյանը (Քանաքեռ), Եվդինե Հարությունյանը (Գյուլագարակ):

Հայրենական պատերազմի տարիներին Հայաստանի մանկավարժները և աշակերտները, հատկապես ամառային արձակուրդների շրջանում, մեծ օգնություն ցույց տվեցին գյուղատնտեսության աշխատողներին: Միայն 1942 թ. ամառվա ընթացքում ուսուցիչները և աշակերտները վաստակեցին մեկ միլիոն երկու հարյուր հազար աշխօր:

Դեռևս 1941 թ. միջնակարգ դպրոցների բարձր դասարաններում, մանկավարժական ուսումնարաններում և բարձրագույն ուսումնական հաստատություններում մտցվեց հա-

տուկ առարկա՝ գյուղատնտեսական մասնագիտությունների գծով, մոտ 25 հազար մասնագետ պատրաստելու համար: Նրանցից 4447 մարդ պետք է դառնային տրակտորիստներ, 1394-ը՝ մեքենավարներ, կոմբայնավարներ և այլ մասնագետներ¹:

1942 թ. ապրիլի 1-ի տվյալներով գյուղատնտեսական աշխատանքների ուսուցման դասընթացներում ընդգրկված էին 16 հազար մարդ², իսկ դաշտային աշխատանքներին մասնակցեցին հանրապետության մոտ 4200 ուսուցիչներ և բարձր դասարանների ավելի քան 71 հազար աշակերտ³: Դաշտային աշխատանքները կազմակերպված էին ընթանում Ղամարլուի, Շահումյանի, Նոյեմբերյանի, Վաղարշապատի, Ստեփանավանի, Արթիկի և այլ շրջաններում: Ուսուցչուհիների ղեկավարությամբ Սպիտակի շրջանի Ղզլորան (Շենավան), Արթիկի շրջանի Հոռոմ, Նոյեմբերյանի շրջանի Կոթիգեղ, Ախտաչի շրջանի Ռնդամալ (Ջրառատ), Զանգիբասարի շրջանի Արբաթ, Նոր Բայազետի շրջանի Աղկալա գյուղերում բերքահավաքի եռուն շրջանում դպրոցականներից և ուսուցիչներից կազմակերպվում էին օղակներ, բրիգադներ, որոնք աշխատում էին բերքահավաքն անկորուստ և ժամանակից շուտ ավարտելու համար: «Թվով մոտ 40 ուսուցչուհիներ, — կարդում ենք «Բայազետի կոլտոզնիկ» շրջանային թերթում, — աշխատում են մեր կոլտնտեսության դաշտերում: Հայրենասեր ուսուցչուհիները ոչ մի ջանք չեն խնայում իրենց օրվա պլանների կատարման համար: Հատկապես աչքի են ընկնում Արաքսյա Շահինյանը (օղակավար), Սաթիկ Խաչիկյանը, Պալինա Լուբանովան, Անիկ Ժամհարյանը և շատ ուրիշներ»: Ուսուցչուհի Օլյա Օրդյանը այդ օրերին գրում էր. «Ամուսինս գնացել է կարմիր բանակ, մենք պետք է օգնենք կոլտնտեսությանը՝ բերքն անկորուստ հավաքելու, որպեսզի մեր կարմիր բանակայինները ոչ մի բանի կարիք չզգան»⁴:

1 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 40/113, ց. 6, գ. 38, թ. 4:

2 Նույն տեղում, ֆ. 122, ց. 3, գ. 41, թ. 35:

3 Նույն տեղում, ֆ. 40/113, ց. 6, գ. 38, թ. 4:

4 «Բայազետի կոլտոզնիկ», № 64, 1941:

Երեւանի և Արուսեանի անվան և № 30 դպրոցների ուսուցչուհիները Հայաստանի բոլոր ուսուցչուհիներին կոչ արեցին բաղձապատկել ուժերը անարդ թշնամու դեմ հաղթանակի օրը մոտեցնելու համար: Նրանք կոնկրետ պարտավորութուններ ստանձնեցին ինչպես ժողովրդական կրթության, այնպես էլ գյուղատնտեսական աշխատանքներին ցույց տրվող օգնութունն ուժեղացնելու համար, խոստանալով ամռանը մեկնել զյուղ և մասնակցել բերքահավաքի աշխատանքներին:

Դիմումը խանդավառութեամբ ընդունվեց հանրապետության մանկավարժների կողմից: Լենինականի ուսուցչուհիները, քննարկելով երեւանցիների դիմումը, հանդես եկան պատասխանով, շրջանի բոլոր ուսուցչուհիներին կոչ անելով ուսումնական տարին ավարտելուց հետո մեկնել գյուղերը և մասնակցել բերքահավաքին:

Նույն խանդավառութունն էր համաօրինակ Հոկտեմբերյանի, Վաղարշապատի, Իջևանի, Շամշադինի, Ստեփանավանի, Ղափանի, Արթիկի, Ապարանի շրջանների մանկավարժներին: Վաղարշապատի շրջանի Դոդա գյուղի ուսուցչուհիները ամառային արձակուրդներին օգնեցին կոտնտեսութեանը՝ գյուղատնտեսական բոլոր աշխատանքներում: 1942 թ. ամռանը Վաղարշապատի կոտնտեսային դաշտերում աշխատում էին 160 ուսուցիչներ, ուսուցչուհիներ և 2700 դպրոցականներ: Նրանք վաստակեցին ավելի քան 77 հազար աշխօր: Ստեփանավանի շրջանի 3500 դպրոցականներ վաստակեցին 13.500 աշխօր, իսկ 150 ուսուցիչներ և ուսուցչուհիներ՝ 8900 աշխօր:

Խրախուսելի աշխատանքի օրինակ էին տալիս Արմավիրի միջնակարգ դպրոցի ուսուցչուհիները և դպրոցականները: Ուսուցչուհի Հեղուշ Ստեփանյանը 1943 թ., մասնակցելով բերքահավաքին, օրական հավաքում էր մոտ 150 կիլոգրամ բամբակ: Ստեփանյանից ետ չէին մնում ուսուցչուհի Անտոնինա Անդրեևան և մյուսները:

Հայրենասեր ուսուցչուհիների աշխատանքը բարձր զնահատվեց կուսակցության և կառավարության կողմից: Հայրենական պատերազմի տարիներին Հայկական ՍՍՀ վաստակա-

վոր ուսուցչի կոչում շնորհվեց 41 ուսուցչուհու՝ երեխաների կոմունիստական դաստիարակության և ուսուցման ասպարեզում կատարած երկարամյա ու անբասիր աշխատանքի համար: Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրի արժանացան 22 դպրոց, որտեղ սովորել ու դաստիարակվել էին մի խումբ Սովետական Միության հայ հերոսներ:

Սովետական Հայաստանի մանկավարժներն աղնվորեն կատարեցին իրենց սրբազան պարտքը հայրենիքի հանդեպ:

* * *

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Հայաստանի առողջապահության բնագավառի աշխատողներն իրենց բոլոր ուժերը և գիտելիքները նվիրեցին ռազմաճակատի և թիկունքի բուժսպասարկմանը:

Կոմունիստական կուսակցությունը և Սովետական կառավարությունը պատերազմի պայմաններում մեծ հոգատարություն ցուցաբերեցին երեխաների առողջությունը պահպանելու, նրանց նյութական ու կենցաղային պայմանները լավացնելու նկատմամբ:

1942 թ. հոկտեմբերին ՍՍՀՄ Ժողկոմսովետը հատուկ որոշում ընդունեց երեխաների բժշկական սպասարկման դործը բարելավելու մասին, իսկ 1944 թ. հուլիսի 8-ին հրապարակվեց հղի կանանց, բազմաղավակ և միայնակ մայրերի նյութական օգնությունն ավելացնելու, բազմաղավակությունը խրախուսելու, մայրության և մանկության պահպանությունն ուժեղացնելու մասին հրամանագիրը: Դրանով մեկ անգամ ևս զրսևորվեց մայրության և մանկության նկատմամբ Կոմունիստական կուսակցության և Սովետական կառավարության ջերմ հոգատարությունը: 1941—1943 թթ. Հայկական ՍՍՀ-ում բազմաղավակ մայրերին տրվել է 78 միլիոն 42 հազար ռուբլի:

Պատերազմի տարիներին քաղաքային և շրջանային մանկաբույժները դարձան երեխաների առողջության լավագույն պաշտպանները: 1942 թ. 40 մանկաբույժ արժանացան հանրապետության առողջապահության ժողկոմատի շնորհակա-

լուծյանը և խրախուսանքին: Դրանց թվում էին մանկաբույժներ Ե. Աֆրիկյանը, Լ. Գրիգորյանը, Ա. Հովսեփյանը (Երևան), Ա. Եփրիկյանը, Գ. Միքայելյանը (Լենինական), Պ. Փափաղյանը, Վ. Բաբայանը (Կիրովական), Վ. Աղաջանյանը (Սևան), Վ. Անդրեասյանը (Արտաշատ) և ուրիշներ:

Պատերազմի տարիներին աճեց մանկական մսուրների, մանկապարտեզների, մանկական հրապարակների թիվը: Դոցենտ Աննա Ֆարմանյանը, Լենինի շքանշանակիր Աշխեն Վարդանյանը, Սաթենիկ Տեր-Պանիկյանը, Տիրուհի Խաչիկյան, Արաքսյա Հարությունյանը, հանրապետության վաստակավոր բժշկուհի Մարգարիտա Կամենցեան, Հռիփսիկ Սարգսյանը, Սիրուշ Առաքելյանը, Հռիփսիկ Սինանյանը, Թագուհի Խուզոյանը և բազմաթիվ ուրիշ բժշկուհիներ բուժսպասարկումը հաջող կազմակերպելու, հիվանդների նկատմամբ մեծ հոգատարություն ցույց տալու համար արժանացան ժողովրդի ջերմ սիրուն և հարգանքին:

Ռազմաճակատը և թիկունքը բժշկական կադրերով ապահովելու գործում մեծ աշխատանք ծավալեց Երևանի բժշկական ինստիտուտը:

Պատերազմի տարիներին ինստիտուտի աշխատանքները ղեկավարում էր Վերգինե Միքայելյանը: Սովետական կառավարությունը բարձր գնահատելով պատերազմի շրջանում կադրերի պատրաստման գործում Վ. Միքայելյանի մատուցած ծառայությունները, նրան պարգևատրեց Պատվո նշան շքանշանով, Կովկասի պաշտպանության և Աշխատանքային արիության համար մեդալներով:

Հայրենական պատերազմի տարիներին մեծ աշխատանք կատարեց Կարմիր խաչի հանրապետական ընկերությունը, որը ռազմաճակատի, բուժ-սանիտարական հիմնարկությունների, հոսպիտալների, արտագրական ձեռնարկությունների և կոլտնտեսությունների համար պատրաստեց բժշկա-սանիտարական կադրեր՝ բույրեր, դրուժինիկներ, սանիտարական ախտահանողներ: Ընկերությունը գործարար օգնություն ցույց տվեց էվակուացված բնակչությանը, կազմակերպեց անա-

պատան հրեխաների խնամքը: Պատերազմի առաջին յոթ ամսվա ընթացքում ընկերությունը պատրաստեց 950 սանիտար, բույրական դասընթացները ավարտեցին 946 մարդ, սանիտարական դրուժինիկներ դարձան 2770 մարդ¹:

Կարմիր խաչի ընկերության բույրական դասընթացների շրջանավարտների 17 տոկոսը մեկնեց գործող բանակ, 20 տոկոսը աշխատանքի անցավ հղբայրական հանրապետությունների հոսպիտալներում, մնացած մասը սպասարկում էր ռազմա-սանիտարական գնացքները և սանիտարական կետերը:

Ընկերությունը շեֆական մեծ աշխատանք ծավալեց հոսպիտալներում: Այսպես, ընկերության 54 կադմակերպություն, վերցնելով 20 հոսպիտալների շեֆությունը, նրանց տրամադրեց մոտ 22 հազար կտոր գիրք, ինքնագործ խմբակների ուժերով կադմակերպվեցին զրական-գեղարվեստական հրեկոներ և այլն: 128 հազար ռուբլու արժողությամբ նվերներ տրվեցին հոսպիտալներում բուժվող վիրավորներին: Ընկերության 94 կադմակերպություն շեֆական կարգով օգնեցին հանրապետության 23 մանկատների, հետևելով նրանց սանիտարական վիճակին: Բացի այդ, նրանց նվիրվեց մոտ 1500 կտոր գիրք և այլն:

Հայաստանի հարյուրավոր բժշկուհիների, բուժքույրերի, սանիտարուհիների անձնվեր աշխատանքի կարևոր օրյեկտներն էին նաև հոսպիտալները:

Հայկական ՍՍՀ առողջապահության ժողկոմատը պատերազմի առաջին իսկ օրերից եռանդուն աշխատանք ծավալեց հոսպիտալների կադմակերպման ուղղությամբ: Հայաստանի կառավարությունը և Կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեն այդ նպատակի համար, ինչպես Երևանում, այնպես էլ մյուս քաղաքներում և շրջանային կենտրոններում առանձնացրին հարմարավետ շենքեր: Հանրապետությունում գործում էր 26 ստացիոնար հոսպիտալ և հինգ էվա-

¹ ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 30, գ. 913, թ. 87:

Կոհոսպիտալ: 1944 թ. հոկտեմբեր ամսվա տվյալներով հոսպիտալներում աշխատող բժշկական ավագ անձնակազմի 69 տոկոսը կանայք էին:

Հոսպիտալների կազմակերպման առաջին շրջանում ղեկավարեց հատկապես վիրաբույժների և բուժքույրերի սուր կարիք: Հոսպիտալներին մեծ օգնություն ցույց տվեցին Երևանի բժշկական ինստիտուտը և բժշկական տեխնիկումները: Բժշկական ինստիտուտի պրոֆեսորա-դոսսախոսական անձնակազմը՝ վիրաբույժները, թերապևտները, ներոպաթոլոգները և մյուսները մեծ աշխատանք կատարեցին բժշկական կադրերի որակավորման գործում: Դասընթացներ կազմակերպվեցին նաև բժշկական միջին անձնակազմի համար: 1942—1943 թթ. առժողովման կողմից կազմակերպված դասընթացներում որակավորվեցին 533 բժիշկ, բժշկուհի և 1546 բուժքույր¹:

Պատերազմի տարիներին Հայաստանի բժշկական միջնակարգ դպրոցները դարձան ռազմաճակատի համար բուժկադրեր պատրաստող հիմնարկներ: Միայն 1943—1945 թթ. նրանք տվեցին 1141 շրջանավարտ²:

Բժիշկների ցուցաբերած հոգատար վերաբերմունքի շնորհիվ մեր հանրապետության հոսպիտալներում բուժվող վիրավոր ռազմիկների ճնշող մասը լիակատար ապաքինվելուց հետո վերադարձավ բանակ:

Վիրավորների առողջությունը պահպանելու գործում մեծ դեր կատարեց արշան փոխներարկման հանրապետական կայանը: Նա իր շուրջն էր համախմբել հազարավոր գոնորներ, որոնց մեծ մասը կանայք էին:

Ծաղկաձորում տեղավորված հոսպիտալի ներքին հիվանդությունների բաժանմունքի աշխատանքները զլիավորում էր բազմավաստակ բժշկուհի Ալմա Քաթանյանը: Բժշկական գիտությունների դոկտոր Ալմա Քաթանյանը հեղինակ է տաս-

¹ ՀՍՍՀ ՀՀՍՀ ՊԿՍ, ֆ. 118, ց. 3, գ. 46, թ. 3:

² Նույն տեղում, գ. 50, թ. 84:

նյակ գիտական աշխատությունների և հոդվածների: Աշխատանքային Կարմիր դրոշի շքանշանակիր, պրոֆեսոր Քաթանյանը այժմ ղեկավարում է Երևանի բժշկիկների վերաորակավորման ինստիտուտի ներքին հիվանդությունների ամբիոնը:

Իրենց լավագույն աշխատանքի համար հիշատակության արժանի են ՀՍՍՀ վաստակավոր բժշկուհի, ակնաբույժ Ռախսա Դովատուրը, № 1571 հոսպիտալի (Կիրովական) երկրորդ բաժանմունքի պետ, վիրաբույժ Սուսաննա Զիշյանը, վիրաբույժ Վիկտորիա Նղյանը, բժշկուհիներ Իզաբելա Նդիգարյանը, Վարդուշ Գրիգորյանը, Յուլյա Առաքելյանը, բուժքույրեր Ա. Կասազանովան, Ելենա Մուրադյանը, Մարի Զաքարյանը և շատ շատերը: Նրանց անխոնջ և հոգատար աշխատանքի առաջին գնահատողներն էին բուժվող վիրավորները և վերջիններիս հարազատները:

Փվարզիայի սերժանտ Նեղոստուպովը Երևանի № 1472 հոսպիտալի ղեկավարությանը հղած նամակում (1943 թ. օգոստոսի 13-ին), ջերմ շնորհակալություն հայտնելով իրեն բուժող բժշկուհիներին ու բուժքույրերին, միաժամանակ ուղարկել է իր 15 տարեկան աղջկա սրտառուչ նամակը, ուր գրված է. «Բարև մեծարգո բժշկուհի Մարիա Զալալովնա, հղում եմ իմ բոցավառ պիոներական ողջույնը և ամուր սեղմում եմ Ձեր ձեռքը: Թույլ տվեք իմ պատանեկան ամբողջ սրտով շնորհակալություն հայտնել Ձեզ՝ Ձեր համառ ու տոկուն աշխատանքի համար, այն բանի համար, որ փրկեցիք իմ հայրիկի կյանքը և թույլ շտվեցիք, որ նա ղրկվի ոտքից: Դուք, իսկապես, մահվան ճիրաններից փրկում եք մարդկանց, որոնք այնքան պետք են, այնքան թանկ են մեր հայրենիքի համար: Ես ենթադրում եմ, որ դուք փրկել եք ոչ միայն իմ հոր, այլ շատերի կյանքը, որոնք նույնպես ղավակներ ունեն: Որպես պիոներուհի, ես Ձեզ խնդրում եմ փրկել մեր հայրենիքը ազնվորեն պաշտպանող վիրավոր մարտիկների ու հրամանատարների կյանքն ու առողջությունը: Ես շատ շնորհակալ եմ նաև բուժքույր Զինա Պրոխորովայից՝ իմ սիրելի հայրիկին

ցույց տված հոգատարության և ուշադրության համար: Ես Ձեզ չեմ ճանաչում, բայց պատկերացնում եմ, թե Դուք մեր հայրենիքի ինչպիսի արի ու տոկուն հայրենասեր կանանցից եք»¹:

Կառավարության առաջադրանքները օրինակելիորեն կատարելու, վիրավոր մարտիկների ու հրամանատարների բուժումը, հակահամաճարակային միջոցառումները, բնակչության մեջ տարվող բուժսպասարկումը հաջողությամբ անցկացնելու և բժշկական կադրերի պատրաստման համար ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1945 թ. հուլիսի 11-ի հրամանագրով 3239 բժիշկ և բուժաշխատող պարգևատրվեցին կառավարական շքանշաններով և մեդալներով: Պարգևատրվածներից շուրջ 500-ը մեր հանրապետության հոսպիտալների աշխատողներ էին:

Հայկական ՍՍՀ հոսպիտալներում աշխատող բժշկական անձնակազմից 400 մարդ արժանացան Կովկասի պաշտպանության համար մեդալի: 1944 թ. Սովետական Միության 14 հոսպիտալների թվում Հայաստանի № 1460 հոսպիտալը պարգևատրվեց ՍՍՀՄ Ժողկոմսովետի պատվոգրով:

Հայաստանի բժշկա-սանիտարական բնագավառի կին կադրերն իրենց անբասիր ու անխոնջ աշխատանքով պատվով կատարեցին հայրենիքի հանդեպ ունեցած պարտքը:

* * *

Կուսակցությունը և կառավարությունը, ինչպես միշտ, պատերազմի ընթացքում ևս առանձին հոգատարություն ցուցաբերեցին գիտությունների բոլոր ճյուղերի և զինականների նկատմամբ:

Պատերազմի սկզբում հանրապետությունում գործում էր 11, իսկ վերջում 14 բարձրագույն ուսումնական հաստատություն:

¹ ՀՊՊԿ արխիվ, ֆ. 242, № 1472 էվակոհոսպիտալի գործը, էջ 65—66:

Իր աշխատանքները վերակառուցեց ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալը՝ Արմֆանը։ Պատերազմի պայմաններում 1943 թ. նոյեմբերի 29-ին ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի և ՍՍՀՄ ժողովրդական Կոմիսարների Սովետի որոշումով հիմնադրվեց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիան։

Հայրենական պատերազմի տարիներին ավելացավ նաև հանրապետության գիտահետազոտական հիմնարկներում աշխատող կանանց թիվը։ Այդ հիմնարկներում աշխատող կանանց ընդհանուր թիվը 1944 թ. հասավ 865-ի, որը կազմում էր բոլոր գիտաշխատողների 51,3 տոկոսը¹։ 1945 թ. գիտությունների ակադեմիայի գիտահետազոտական հիմնարկներում աշխատող 1136 աշխատողներից 417-ը կամ 41,5 տոկոսը կանայք էին²։

Գիտության բոլոր բնագավառներում իրենց լուրջ ուսումնասիրություններով աչքի ընկնող ծառայություններ կատարեցին հանրապետության կին գիտնականները։

Քիմիական գիտությունը Հայաստանում իր բարգավաճումն ապրեց միայն Սովետական իշխանության տարիներին։ Գիտության այդ ճյուղի աշխատողների մեջ կանայք գրավում են պատվավոր տեղ։

Գիտական և մանկավարժական աշխատանքի մեծ ճանապարհ է անցել ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ, քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արաքսյա Բաբայանը։ Նա Հայրենական պատերազմի տարիներին աշխատում էր Երևանի Զոովետ ինստիտուտում, գլխավորելով օրգանական քիմիայի ամբիոնի աշխատանքները։ Սկսած 1935 թվականից Ա. Բաբայանը համատեղում էր Արմֆանի քիմիական ինստիտուտում, որպես ավագ գիտաշխատող։ 1945 թ. Ա. Բաբայանը պաշտպանեց դոկտորական թիսերտացիա։

1 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 163, ց. 15, գ. 260, թ. 6։

2 Նույն տեղում, գ. 243, թ. 3։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վերգինե Թառայանը Հայրենական պատերազմի ամբողջ ընթացքում գիտական բեղմնավոր աշխատանքը ղուգակցում էր կադրերի պատրաստման գործի հետ: 1942—1946 թթ. Թառայանը ղեկավարել է Նրեանի պետական համալսարանի անալիտիկ քիմիայի ամբիոնի աշխատանքները:

Բիոլոգիական գիտությունների դոկտոր Ազնիվ Պետրոսյանը ղեկավարում էր ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հողի միկրոբիոլոգիայի սեկտորը: Սեկտորի աշխատակիցներ՝ բիոլոգիական գիտությունների թեկնածուներ Արփիկ Կիրակոսյանը, Արաքսյա Մեհրաբյանը, Էմմա Նաղարյանը, կրթության գիտական աշխատողներ Լուսյա Նարինյանը, Սոֆիկ Ղալազոլյանը աշխատում էին նոր տեսակի պարարտանյութեր ստանալու պրոբլեմի վրա:

Փառանձեմ Սարուխանյանը (այժմ բիոլոգիական գիտությունների դոկտոր) ղեկավարում էր բիոլոգիայի ինստիտուտի միկրոբիոլոգիայի սեկտորը, որը զբաղվում էր գյուղատնտեսական վնասատուների դեմ պայքարի մեթոդների հարցով:

Բիոլոգիական գիտությունների դոկտոր Ռոմեա Գալաջյանը ուսումնասիրում էր բանջարա-բոստանային կուլտուրաների բակտերիոլոգիական հիվանդությունների պրոֆիլակտիկայի հարցերը:

Արմենուհի Եղիկյանը և Աշխեն Մինասյանը ուսումնասիրում էին հացահատիկի նոր սորտերի ստացման մեթոդները: Եղիկյանը աշխատեցան ցորենի երկու նոր սորտի հեղինակներից է: Դրանցից առաջինը (Եղվարդ—4) ցանվում է հանրապետության նախալեռնային շրջաններում (Կոտայք, Աշտարակ, Թալին, Եղեգնաձոր, Աղիզբեկով), իսկ երկրորդը (Լենինական—3)՝ Զանգեզուրում (Սիսիան, Գորիս):

Խոշոր աշխատանք է կատարել գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Դարյա Բաբայանը: Նա առաջիններից մեկն է, որ բազմակողմանի ուսումնասիրել է Հայաստանում աճող բույսերի, այդ թվում անտառային, բան-

ջարա-բոստանային կուլտուրաների, դեկորատիվ ծառերի, թփերի զանազան հիվանդությունները: Նա մեծ ծառայություններ ունի խաղողի հիվանդությունները տեսակավորելու և դրանք բուժելու մեթոդների մշակման գործում:

Բազմալսատակ գիտնական Սրբուհի Լիսիցյանը, որն այդ տարիներին Ռ. Մելիքյանի անվան երաժշտական կաբինետում ավագ գիտական աշխատող էր, ուսումնասիրում էր հայ ժողովրդի հինավուրց պարերը և թատերական ներկայացումները: Այդ հետազոտության առաջին հատորը հրատարակվեց պատերազմից հետո, որի համար հեղինակին շնորհվել է պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

Պատմական գիտությունների թեկնածու Վալենտինա Աբրահամյանը ութ տարեկան էր, երբ թուրք բարբարոսների հալածանքներից մի կերպ ազատվելով, բնակություն հաստատեց Երևանում: Նա ավարտեց միջնակարգ դպրոցը, ապա համալսարանը, իսկ 1931 թ. գործուղվեց Լենինգրադ, ասպիրանտուրայում սովորելու: Վալենտինա Աբրահամյանը ուսումնասիրում է հայ ժողովրդի միջնադարյան պատմության հարցերը:

Բանասիրական գիտությունների թեկնածու Ռուզա Նսումյանը 1941 թ. նշանակվեց գրականության թանգարանի ղեկավար: Պատերազմի տարիներին Նսումյանը գիտական, ազդեցիկ մասնակցություն ցուցաբերեց ծավալեց, ակտիվ կերպով մասնակցել է «Հայ-ռուս գրական կապերը», «Հայրենիքը հայ գրականության մեջ», «Հայրենի ղինվորը ռազմաճակատում», «Սովետահայ պոեզիան» և այլ թեմաներով ցուցահանդեսների կազմակերպմանը: Պատերազմի տարիներին նա հրատարակել է «Ծերենցը որպես հայրենասեր», «Հայ-ռուս գրական կապերի շուրջը» ուսումնասիրությունները, հայրենասիրական թեմաներով բազմաթիվ դասախոսություններ է կարդացել գործարաններում և կոլտնտեսություններում, աշխատավորական լայն շրջաններում:

Հայրենական պատերազմի տարիներին մեծ աշխատանք կատարեցին կին դասախոսները: Հանրապետության ուսումնական հաստատություններում ճանաչված և հարգված դասա-

խոսներ էին բանասիրական գիտությունների թեկնածուներ Սալոմե Արեշյանը, էլիզա Պետրոսյանը, Արշալույս Բաբայանը, կենսաբանական գիտությունների թեկնածուներ Ասյա Պետրոսյանը, Ալմաստ Մինասյանը, Նատալյա Մելիքյանը, գիտությունների թեկնածուներ Աշխեն Պետրոսյանը, Եվգենյա Միրզախանյանը, Իզաբելա Թամրազովան և ուրիշներ:

* * *

Պատերազմը դարձավ բոլոր գրողներին ու արվեստագետներին հուզող թեմա:

Այդ օրերին «Պրավդան» գրել է. «Զի եղել և չկա մի հայ, որը չգիտակցի, թե ինչ է բերում իր հետ օտարերկրացիների՝ զավթիչների, բռնակալների ու բանդիտների արշավանքը: Հիտլերյան կոալիցիայի ծրագիրը հայտնի է: Դա ռասսայական ատելություն է, «ընտրյալ» ազգերի տիրապետություն, մյուս ազգերի հնազանդեցում և նրանց տերիտորիաների զավթում. հնազանդեցված ազգերի տնտեսական ստրկացում և նրանց ազգային ունեցվածքի հափշտակում, ղեմկրատական ազատությունների ոչնչացում, հիտլերյան ռեժիմի ստոր բռնություն, վայրագ ջարդերի գազանային դատաստանի ռեժիմի ամենուրեք հաստատում»¹:

Պատերազմի առաջին խսկ օրերից իր ցասումնալից ձայնը բարձրացրեց հայ գրականության վարպետը՝ Ավետիք Իսահակյանը: Սովետական հայրենիքի համար ստեղծված ծանր օրերին մեծ հումանիստը գրել է. «...Մեր վերջնական հաղթանակը ավանտյուրիստ ավազակի՝ Հիտլերի վրա ապահովված է: Հիմա ամեն մի խոհ ու գործ հաղթանակի համար, միայն և միայն հայրենիքի պատվի և հաղթանակի համար»²:

Հայրենիքը վտանգի մեջ է, հարկավոր է զինվել, վրեժխնդիր լինել թշնամուց, հարկավոր է օր ու գիշեր աշխատել մեր հաղթանակը արագացնելու համար, ոչ մի զիջում թշնա-

¹ «Սովետական Հայաստան», 28 փետրվարի 1943 թ.:

² Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հատ. 4, Երևան, 1951, էջ 86:

մուն, մահ կամ հաղթանակ: Այս էր հայ բանաստեղծների և գրողների ստեղծագործության նշանաբանը:

Գրողներն առանձին սիրով և ոգևորությամբ էին երգում ռազմաճակատի ու թիկունքի կանանց հերոսությունները, կին, որը պատերազմի օրերին բազմապատկված ուժով հանդես եկավ թե՛ ռազմաճակատում, թե՛ թիկունքում: Պատերազմի տարիներին շատ գրողներ գրեցին մոր, կնոջ, դստեր մասին, ռազմաճակատում ռազմիկներին փրկող անձնվեր քույրերի մասին: Քրոջ գաղափարը խոր իմաստությամբ էին ընկալում ռազմաճակատի մարտիկները և սպաները. «Քույր... ինչքան քնքշություն կա այս մեկ հատիկ բառի մեջ,— գրել է ռազմաճակատից Հրաչյա Քոչարը,— ինչքան սեր ու խանդավառանք, ինչքան հիշողություն մանկության օրերից: Որ ժողովուրդն է, որ շունի աշգլիսի իմաստուն խոսքեր: Հերոսական, ասպետական դարերում միշտ էլ կինը հավասար է եղել տղամարդուն: Խաղաղ ժամանակ նա քնքուշ քույր է, անհիշաշար ընկերուհի, կին, բարի ու վշտակից մայր: Երկու լարունի նրա սիրտը՝ սիրո և բարության: Ռազմի ժամին նա փոխվում է, դառնում է հերոսուհի, բոցավառվում գիսաստղի նման: Ոչ ոք չի չափել սահմանը սիրո և ատելության, արգարատելությանը ճշմարիտ սիրուց է միշտ ուժ առնում»¹:

Երբ կարգում ենք Հրաչյա Քոչարի «Մեր քույրերը» ռազմաճակատային ակնարկը, տեսնում ենք, թե ինչպես սովետական կանայք ատելությամբ լցված, որպես հերոսուհիներ մարտնչել են թշնամու դեմ և ցուցաբերել անօրինակ սխրանքներ:

Ով կարող է մոռանալ Աննա Բելոստոցկայային, որը միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո, 18 տարեկան հասակում մեկնեց ռազմաճակատ, որպես քույր և ռազմիկ պայքարեց թշնամու դեմ: Շատ մոռյլ պատկերներ, դժվարություններ տեսավ և կրեց Աննան պատերազմի դաշտում: Մահը աչքերում, բայց և մահը արհամարհելով, նա հերոսաբար մարտնչեց կրակի առաջին գծում: Թշնամու կրակի տակ, սողալով,

¹ Հր. Քոչար, Նախօրյակին, Երևան, 1943, էջ 109—110:

առաջ էր գնում Աննան, գտնում վիրավորներին և դուրս բերում նրանց: Չորս մարտիկի աղատելով, նա իրեն հպարտ էր զգում, որովհետև իր կյանքի գնով հայրենիքին պարգևել էր չորս զինվոր:

Շատ երկեր, ակնարկներ և պատմվածքներ գրվեցին մոր մասին: Մայրը թիկունքում հերոսացավ, կրկնապատկեց իր ուժերը, դարձավ արդյունաբերության ու գյուղատնտեսության առաջավոր մարտիկ, արտագրական նորմաները գերակատարող, անձնվեր հայրենասեր, մարտնչող քաղաքացի ու երեխաների դաստիարակ: Բազում տառապանքներ կրեց նա պատերազմի օրերին, բայց չընկճվեց, որդիներ կորցրեց ռազմաճակատում, բայց չհուսահատվեց, հանուն հայրենիքի, հանուն կորցրած հարազատների նա տոգորվեց նոր եռանդով ու հաղթանակի հավատի ներշնչումով իր մեջ ուժ գտավ՝ վրեժ լուծելու անարդ թշնամուց: Բնորոշ են Ստեփան Զորյանի «Մայր», «Որդին» պատմվածքները և մյուսների նկարագրած մայրերի կերպարները:

Ստեփան Զորյանի ստեղծած կնոջ կերպարները ուժ են առնում, աշխատում են մոռանալ անձնականը և ապրել, պայքարել ու հաղթանակել ընդհանուրի համար:

Հայրենական պատերազմի տարիներին ստեղծվեցին Ստ. Զորյանի «Պապ թագավոր» և Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմվեպերը: Անվանի գրողների այդ գործերը մեծ ներշնչանքով ընդգնվեցին թիկունքի ընթերցող հասարակության և մարտնչող ռազմիկների կողմից: Ուշագրավ է այն, որ «Վարդանանք»-ում ժողովրդական ընդվզումների ու պայքարի մեջ արժանի տեղ են գրավել կանայք, որոնք ցուցաբերում են մեծ հայրենասիրություն, թշնամու նկատմամբ խոր ատելություն, կատարում են սխրանքներ հայրենիքի համար:

«Պապ թագավոր»-ը վեպում ևս հայրենասեր տղամարդկանց կողքին տեսնում ենք շատ հայուհիների:

Սովետական կանանց հայրենասիրական խիզախումների թեման մեծ տեղ է գրավում շատ գրողների և արձակագիրների մոտ: Դրանցից հիշատակենք միայն մի քանիսը: Սողո-

մոն Տարոնցու «Լիզա Ժուկը», Գուրգեն Բորջանի «Աղջկան», որի մագերը ճերմակել են», Ն. Մկրտչյանի «Խարաշալ աղջիկը», «Մայրը», «Մոր նվերը» և այլն: Զկա մի գրող, որի գրիչը, գեղարվեստական խոսքը չնվիրաբերվեր սովետական հայրենիքի պաշտպանությանը: Ռազմաճակատի և թիկունքի հերոսների թվում նրանք գովերգել են նաև կանանց, որոնք ազամարդուն հավասար պայքարում էին թշնամու ջախջախումը արագացնելու համար:

Պատերազմի տարիներին իրենց հայրենասիրական մարտաշունչ երկերով հանդես եկան կին գրողներ Լուսի Թաբգյուլը, Աղավին, Արաքսը, Հռիփսիմե Պողոսյանը, ինչպես նաև երիտասարդ սերնդի ներկայացուցիչներ Սիլվա Կապուտիկյանը, Մարո Մարգարյանը և ուրիշներ:

1942 թ. լույս տեսավ Հռիփսիմե Պողոսյանի «Որդիների հետ» բանաստեղծությունների ժողովածուն: Հեղինակը երգում է միլիոնավոր սովետական որդիների մասին, նրանց ոգեշնչում թշնամու նկատմամբ լինել անխնա: Հռիփսիմե Պողոսյանը բանաստեղծական ազդու և կրակոտ խոսքերով է գրել «Պարտիզանուհու նամակը», «Ինտերնացիոնալը», «Մալխիսին», «Մանյակ» բանաստեղծությունները: Նա պատմում է հերոս պարտիզանուհու մոր կողմից հայրենիքին նվիրաբերած մարգարտե մանյակի, թշնամու կրակե օղակով շրջապատված տասը վիրավոր վինվորների մասին, որոնք մահն ընդունում են «Ինտերնացիոնալի» բառերը շուրթերին:

1944 թ. լույս տեսավ Աղավնու «Իմ տաղարանը» բանաստեղծությունների ժողովածուն: Աղավնու բանաստեղծությունները ճակատաչիններն ընդունեցին որպես մարտական կոչ («Զինվորի սիրտը», «Նամակ սիրեցյալին», «Հենակները», «Խոստովանանք» և այլն):

Պատերազմի տարիներին առանձին դբբով հանդես եկավ բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը: Նրա ստեղծագործությունները հազեցված են խորը լիրիկայով և գեղարվեստական ինքնատիպությամբ: «Օրեփ հետ» ժողովածուով նա գրական աշխարհ մտավ որպես ինքնատիպ բանաստեղծուհի:

Ս. Կապուտիկյանի տվյալ ժողովածուի ոտանավորների ճնշող մասը նվիրված է ռազմաճակատի և թիկունքի կանանց սրխ-րանքներին:

Սիրվա Կապուտիկյանի այդ տարիների ստեղծագործութ-թյունների մեջ աչքի են ընկնում Հայրենական պատերազմի հերոսների, մոր, որդու և այլ թեմաներով գրված «Օրորոցի մոտ», «Առաջին գարունը», «Նահանջի օրեր», «Ուկրաինացի մոր օրորք», «Բալլադ աղջկա ձեռագործի և երազների մա-սին», «Սոնետ Հունան Ալեքսիսյանի հիշատակին», «Քո դարձի համար», «Երեանի լույսերը», «Խոհ Ղինվորի մասին», «Հերո-սական» և այլ բանաստեղծություններն ու շափածո գործերը:

Սիրվա Կապուտիկյանի հետ միաժամանակ հրապարակ եկավ բանաստեղծուհի Մարո Մարգարյանը: «Զեմ սիրում խստալեզու ձյուն ու ձմեռ», «Երբ հոգիս փարած ջինջ աստ-ղաշարին», «Նստած աշխարհի անկյունում խաղաղ» և այլ բա-նաստեղծություններում հեղինակը պատմում է հայրենիքի սիրո, նրա քաջարի զինվորների մասին:

Արձակագիրներ Արաքսը, Լյուսի Թարգյուլը իրենց պատմվածքներում կերտեցին հայրենիքի համար մարտնչող կանանց կերպարներ:

Հիշատակության արժանի է նաև գրականագետ Արշալույս Քաբայանի «Հայրենական մեծ պատերազմի շրջանի սովե-տահայ գրականության մի քանի բնորոշ գծերը» ուսումնա-սիրությունը:

Հայրենական պատերազմի օրերին Հայաստանի գրողները իրենց ձայնը բարձրացրին ֆաշիզմի կործանիչ քաղաքակա-նության դեմ, իրենց երկերում գրսևորեցին այն մարդկանց, ովքեր արագացնում էին ֆաշիզմի կործանումը, սովետական ժողովրդի և խաղաղության հաղթանակը:

* * *

Երբ սկսվեց Հայրենական պատերազմը, Երեանի Ս. Սուն-դուկյանի անվան պետական թատրոնի կոլեկտիվը Մոսկվա-

յում նոր էր վերջացրել իր հյուրախաղային ներկայացումները: Ծանապարհին սուևդուկյանցիներն ականատես եղան այն տազնապին ու ցասմանը, որ համակել էր սովետական ողջ ժողովրդին թշնամու հարձակումը:

«Սովետական Հայաստան» թերթում լույս տեսավ հանրապետության ժողովրդական դերասան Արմեն Արմենյանի՝ ռազմաճակատ մեկնող երիտասարդներին ուղղված դիմումը, որը արվեստի բոլոր աշխատողների սրտի ձայնն էր: Դիմելով ռազմաճակատում մարտնչող ռազմիկներին, նա գրել է. «Երգվում եմ իմ 70 տարիներով, որ ձեզանից հոգով և մարմնով հեռու չեմ լինի և քանի շունչ կա բերանումս, քանի ձայն կա կոկորդումս, կաշխատեմ լսելի դարձնել ձեզ, բեմական իմ արվեստի միջոցով, բոլշևիկյան մարտակոչի հրեղեն պատգամները»¹:

Ժողովրդական դերասանուհի Արուս Ոսկանյանը Հայաստանի Կոմկուսի կենտկոմին ուղղված նամակում գրել է. «Իմ բազմաթիվ հիւսթներում և հոգվածներում ես պատրաստակամութուն եմ հայտնել իմ ամբողջ ուժերը և, եթե անհրաժեշտ լինի, կյանքս նվիրաբերել ի բարօրություն մեր մեծ հայրենիքի: Այս օրերին, երբ սովետական ժողովուրդն իր աղատության համար պայքարում է անարգ թշնամու դեմ, ես այրվում եմ իմ հայրենիքին օգտակար լինելու ցանկությամբ՝ ոչ միայն գեղարվեստական սպասարկմամբ, այլև ֆիզիկական աշխատանքով, որպեսզի իմ լուծման ներդեհմ մեր թիկունքի ամրապնդման գործին: Հավատացնում եմ ձեզ, որ մենք՝ արվեստի կին աշխատողներս մեր աշխատանքով և գեղարվեստական սպասարկմամբ կծառայենք մտավոր և ֆիզիկական աշխատանքի բնագավառում այնքան ժամանակ, քանի դեռ վերջնականապես չի ոչնչացել ուխտագրուծ թշնամին»²:

Բոլոր թատրոններում կազմակերպվեցին համերգային բրիգադներ: Համերգներ էին տրվում զորամասերում, հոսպիտալներում, գործարաններում և կոլտնտեսություններում:

¹ «Սովետական Հայաստան», 26 հունիսի 1942 թ.:

² «Երեան», № 112, 1962:

Ժողովրդական դերասանուհի Արուս Ոսկանյանը պատե-
քաղմի առաջին խսկ օրից մինչև իր կյանքի վերջը (1943) ու-
նեցել է մոտ 500 ելույթ: Նա զլխավորում էր Սունդուկյանի
անվան թատրոնի բրիգադներից մեկը: Սունդուկյանցիները
կազմակերպել էին յոթ բրիգադ, որոնցում ընդգրկված էին 40
դերասաններ և դերասանուհիներ: Հայաստանի բոլոր թատե-
րական բրիգադները պատերազմի առաջին մի քանի ամսում
միայն ղորամասերի համար շեֆական կարգով տվեցին 2500
ներկայացում, համերգ և ելույթ¹:

Զորամասերում, հոսպիտալներում, գործարաններում և
կոլտնտեսություններում ունեցած ելույթներում ակտիվորեն
մասնակցում էին Արուս Ոսկանյանը, Հայկանուշ Դանիելյանը,
Հասմիկը, Օլգա Գուլադյանը, Ռուզաննա Վարդանյանը, Արուս
Ասրյանը, Անիկ Մկրտումյանը, Իզաբելա Դանդասը, Դուրյան-
Արմենյանը և ուրիշներ:

Հայ դերասանուհիները կերտեցին կնոջ հերոսական կեր-
պարների մի ամբողջ գալերեա, կերպարներ, որոնք ողեշնչում
էին ռազմաճակատի և թիկունքի մարդկանց:

Ժողովրդական դերասանուհի Հասմիկը պատերազմի տա-
րիներին, ի թիվս շատ ու շատ կերպարների, կերտեց Մարֆա
Պետրովնայի (Կ. Սիմեոնով, «Ռուս մարդիկ») և Աննայի (Ա.
Գուլակյան, «Արշալույսին») հոյակապ կերպարները, որոնք
մնացին նրա հարուստ խաղացանկում որպես լավագույն,
պայծառ գույներով հագեցած կանացի դեմքեր: Հանձին հիշ-
յալ հերոսների՝ Հասմիկը կերտեց սովետական մոր բարձր
հայրենասիրության գծերով օժտված կերպարը:

Ժողովրդական դերասանուհի Արուս Ոսկանյանի կերտած
բեմական կերպարներից մարդկանց հիշողության մեջ ուժեղ
են տպավորվել Ասպրամբ («Գևորգ Մարդպետունի»), Մարֆա
Նիկողլանյան («Ռուս մարդիկ») և Դարյա Պետրովնան («Հրա-
բրխի վրա»): Դերասանուհին ամբողջ էությունը գործում էր

¹ Սարգիս Մելիքսեբյան, Ուրվագծեր սովետահայ թատրոնի պատմու-
թյան, Երևան, 1960, էջ 154:

Հայրենիքի համար, իր ժողովրդի ազատության և անկախության համար: Պատերազմը նոր էր սկսվել և Արուս Ոսկանյանը արդեն շրջում էր հանրապետության տարրեր շրջաններում, կոլտնտեսուհիների համար կարգում հողվածներ, բացատրում ֆաշիստական դավթիչների ստոր պլանները: Անվանի դերասանուհին անձամբ քաջ դիտակցում էր թշնամու նենգությունը: Նրա հարազատները այդ ճաշակել էին դեռևս առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, երբ գերմանական ֆաշիստների նախորդների թելադրանքով և աջակցությամբ թուրք բարբարոսները սրախողող արին արեմտահայությանը: Արուս Ոսկանյանի խաղացած դերերում հատուկ տեղ է զբաղում Մարիա Նիկողանյանի կերպարը (Կ. Սիմոնովի «Ռուս մարդիկ» պիեսում):

Սովետական հերոս կնոջ անդուգական կերպարներ կերտեցին նաև Օլգա Գուլազյանը, Ռուզաննա Վարդանյանը, Արուս Ասրյանը, Ամալյա Արազյանը, Սիրան Ալավերդյանը, Մայրանուշ Պարոնիկյանը, Անատոլիա Նելյանը, Արաքս Առաքելյանը, Նինա Բոխյանը, Վերջալույս Միրիջանյանը, էմմա Վարդանյանը, Իդա Մկրտչյանը, Թադուհի Սահակյանը, Մադիկ Վրույրը, էմմա Ստեփանյանը, Ժենյա Գևորգյանը, Ժաննա Թովմասյանը, Արև Հարությունյանը և շատ ուրիշներ:

Ռեժիսյոր Աստղիկ Աղասյանը պատանի հանդիսատեսի թատրոնում, ի թիվս շատ պիեսների, բեմադրեց նաև Գ. Յաղչյանի «Զոյա»-ն և Բաֆֆու «Սամվել»-ը:

1942 թ. Երևանում բացվեց՝ երաժշտական կոմեդիայի պետական թատրոնը, որտեղ մեծ աշխատանք կատարեցին Իզաբելա Դանդասը, Նվարդ Ալիխանյանը, Վարդուհի Շահսուվարյանը, Սոֆյա Էրամջյանը, Իդա Մկրտչյանը և ուրիշներ:

Ալ. Սպենդիարյանի անվան Լենինի շքանշանակիր օպերայի և բալետի ակադեմիական թատրոնը հանդես եկավ հայրենասիրական օպերաներով: Բեմադրվեցին Գլինկայի «Իվան Սուսանին», Ուդ. Հաջիբեկովի «Քյոռ Օղլի», Զ. Փալիաշվիլու «Դայիսի» և այլ օպերաներ:

Լենինի շքանշանակիր Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում բեղմնավոր բեմական գործունեություն ծավալեց ՍՍՀՄ ժողովրդական դերասանուհի, ՍՍՀՄ Գերագույն սովետի դեպուտատ Հայկանուշ Դանիելյանը։ Տաղանդավոր երգչուհին Հայրենական պատերազմի օրերին հանդես եկավ Դեղդեմոնայի («Օթելլո»), Նիզյարի («Քյոռ Օղլի»), Անտոնիդայի («Իվան Սուսանին»), Մարոյի («Դայիսի»), Մարգարիտա Վալուայի («Հուգենոտներ») և Օլիմպիայի («Արշակ Երկրորդ») դերերում։ Ռուս, վրացի, ադրբեջանցի, հայ և սովետական մյուս ժողովուրդների հերոս կանանց կերպարները դարձան սովետական հայրենասիրության ամրապնդման, մարդկանց սխրագործությունների ոգևորող հզոր միջոց։

«Քյոռ Օղլի», «Դայիսի» օպերաների բեմագրությունները բորբոքում էին վառ հայրենասիրություն, նպաստում ամրապնդելու Անդրկովկասի ժողովուրդների եղբայրական կապերը և միասնությունը։

1941—1945 թթ. օպերայի թատրոնի երգչուհի Տաթևիկ Սաղանդարյանը հանդես էր գալիս Կարմենի («Կարմեն»), երգչուհու («Քյոռ Օղլի»), մանկլավիկի («Հուգենոտներ») և Փառանձեմի («Արշակ Երկրորդ») դերերգերով։ 1944 թ. Սաղանդարյանը մասնակցեց վոկալիստների համամիութենական մրցանակաբաշխությանը և արժանացավ առաջին կարգի դիպլոմի։ Նույն թվականին նրան շնորհվեց Հայկական ՍՍՀ վաստակավոր արտիստուհու կոչում։

1941 թ. վերջերից Երևանի օպերային թատրոնում իր ստեղծագործական աշխատանքը սկսեց Մոսկվայի Գնեսինների անվան երաժշտական ուսումնարանի սան, երգչուհի Զարուհի Դոլուխանյանը։ Նա հանդես էր գալիս Պոլինայի («Պիկովյա դամ»), Օլգայի («Նվգենի Օնեգին»), Զեբելի («Ֆաուստ») և այլոց դերակատարումներով։ Ստեղծագործական երազանքները երգչուհուն մղեցին դեպի կամերային երաժշտության բնագավառը։ Թողնելով օպերայի բեմը՝ Դոլուխանյանը 1944 թ. վերադարձավ Մոսկվա և աշխատանքի անցավ համամիութենական ռադիոյում։ Դոլուխանյանը մշակեց բազ-

մաժանր երգացանկ, կատարելով ուռա, արևմտաեվրոպական կոմպոզիտորների ստեղծագործություններ և հայկական երգեր: Այժմ տաղանդավոր երգչուհի Զարուհի Դոլուխանյանը համաշխարհային հռչակ է վայելում:

Հոսպիտալներում, կոլտնտեսություններում, գործարաններում, ինչպես նաև ռազմաճակատում գործող զորամասերի համար բաղմամբով համերգներով հանդես եկան Հայֆիլհարմոնիայի երաժշտական կոլեկտիվները: Միայն 1944 թ. վերջին երեք ամսվա ընթացքում զինվորական հոսպիտալներում և ՆԳԺԿ զորամասերում նրանք կազմակերպեցին 71 համերգ:

Նույն թվականի օգոստոսի 25-ին Հայկական ժողովրդական երգի-պարի անսամբլի 25 հոգուց բաղկացած բրիգադը, ժողովրդական արտիստ Բաթուլ Ալթունյանի ղեկավարությամբ, մեկնեց Հ. Բաղրամյանի հրամանատարությամբ գործող Մերձբալթյան ռազմաճակատի զորամասերը՝ համերգներ տալու: Բրիգադի անդամներից 16-ը կանայք էին: Բրիգադի լավագույն կատարողները պարզեատրվեցին շքանշաններով և մեդալներով: Ռազմաճակատի հրամանատարությունը Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմին ուղղված շնորհակալական խոսքում գրել է. «Արևային Հայաստանի բաղմակողմանի արվեստը առաջ բերեց զորամասերի անձնակազմի և նոր ազատագրված Շյաուլյայ քաղաքի բնակիչների ընդհանուր հիացմունքը: Գվարդիական զորամասի ամբողջ անձնակազմի կողմից սրտանց շնորհակալություն ենք հայտնում ՀԿ(բ)Կ Կենտկոմին և հայ ժողովրդին՝ ձեր ուղարկած անսամբլի համերգների համար»¹:

1941—1945 թթ. Հայկինոն հանդես եկավ գեղարվեստական լիամետրաժ, դոկումենտալ և խրոնիկալ կինոնկարներով: Այդ տարիներին Հայկինոն նկարահանեց «Արյուն արյան համար», «Կրակը անտառում», «Հայկական կինոհամերգ», «Հայրենասերների ընտանիքը», «Գվարդիականի կինը», «Դուստրը», «Դավիթ բեկ», «Մի անգամ գիշերով» գեղարվեստական

¹ Մ. Պ. Աղայան, Ե. Մ. Խալեյան, Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության, էջ 233:

Ֆիլմերը, ինչպես նաև «Ռազմաճակատի համար», «Սովետական բանակի մուտքը Իրան», «Ամին ինչ ռազմաճակատի համար», «Հայաստանի զավակները», «Երկիր հայրենի» դոկումենտալ ֆիլմերը և կինոակնարկները:

Գեղարվեստական ֆիլմերում կանանց զլխավոր դերերում հանդես եկան Հասմիկը, Վ. Ավետիսյանը, Ն. Ալթունյանը, Ս. Վոլխովսկայան, Դ. Ծատուրյանը, Ա. Սարյանը և ուրիշներ¹:

Պատերազմի պահանջներին համապատասխան իրենց աշխատանքները վերականգնեցին նաև հանրապետության քանդակագործները և նկարիչները:

Անվանի քանդակագործուհի Ա. Ուրարտուն իր աշխատանքների հիմնաքարը դարձրեց հայրենասիրական ու մարդասիրական թեմաները: Դիմաքանդակ ստեղծագործություններին զուգընթաց քանդակագործուհին ստեղծեց թեմատիկ գործեր: Պատերազմի տարիներին Ուրարտունի հմուտ ձեռքերով կերտվեցին «Վրեժի երգումը» արձանը, «Կանայք Հայրենական պատերազմում» բազմամարդ կոմպոզիցիոն աշխատանքը, «Սովետական Միության հերոս մայրը Անտոնով» դիմաքանդակը և այլ գործեր:

«Վրեժի երգումը» փոքրածավալ արձանում քանդակագործուհին մարմնավորել է սովետական կանանց տառելությունը ֆաշիզմի և պատերազմի նկատմամբ: Դրամատիկորեն հարուստ այդ կոմպոզիցիան հաղեցված է հումանիտական մեծ գաղափարով:

Տաղանդավոր և անվանի արվեստագետների շարքում շատ շնորհալի նկարչուհիներ իրենց ստեղծագործությունները նվիրեցին հայրենասիրական թեմաներին: Մարիամ Ասլամազյանը որսիս պրոֆեսիոնալ նկարչուհի ձևավորվեց պատերազմի ժամանակաշրջանում:

Պատերազմի տարիներին ստեղծած նրա կտավներից աչրի են ընկնում «Հերոսի վերադարձը», «Լենինգրադցիները»,

¹ Տե՛ս «Հայկական կինոարվեստը», հոգվածների ժողովածու, Երևան, 1958, էջ 203—297:

«Ամեն ինչ ռազմաճակատի համար», «Հերոսի երգը» նկարները: Ուշագրավ են նաև նկարչուհի Երանուհի Ասլամազյանի «Կինը ռազմաճակատում» և «Աղջիկները ճանապարհ են գցում ռազմաճակատ» գործերը:

Պատերազմի ժամանակ իրենց լավագույն կտավներով աչքի ընկան նկարչուհիներ Գ. Ֆերմանյանը, Ս. Ղարազյուզյանը, Վ. Հայրապետյանը, Ա. Սարգսյանը, Դ. Մխիթարյանը, Ա. Նալբանդյանը, Ա. Պարսամյանը և ուրիշներ, որոնց ստեղծագործությունները սլարբերաբար ցուցադրվում էին հանրապետական ցուցահանդեսներում, շրջկենտրոններում, գործարանային ակումբներում և հոսպիտալներում:

Այսպիսով, Հայրենական մեծ պատերազմի տարիներին Հայաստանի լուսավորության, արվեստի և դրականության գործիչները, ամբողջ մտավորականությունը իր ունակությունները և տաղանդը նվիրաբերեց մեր հայրենիքի ազատության և անկախության համար մղվող արգարացի պայքարին:

Գ Լ Ո Ւ Խ Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Գ

ՀԱՅ ԿԱՆԱՆՅ ՍԽՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՌԱԶՄԱՃԱԿԱՏՆԵՐՈՒՄ

Սովետական ժողովրդի ազատության և անկախության պայքարում իրենց հերոս եղբայրներից, ամուսիններից, հայրերից ու որդիներից ետ չմնացին սովետական կանայք: Նրանք պարզ զիտակցում էին, որ գերմանական օկուպանտների նպատակն է զավթել մեր հայրենիքը, ստրկացնել մեր ժողովրդին, սովետական ազատագրված կնոջը ղրկել իրավունքներից և ընտանեկան երջանկությունից:

Մեր հայրենիքի բազմազգ կանանց հետ միասին հայ կանայք համալրեցին սովետական բանակի շարքերը և անձնվիրաբար մարտնչեցին ֆաշիստական զավթիչների դեմ:

1941 թ. հոկտեմբերի 23-ին Երևանում հրավիրված համաքաղաքային կոմերիտական ժողովին ներկայացրած դիմումում, կամավոր ռազմաճակատ մեկնելու ցանկություն հայտնելով, կոմերիտուհի Սոնյա Սինոյանը գրել է. «Ես հպարտ եմ, որ պիտի մեկնեմ կարմիր բանակ և հարազատներիս հետ միասին կռվեմ հիտլերյան ավազակների դեմ: Թող զիտենան ֆաշիստ զավթիչները, որ սովետական կանայք պատրաստ են կրճերով պաշտպանելու իրենց սիրելի հայրենիքի ազատությունն ու անկախությունը»:

1942 թ. սկզբներին Սոնյա Սինոյանն արգեն ռազմաճակատում էր: Նա մասնակցել է Ուկրաինայի Կիրովոգրադի մարզում և Հյուսիսային Կովկասում մղվող մարտերին:

1942 թ. ամռանը հիտլերականները մեծ զոհերի գնով ներխուժեցին Հյուսիսային Կովկաս: Կովկասի դարպասների մոտ սովետական բազմազգ քաջարի զինվորները կատաղի հակազորհանրով արգելակում էին թշնամու զորհանրը: Եֆրեյտոր Սոնյա Սինոյանը Մոզդոկի տակ տեղի ունեցած պաշտպանական մարտերին մասնակցում էր որպես հրետանու կապավոր, անընդհատ վերականգնելով հաճախակի ընդհատվող կապը: Նա միաժամանակ քաջ հետախույզ էր: Բազմիցս մեկնել է թշնամու թիկունք, օրինակելիորեն կատարելով հրամանատարութան առաջադրանքները, արժանանալով «Գերազանցիկ հետախույզ» կոչմանը:

Գվարդիայի եֆրեյտոր Սինոյանը 1944 թ. մասնակցել է Ուկրաինայի, Մոլդավիայի և Հունգարիայի աղատագրամանը: Հունգարիայում Սինոյանը նորից հրետանային միավորման կապավոր էր:

Բելգրադյան հրաձգային № 1 դիվիզիան մի բարձունքում տեղավորել էր երկու հրետանային մարտկոց: Կատաղի մարտ էր սպասվում: Շուտով կապավորը գնդի հրամանատարին տեղեկացնում է թշնամու հարձակման մասին: Կովի թեժ պահին խափանվում է կապը գնդի հրամանատարութան և մարտկոցների միջև: Իսկ թշնամու տանկերը, ապա ավտոմատավորները, առաջ էին շարժվում: Ստեղծված պայմաններում ավելի էր դժվարանում կապի վերականգնումը: Մարտկոցի հրամանատարը, ցանկանալով փրկել զորամասի միակ աղջկա՝ Սինոյանի կյանքը, պահանջում է դուրս գալ կրակային գծից և գնալ շտաբ: Սակայն կապավորուհին հրաժարվում է: Նա հրետանավորներին արկեր է մատակարարում և մինչև վերջ մասնակցում բարձունքի պաշտպանութանը: Այդ սխրագործութան համար նա արժանացավ Կարմիր աստղի շքանշանի:

Ուշագրաւ է Դանուբի ափին (Ալստրիա), վերջին մարտերից մեկում նրա կատարած սխրագործութիւնը: Մարտեր էին մղւում Դյուլա գլուղի մօտ: Հիտլերականները հակազդող էին դիմել մեր մարտկոցի դիրքերի վրա: Կապն ապահովում էր Սինոյանը: Գրոհի էր անցել գերմանական հետևակը՝ ութ տանկի պաշտպանութեամբ: Տանկերից մեկը շարժւում է դեպի Սինոյանը: Երբ տանկը գտնւում էր 15 մետր հեռավորութեան վրա, Սինոյանը նրա վրա նետեց հրկիզող շիշը: Թշնամու տանկը շարքից դուրս եկավ: Կռիւն ավելի էր բորբոքւում: Առաջ էին շարժւում մյուս տանկերը: Մարտկոցի անձնակազմը ոչնչացրեց գերմանական 4 տանկ և զերեք 25 զինվոր: Սինոյանը անձամբ նռնակներով ոչնչացրեց նաև երկրորդ տանկը, հինգ հիտլերական և զերի վերցրեց երկուսին:

Բաղմաթիւ ևն խիզախ զվարդիական եֆրեյտոր Սոնյա Սինոյանի կատարած քաջագործութիւնները: Պատերազմի ընթացքում նա պարգևատրւել է Կարմիր աստղի, Փառքի 3-րդ աստիճանի շքանշաններով և մի քանի մեդալներով: Գերագույն գլխավոր հրամանատարութեան կողմից Սինոյանը զրաւոր շնորհակալութեան է արժանացել Կոստանյա, Բուդապէշտ, Վիեննա և մի շարք այլ քաղաքների զրաւմանը մասնակցելու համար:

Կարմիր բանակի հարավային խմբի հրամանատարութիւնը, զորացրման կապակցութեամբ, Սինոյանին տված հրամանում գրել է. «Այս պատմական մեծ ճակատամարտում դու պատւով կատարեցիր կարմիր բանակի ռազմիկի պարտականութիւնը: Հարավային խմբի զորքերի կազմում դու անցել ես Դոնից և Ստալինգրադից մինչև Վիեննա և Ալբստրիական Ալպերը տանող երեք հազար կիլոմետրանոց փառավոր մարտական ճանապարհը: Դու քաջութեամբ ու պատվով մասնակցեցիր գերմանական զավթիչներից հարադատ Ուկրաինայի ու Մոլդաւիայի և միլիոնավոր սովետական քաղաքացիների ազատագրման մարտերին»¹:

¹ ՀՊՊԿ արխիւ, ֆ. 270, դ. 3, թ. 71:

Կովկասի ակտիվ պաշտպաններից է ՍՄԿԿ անդամ, աշտարակցի Հասմիկ Թամաղյանը: Նա Կովկասի հերոսակառն պաշտպանության օրերին կամավոր մեկնում է կարմիր բանակ, սովորում և դառնում ղեկիթային հրետանավոր:

Համառ և կատաղի մարտեր էին մղվում Արմավիր քաղաքը ազատագրելու համար: Հիտլերականները ուժեղ կրակի տակ էին պահում մեր պաշտպանության դիրքերը: Գործում էր թշնամու ավիացիան: Մեր ռազմա-օդային դիվիզիոնի հրամանատարի առաջադրանքով Թամաղյանի ջոկը արագորեն հայանաբերում է հակառակորդի ինքնաթիռների թռիչքի ուղղությունը և բարձրությունը: Երբ ինքնաթիռները մոտենում են մեր պաշտպանության գծին, ղեկիթայիների հուժկու կրակը ցրում է նրանց խումբը, ոչնչացնում մի քանիսին: Խափանվում է թշնամու ավիացիայի այդ օրվա հարձակումը Արմավիր և Կրոպոտկին քաղաքների վրա:

Կովկասի ազատագրման համար մղվող մարտերում անձնուրաց սխրագործությունների համար Թամաղյանը հրամանատարության կողմից երկու անգամ արժանանում է պատվոգրի և պարգևատրվում Մարտական ծառայությունների համար մեդալով:

Փորձված ռազմիկ Թամաղյանը մասնակցել է Ուկրաինայի, Մոլդովիայի ազատագրմանը, մարտերով հասել Չեխոսլովակիա: Նա միաժամանակ ղիվիզիոնի կուսակցական կազմակերպության քարտուղարն էր:

Հեռաչափային ստորաբաժանման հրամանատար կապիտան Պանկովը և քաղցածու նրա տեղակալ մայոր Ժիլկինը Թամաղյանի հորը գրել են. «Մեր ստորաբաժանման մեջ ծառայությունն անցկացնելիս Ձեր ղուստը իրեն զրսեորեց որպես լավագույն աղջիկ-մարտիկներից մեկը: Ամբողջ ծառայության ընթացքում նա եղել է մարտական ու քաղաքական պատրաստության գերազանցիկ, համեստ ու կարգապահ մարտիկ»¹:

¹ Հոգիկ արխիվ, ֆ. 270, գ. 55ա, թ. 2:

Կովկասը պաշտպանող մարտիկների շարքերում հերոսաբար պայքարում էին նաև մեծ թվով կին-կապալորդներ՝ կապի վաշտի հրամանատար Աղավնի Ավետիսյանը, կրտսեր լեյտենանտներ՝ Քնարիկ Հարությունյանը և Կարմիր աստղի շքանշանակիր Վիկտորիա Մալակյանը, Մարտական ծառայության համար մեդալակիրներ Լուսյա Պողոսյանը և Վալենտինա Լիվյանը, Կարմիր աստղի շքանշանակիր Անելա Աբրահամյանը:

Կոմերիտուհի Վալենտինա Լիվյանը ապահովում էր անխախտ կապը գումարտակի և վաշտի միջև: 1943 թ. հուլիս-աեպտեմբեր ամիսներին ծովային հետևակի 225-րդ կարմրադրոշ բրիգադի 327-րդ առանձին գումարտակի կազմում մասնակցում է Նովորոսիյսկ քաղաքի մոտ՝ «Փոքր հող»-ում մղված մարտերին: Լիվյանը ապահովում էր կապը գումարտակի հրամանատարական կետի և զորամասերի միջև: Մարտերի ծանր պահերին Վալենտինան մարտի դաշտից դուրս էր բերում վիրավորներին և նրանց ցույց տալիս բժշկական առաջին օգնություն:

Կապի վաշտի հրամանատար Աղավնի Ավետիսյանը միշտ անխափան էր պահում կապը: Նա անձամբ ստուգում և վերանորոգում էր հեռախոսային գիծը: Մի մարտի ժամանակ, թշնամու ուժեղ կրակի տակ, երբ Աղավնին վերականգնում էր հեռախոսային գիծը, ընկավ շրջապատման մեջ: Սակայն նրան հաջողվեց դուրս գալ շրջապատումից և անհապաղ ապահովել կապը զորամասի հետ: Կապի վաշտի հրամանատար Աղավնի Ավետիսյանը իր անձնական օրինակով ոգեշնչում էր ստորաբաժանման հրամանատարներին ու մարտիկներին:

Անվհեր կապավոր, լուսավորություն մինիստրության նախկին աշխատակից, կամավոր ռազմաճակատ մեկնած Քնարիկ Հարությունյանը Կովկասից հասավ մինչև Բեռլին: Մարտական ծառայությունների համար կոմունիստ կապավորը պարգևատրվել է Կարմիր աստղի շքանշանով և մեդալներով:

Կապավոր Անեկա Աբրահամյանի մարտական ուղին ձեռն-
վում է Հյուսիսային Կովկասից մինչև գերմանական Ֆաշիզմի
որջը՝ Բեռլին։ Երևանի բժշկական տեխնիկումի վերջին կուրսի
ուսանող, տրամվայի պարկի աշխատակից Անեկա Աբրահամ-
յանը կապավոր ռազմաճակատ մեկնեց 1942 թ.։ 320-րդ դի-
վիզիայի, ապա 409-րդ հայկական դիվիզիայի շարքերում նա
թշնամու դեմ մարտնչում էր սկզբում որպես սանիտարական
գումարտակի հրահանգիչ, ապա որպես կապավոր (շտա-
բային մարտկոցում)։ Նա մասնակցել է Հյուսիսային Կով-
կասի, Ռոստով, Միլլերովո և ուկրաինական շատ քաղաքների
ազատագրման մարտերին։ Զմեռ քաղաքը ազատագրելու ժա-
մանակ, ծանր պայմաններում կապը անխափան ապահովելու
համար Աբրահամյանն արժանանում է խիզախության համար
մեդալի։ Ծանր կոիվներ էին բորբոքվել Դնեպրոպետրովսկ
քաղաքի շրջանում։ 409-րդ դիվիզիան հարկադրված որոշ
նահանջ ունեցավ։ Զոհվել էր մայրը Ղաղարյանի ավտոմեքե-
նայի վարորդը, իսկ մեքենայում գտնվող մի խումբ հրամա-
նատարների սպառնում էր շրջապատում։ Առանց ժամանակ
կորցնելու Անեկա Աբրահամյանը մեքենայի ղեկը վերցնում է
ձեռքը և շրջապատումից դուրս բերում մեր հրամանատար-
ներին։ Կապավոր, շտաբային մարտկոցի կոմերիտական կաղ-
մակերպության քարտուղար Անեկա Աբրահամյանն արժանա-
ցավ դիվիզիայի հրամանատար Դոբրովոլսկու շնորհակալու-
թյանը։ Հետագայում դիվիզիան ակտիվ մասնակցություն ու-
նեցավ Դնեպրոպետրովսկ, Կիրովոգրադ, Կոնվոյ Ռոդ քա-
ղաքների ազատագրման մարտերին։ 1944 թ. հունվարին Կոն-
վոյ Ռոդի տակ, ծանր կոիվներում, Անեկա Աբրահամյանը և
հրետանային մարտկոցի 11 խիզախներ անձնազոհ պայքա-
րում էին թշնամու մեծաքանակ տանկերի դեմ, մինչև մեթ-
օթանդակ ուժերի հասնելը։ 1944 թ. փետրվարին Անեկա Աբրա-
համյանը 89-րդ Հայկական Թամանյան դիվիզիայի շարքե-
րում, նորից որպես գնդի շտաբային մարտկոցի կապավոր,
մասնակցում է Սևաստոպոլի, Լեհաստանի ազատագրմանը։
Օդերի հենակետում կապը անխափան պահելու համար Անեկա

Աբրահամյանը պարզեցնելից Կարմիր աստղի շքանշանով, իսկ Բեռլինի ճակատամարտին ակտիվ մասնակցելու համար՝ երկրորդ մեդալով:

1942 թ. օգոստոսին Թբիլիսիի սնալպերական ուսումնարանի սաներ՝ կոմերիտուհիներ Օլգա Անանյանը (Հայաստանից), Անյա Կարապետյանը (Հյուսիսային Կովկասից) և Նինա Օսիպովան (Բաքվից) մեկնեցին ռազմաճակատ:

Թեժ կռիվներ էին մղվում Տաղանթոգից 20 կիլոմետր հյուսիս-արևմուտք: Մարտական դիրքեր էր գրավել նաև այն ղորամասը, որի շարքերում էին Օլգան, Անյան և Նինան: Հակառակորդը ճգնում էր խուճապի մատնել և շրջապատել մեր ուժերին: Ծանր ժամեր էր ասլորում ղորամասը:

Թշնամու խաչաձև և ուժեղ կրակի տակ սնալպերուհի Անյան, սողալով, հասնում է առաջավոր դիրքերը և ձեռքի նրանակները նետում թշնամու առաջացող տանկերի վրա: Դիպուկ կրակից բոցավառվում է թշնամու տանկը: Սակայն թշնամու արկի բեկորը խլում է Անյա Կարապետյանի կյանքը:

Հայրենական պատերազմի ռազմաճակատներում կռիւղ հայ ժողովրդի անվախ դուստրերից է կամավոր ռազմաճակատ մեկնած, Կարմիր աստղի շքանշանակիր Նինա Մուրադյանը: Նա մասնակցել է Կուբանի ազատագրմանը և իր զինակիցների հետ ոչնչացրել մեծ թվով հիտլերականներ:

1942 թ. ամռանը սովետական մարտիկները ծանր կռիվներ էին մղում Կուբանում, Տուապսե-Նովորոսիյսկ հատվածում: Այդ մարտերին հայկական 408-րդ հրաձգային դիվիզիայի անձնակազմում էր Երևանի Կրուպսկայայի անվան միջնակարգ դպրոցի շրջանավարտ Արաքսյա Հարությունյանը: Նովորոսիյսկի հատվածում տաս օրվա ընթացքում բժշկական ծառայության կրտսեր լեյտենանտ Ա. Հարությունյանը փրկեց մի քանի տասնյակ վիրավոր մարտիկների ու հրամանատարների կյանք: 1943 թ. սկզբներին, ռազմական ժամանակ, Արաքսյան վիրավորվում է: Ապաքինվելուց հետո նա նույն հոսպիտալում աշխատում է որպես բուժքույր: 1943 թ. վերջերին Հարությունյանն ընդունվում է հրամանատարական

դասընթացները, ավարտում այն, և կրտսեր լեյտենանտի կոչումով մեկնում ռազմաճակատ:

Գլարդիական հրաձգային № դիվիզիայի գումարտակի կոմերիտմիության կոմիտեի քարտուղար, լեյտենանտ Հարությունյանը մասնակցում է Չեխոսլովակիայի Մորավսկա-Օստրավա և Ժիլինա քաղաքների ազատագրման մարտերին: Ժիլինա քաղաքի մոտ, մարտերից մեկում սպանվում է ստորաբաժանման հրամանատարը: Լեյտենանտ Հարությունյանը հրամանատարությունը վերցնում է իր ձեռքը: Ստորաբաժանումը երեկոյան հարձակում է ձեռնարկում կարևոր նշանակություն ունեցող բարձունքի վրա: Ոչնչացնելով թշնամուն, մարտիկները առաջ են շարժվում և գրավում նաև մի ուրիշ կարևոր բարձունք: Հաջորդ օրը նրանք ետ են շարժվում թշնամու գրոհները և սովետական մյուս զորամասերի հետ միասին մասնակցում Ժիլինա քաղաքի ազատագրմանը: Այդ ժամանակ ցուցաբերած խիզախության համար կոմունիստ, կրտսեր լեյտենանտ Հարությունյանն արժանացավ Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանի:

Արաքսյա Հարությունյանը մասնակցում է նաև Չեխոսլովակիայի Օլոմուոց, Բոգոմիլն, Ֆրիշտատ, Սկոչուվ, Չադցա, Ռուժոմբերոկ և այլ քաղաքների, ինչպես նաև Պրագայի ազատագրման մարտերին:

* * *

Կերչի ազատագրման մարտերում, ռազմա-օդային նավատորմի զորամասերի մարտաշարքերում էր նաև կանանց կարմըրադրոշ Թամանյան ավիացիոն լեգենդար գունդը, Սովետական Միության հերոս Մարիա Ռասկովայի հրամանատարությամբ: Նույն զնդում էր կամավոր ռազմաճակատ մեկնած, հայ ժողովրդի քաջասիրտ դուստր, օդաչու Ալեքսանդրա Օսմանյեան (Օսմանյանը): Նա սկզբում աշխատում էր որպես ավիացիոն մեխանիկ: Համառորեն սովորելով թռիչքային քարդ տեխնիկան, նա դառնում է օդաչու: Կոմերիտական օդա-

չուն առաջին մարտական մկրտությունն ստացաւ 1943 թ. նոյեմբերին, Կերչում, օդային կատաղի կռիւներում:

Այնուհետեւ խիզախ օդաչուներ Մարինա Չեչենեայի, Իրինա Ռակոբոլսկայայի, Գալինա Պոնոմտենկոյի և Վալյա Տիխոմիրովայի հետ Օսմանցեան մասնակցում է թշնամու օդային ուժերի ոչնչացմանը Գոմել, Մինսկ, Քյոնիգսբերգ և Բեռլին քաղաքների վրա տեղի ունեցած օդային կռիւներում: Բարձր գնահատելով օդաչու Օսմանցեայի մարտական ծառայությունները, հրամանատարութիւնը նրա կուրծքը զարդարել է Կարմիր աստղի, Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշաններով, Կովկասի պաշտպանության և Բեռլինի գրաւման համար մեդալներով:

Պատերազմի հաղթական ավարտից հետո օդաչուն վերադարձավ իր ծննդավայրը՝ Ստավրոպոլ, ավարտեց միջնակարգ դպրոցը, ապա մեկնեց Երևան՝ սովորելու Անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտում: Ինստիտուտը բարձր ցուցանիշներով ավարտեց 1958 թ.: Այժմ Օսմանցեան աշխատում է Ալեքսանդրովսկի անասնաբուժական տեխնիկումում որպէս դասատու:

1943 թ. նոյեմբերի 3-ին Կերչի թերակղզին իջած սովետական առաջին ղեկավարութիւնների մեջ էր նաև Մոսկվայի տեխնոլոգիական ինստիտուտի առաջին կուրսի ուսանողուհի, Լուվա դուստր Սոնյա Չիլինգարյանը: Չիլինգարյանը հայկական հրաձգային 89-րդ Թամանյան դիվիզիայում գնդացրային դասակի հրամանատար էր, մասնակցել է բազմաթիւ մարտերի, առանձնապէս աչքի է ընկել Թամանի ադատադերման ժամանակ: ...Առաջադրանքը բարդ էր ու դժվարին: Հակառակորդի զորամասերը ամրացել էին գիրքերում և ստեղծել կրակային ուժեղ կետեր: Գնասնտայինների կազմում կրկնող Չիլինգարյանի գնդացրային դասակին առաջադրանք տրվեց հակառակորդին դուրս շարտել Կերչի ճանապարհին գտնվող Վոյկովի անվան մետալուրգիական գործարանի շրջակայքից: Լեյտենանտ Չիլինգարյանի գլխավորութեամբ դասակը շարժվեց դեպի գործարան և նետվեց գրոհի: Գոր-

ծարանի կորսուսներին մեկում տեղի ունեցավ կարճատև, բայց համառ կռիվ: Քաջարի հրամանատարը զնդացրային կրակով անձամբ ոչնչացրեց հակառակորդի մի քանի կրակային կետ և շատ հիտլերականներ: Թշնամուն դուրս մղելով գործարանից, դասակը ամրացավ նոր դիրքերում:

1943 թ. դեկտեմբերին, Կերչի թերակղզու մի այլ հատվածում, կարևոր նշանակություն ունեցող բարձունքի գրավման համար կատաղի մարտ բորբոքվեց գրոհող դասակի և թշնամու միջև: Զախջախելով թշնամուն, դասակը ընդհուպ մոտեցավ բարձունքին, բայց ընկավ թշնամու ականանհատային կրակի տակ: Պայթած արկի բեկորից դասակի հրամանատար Զիլինգարյանը մահացու վերք ստացավ: Զիլինգարյանի մարտիկները շեշտակի գրոհով գրավեցին բարձունքը և վրեժ լուծեցին թշնամուց՝ սիրելի հրամանատարի համար:

Ուկրաինայի համար մղվող պայքարում հայ ժողովրդի զուստրերից աչքի ընկավ Երևանի Պոռչյանի անվան դպրոցի շրջանավարտ, կոմերիտուհի Անժելիկ Միքայելյանը: Նա մասնակցել է Լուգանսկ, Խարկով, Պոլտավա քաղաքների ազատագրմանը: Նա համարձակ և քաջ մարտիկի համբավ էր նվաճել և առաջադրանքները ճշտորեն կատարելու համար հրամանատարության կողմից պարգևատրվել անվանական զենքով:

Ռազմաճակատից մորն ուղարկած նամակում Միքայելյանը գրել է. «Մենք ուկրաինական հողում ենք: Ես այստեղ հրքեք չեմ եղել: Ուկրաինայի մասին միայն կարդացել եմ գրքերում, տեսել եմ կինոնկարներում, իսկ այժմ ես Ուկրաինայում եմ և ինձ թվում է, որ նա ինձ համար նույնքան հարազատ է, որքան իմ Հայաստանը»¹:

Միքայելյանը շուտով ստանում է սպայի կոչում, դառնում լավագույն հետախույզ և իր մարտական ընկերների հետ բազմիցս թափանցում հակառակորդի պաշտպանության գիծը՝ «լեզու» որսալու և ռազմական կարևոր տեղեկություններ բերելու համար:

¹ ՀՊՊԿ արխիվ, ֆ. 270, գ. 58, թ. 2:

Հայրենական սպառերազմի պատմության հերոսական տարեգրության մեջ պատվավոր տեղ է գրավում եռակի ջբանշանակիր, հայկական հրաձգային ՑԶ-րդ Թամանյան դիվիզիան, որը դաժան մարտերով Կովկասյան նախալեններից հասավ Բեռլին: Նրա շարքերում տղամարդ ռազմիկների կողքին կային նաև շատ հայուհիներ:

Հայկական Թամանյան դիվիզիայում թշնամու դեմ մարտնչել է սանիտարական ավագ հրահանգիչ, կոմերիտուհի Ռոզա Սարգսյանը: Նա ոչ միայն սանիտար էր և վիրավորներին բժշկական օգնություն ցույց տվող, այլև լավ հետախույզ և քաջ մարտիկ:

1943 թ. սկզբին կատաղի մարտեր էին գնում Հյուսիսային Կովկասի ազատագրման համար: Թշնամու տանկը շարժվում էր Սարգսյանի խրամատի ուղղությամբ: Խուսափել, թե մարտի բռնվել գաղանի հետ՝ մտածեց նա և անմիջապես սկսեց ստուգել իր մոտ եղած հակատանկային նռնակները, ընդունելով պատրաստ դրություն: Երբ թշնամու տանկը բավական մոտեցավ, Ռոզան հաջորդաբար արագորեն նետեց նռնակները: Տանկը շրջվեց և բոցավառվեց: Չկորցնելով իրեն, Ռոզան մարտի բռնվեց նաև մեքենայից դուրս թռած տանկիստի հետ և տեղն ու տեղը սպանեց նրան: Այդ մարտում Ռոզան վիրավորվեց: Հոսպիտալում բուժվելուց հետո նա վերադարձավ իր զորամասը: Այնուհետև Թամանյան դիվիզիայի շարքերում Ռոզա Սարգսյանը մասնակցել է Լեհաստանի ազատագրմանը, Օդերի ափին «Հայկական փոքր հող» պլացդարմի պաշտպանությանը և աչքի է ընկել գերմանական Կալիշ, Լանդսբերգ, Մեդերիտց, Շվիբուս, Յյուլիհաու, Ֆրանկֆուրտ (Օդերի վրա) քաղաքների գրավման մարտերում: Իսկ Բեռլինի համար մղվող հաղթական ճակատամարտում նա ավելի հարստացրեց իր մարտական հաշիվը, որի համար արժանացավ Գերագույն գլխավոր հրամանատարության շնորհակալագրերին և սլարգներին: Հայրենիքը Ռոզա Սարգսյանի կուրծքը զարգարել է Կարմիր դրոշի երկու, Կարմիր աստղի և

Փառքի 3-րդ աստիճանի շքանշաններով, Կովկասի պաշտպանության, Վարչավայի ազատագրման, Բեռլինի գրավման համար և այլ մեդալներով:

Նույն դիվիզիայի շարքերում փառավոր մարտական ուղի է անցել Լենինյան կոմերիտիության անդամ Հայկուշ Ավետյանը: Հայրենական պատերազմը սկսվելուն պես Հայկուշը մեկնում է սովետական բանակ: Ղրիմից հասել փ մինչև Գերմանիա, մասնակցել թշնամու վերջնական ջախջախմանը և սովետական ժողովրդի մեծ հաղթանակի բերկրանքը վայելել թշնամու մայրաքաղաքում:

1945 թ. փետրվարի 15-ին, գիշերը, թամանցիները Ֆրանկֆուրտի մոտ գետանցեցին Օդերը և նրա ձախ ափին ստեղծեցին ամուր պլացդարմ, որտեղ հայ մարտիկները երկու ամիս համառ ու արյունահեղ մարտեր մղեցին: Այդ հողակտորը ստացավ «Հայկական փոքր հող» անունը:

Հակառակորդը թե՛ օդից, թե՛ ցամաքից անընդհատ ուժեղացնում և զինակոծում էր պլացդարմը: Մի կատաղի ուժեղակոծությունից հետո ֆաշիստները մոտենում են պլացդարմի հատվածներից մեկին և կատաղի կռիվ բռնվում խրամատից դուրս եկած հայ մարտիկների հետ: Մայր Սիմոնյանի ղումարտակի մարտիկները քաջաբար դիմադրում էին իրենց մոտեցող թշնամու գերակշռող ուժերին: Այդ պահին զորամասի հրամանատարը նկատում է խրամատում քողարկված իր մարտիկներից մեկին: «Երեկ նռնակ չունի»,—մտածում է անհանգստացած հրամանատարը: Բայց, ահա, մի բռնական, տեղից վեր ցատկելով, մարտիկը արագորեն նռնակներ է նետում հակառակորդի վրա և նորից քողարկվում: Հրամանատարը հուզված հետևում է: Այդ քաջագործությունը նպաստեց կասեցնելու թշնամու առաջխաղացումը: Այնուհետև մեր գումարտակը, համադարկեր տալով, հակառակորդին ետ շարժեց իր ելման դիրքերը: Մարտից հետո հրամանատարը անձամբ այցելեց խիզախություն կատարած ռազմիկին: Այստեղ նա խիստ զարմացավ, իր առաջ տեսնելով կին-ռազմիկին: Դա Հայկուշ Ավետյանն էր:

Վերջին գրողներն էին գնում Բեռլինի համար, որտեղ փողոցային մարտերին մասնակցում էր նաև հայ ժողովրդի զուսար Հայկուշ Ավետյանը: Նա ռայխստագի պատին թողել է հետևյալ մակագրությունը. «Կարմիր բանակի շարքերում այստեղ հասավ հայունին և ռայխստագից դիտեց ծնկաչոֆ Բեռլինը»¹: Խիզախ մարտիկը պարզեատրվել է Կարմիր աստղի շքանշանով և Մարտական ծառայությունների համար մեդալով:

Բեռլինի գրավման մասնակից բազմաթիվ հայուհիներից է հայկական հրաձգային 89-րդ Թամանյան դիվիզիայի զենիթային նրջանիկ Ենոքյանը: Եղբորն ուղղած նամակում նա գրել է. «Նամակս գրում եմ Բեռլինից, այն քաղաքից, որի գրավման վերջին մարտերին մասնակցել եմ ես: Մենք մոռացել էինք քունն ու հանգիստը և սրընթաց հետապնդում էինք թշնամուն: ...Մարտերի ծանր օրերին հայրենի հողի կարոտն այրում էր մեր սիրտը, սակայն որքան խորն էինք զգում այդ կարոտը, այնքան ավելի ուժգին էինք հարվածում թշնամուն, որպեսզի շուտ վերադառնանք մեր հարազատների գիրկը: ...Քո բրոշ ձեռքը չէր զողում թշնամուն հարվածելիս: Մեր զենիթային հրանոթը վայր է գցել թշնամու շատ ինքնաթիռներ»²:

* * *

Բժշկա-սանիտարական անձնակազմը (ինչպես ռազմա-ճակատում, այնպես էլ թիկունքում), առողջապահության բնագավառի աշխատողները կարմիր բանակի վիրավոր ու հիվանդ ռազմիկների բուժմանը նվիրեցին իրենց բոլոր ուժերն ու գիտելիքները: Բարձր և միջին անձնակազմի հազարավոր բժշկական աշխատողներ խտացրին կարմիր բանակի շարքերը: Թշնամու կրակի տակ նրանք առաջին օգնություն էին ցույց տալիս վիրավոր մարտիկներին ու հրամանատարներին: Հոսպիտալներում, սանկայաններում, հիվանդանոցներում նրանք

1 «Լենինյան դրոշ», 23 ապրիլի 1946 թ.:

2 «Մարտ հանուն հայրենիքի», 5 հուլիսի 1945 թ.:

ուշինչ չէին խնայում մարտիկներին ու հրամանատարներին բռնաբերելու, նրանց մարտունակությունը վերականգնելու համար:

Հայաստանում կարմիր բանակի բժշկա-սանիտարական ծառայության մեջ ընդգրկված անձնակազմում կանայք զգալի թիվ էին կազմում: Նրանցից լավագույնները համալրեցին 390-րդ, 408-րդ, 409-րդ, 89-րդ, 76-րդ հայկական դիվիզիաների առանձին բժշկա-սանիտարական գումարտակներին, զնգերի և մյուս ստորաբաժանումների բժշկա-սանիտարական մասերը: Ռազմաճակատի առաջավոր գծում նրանք առաջին օգնություն էին ցույց տալիս սովետական վիրավոր ռազմիկներին:

Կամավոր ռազմաճակատ մեկնած առաջին անվեհեր բժշկական քույրերից էր քսանամյա կոմերիտուհի Գոհար Նաղարյանը, որը մինչ այդ նրեանի բժշկական ինստիտուտի ուսանող էր: 1941 թ. վերջին նա արդեն գտնվում էր գործող բանակում: Նահանջի դժվարին պայմաններում բժշկական ծառայության լեյտենանտ Նաղարյանը, չվհատվելով, լարելով բոլոր ուժերը, սողեսող մոտենում էր վիրավորներին, կապում նրանց վերքերը և արագորեն դուրս բերում կրակի գծից:

1941 թ. նոյեմբերին, Դոնի Ռոստովի շրջանում, դաժան մարտերից մեկում, Գոհարը կրակի տակ վիրակապում է 44 վիրավոր ռազմիկի և սանիտարների օգնությամբ նրանց տեղավորում մի կիսավեր խրճիթում: Կարճ ժառարից հետո թշնամին անցնում է նոր հարձակման և շրջապատում բնակավայրը: Նաղարյանը չի հուսահատվում: Գիշերը վրա հասնելուն պես, նա իր օգնականներով, վիրավոր մարտիկներին զգուշորեն դուրս է բերում խրճիթից և անվնաս հասցնում սանիտարական կայան: Մի այլ մարտում լեյտենանտ Նաղարյանը մարտագաշտում առաջին օգնություն է ցույց տալիս բազմաթիվ վիրավորների և կազմակերպում նրանց փոխադրումը սանկայան:

Անձնուրաց բժշկական քույրերից է Լենինականի Մայիսյան ապստամբության անվան տեքստիլ կոմբինատի բանվորուհի, գվարդիայի ավագ Գոհար Հարությունյանը: Հարու-

Թյունյանն ակտիվ կերպով մասնակցել է Լուգանսկի, Ռոստովի ազատագրման և Բեռլինի դրավման հերոսամարտերին: 1941 թ. նոյեմբերի վերջերին Դոնի Ռոստովի համար մղվող մարտերը գնալով կատաղի բնույթ էին ստանում: Հակառակորդին հաջողվում է ներխուժել քաղաք, նրա տարբեր կողմերից: Անհրաժեշտ էր բժշկական օգնություն ցույց տալ առաջին դժոժմ գտնվող վիրավորներին, բայց հակառակորդի ուժեղ կրակը արգելակում էր մոտենալ նրանց: Այդ վտանգավոր պայմաններում բժշկական քույր Հարությունյանը խնդրում է դիվիզիայի հրամանատարին թույլ տալ իրեն մեկնել առաջավոր դիրքերը: Երկու բժիշկների հետ նա մեկնում է ռազմադաշտ ու առաջին դժից դուրս բերում առսից ավելի ծանր վիրավոր:

Դեռևս Ուկրաինայում վարած նահանջի ծանր մարտերի ժամանակ, 1941 թ. սեպտեմբերին, անձնազոհ խիզախությամբ և արիության համար Գոհար Հարությունյանն արժանացել էր Մարտական ծառայությունների համար մեդալի: Նա պարգևատրված է նաև Կարմիր աստղի շքանշանով, Մարտական ծառայությունների համար երկրորդ մեդալով, ինչպես նաև Կովկասի, Ստալինգրադի պաշտպանության, Պրազայի ազատագրման և Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար մեդալներով:

Երևանի բժշկական տեխնիկումի ուսանող, կիրովաբադցի Լուսյա Շահինյանը գերազանց ցուցանիշներով հանձնում էր ավարտական քննությունները, երբ սկսվեց Հայրենական պատերազմը: Ժամանակավորապես հրաժարվելով ինստիտուտ ընդունվելուց, նա կամավոր համալրում է 396-րդ հրաձգային դիվիզիայի շարքերը և որպես սանիտարական գրուժինայի հրամանատար, 1941 թ. նոյեմբերին, արդեն 824-րդ գնդի շարքերում, մասնակցում Դոնի Ռոստովի մոտ տեղի ունեցող ծանր մարտերին: Շահինյանը պայթող ականների տարափի տակ նետվում էր ամենավտանգավոր տեղերը, բժշկական առաջին օգնություն ցույց տալիս մարտիկներին, կազմակերպում կրակի առաջին դժից նրանց դուրս բերելու գործը: Մար-

տերից մեկում միայն մեկ օրվա ընթացքում Շահինյանը առաջին օգնություն ցույց տվեց տասնյակ վիրավոր ռազմիկներին և օգնեց նրանց փոխադրելու։ Այդ սխրագործության մասին ռազմաճակատային թերթը գրել է. «Շահինյանը 56 մարտիկի և մեկ հրամանատարի փրկեց մահից, կապելով նրանց վերքերը և դուրս բերելով թշնամու կրակի տակից։ Նա կոմերիտուհի է և մարտի մեջ գործում է որպես հայրենիքի հավատարիմ զուստր։ Վտանգելով իր կյանքը, նա փրկեց շատերի կյանքը»¹։

Մարտից հետո զորամասի կուսակազմակերպությունը նրան միաձայն ընդունեց կուսակցության շարքերը։ Իսկ հրամանատարությունը խիզախ հայուհուն ներկայացրեց բարձր սլարգևի՝ Լենինի շքանշանի։

1941 թ. Կերչի ուղղությամբ, Կարպաչյա գյուղի սլաշտպանության ծանր մարտերում, սանիտարական գրոսթինայի հրամանատար Շահինյանը նոր սխրանքներ է կատարում։ Ծանր վերք ստացած ուկրաինացի մի մարտիկի առնելով ուսին, նա անցնում է մի քանի կիլոմետր, վիրավորին հասցնում սանիտարական կետ և փրկում նրա կյանքը։ Այդ մասին վիրավոր մարտիկը պատմել է. «Մեզ գրոհի հրաման տրվեց։ Ես գտնվում էի առաջին շարքերում։ Հակառակորդը արճիճ էր թափում մեզ վրա։ Հաղթահարելով թշնամու կրակային պատենջը, մենք մոտեցանք նրա դիրքերին։ Գործը հասավ նոնակներին։ Տվե՛ք սրիկաներին, տվե՛ք, «ուռուս» էի գոռում ես, երբ միանգամից ընկա գետին։ Ինձ թվաց, թե երկու ոտքս էլ կոտրվեց, հետո մթնեցին աչքերս։ Ես զգացի տաք հեղուկի հոսելը մեջքիս և թևերիս վրա։ Մտածեցի, որ հիմա իմ վերջն է, արյունաքամ կլինեմ և կմեռնեմ։ Չգիտեմ ինչքան ժամանակ էր անցել, երբ սուր ցավից ուշքի եկա։ Մեկն ինձ քաշ էր տալիս սողեսող, թմբերի արանքով։ Մեր շուրջը պայթում էին ականները։ Իմ փրկիչը հոգնած կանգ առավ... Այդ րոպեին տեսա նրա դեմքը։ Սևահեր, թուխ աչքերով, փոքրահասակ մի աղջիկ էր։ Ես խղճի խայթ զգացի, դիտելով այդ փոքրիկ աղ-

¹ ՀՊՊԿ արխիվ, ֆ. 270, դ. 61ր, թ. 8։

ջըկա քրտնած դեմքը և հեռոցը: Ինչպես և ինչքան տեղ էր նա քաշ տվել կիսակենդան իմ ծանր մարմինը, այդ ևս չգիտեի: Կռահելով իմ մտքերը՝ նա ասաց.

— Ոչինչ, եղբայր, վերքդ վտանգավոր չէ, շուտով կհասնենք դաշտային հիվանդանոց...

...Մի քանի օր հետո ծանոթացա փոքրիկ հայուհու՝ իմ կյանքի փրկչի հետ: Եվ քանի ապրում եմ, չեմ մոռանա նրան՝ Լուսյա Շահինյանին, այդ իսկական հերոսուհուն¹:

Շահինյանը ոչ միայն հոգատար, անձնազոհ բուժքույր էր, այլև քաջ հետախույզ: Նա իր մարտական ընկերների հետ 1942 թ. ձմռանը, հրամանատարության հատուկ առաջադրանքով, մեկնում է թշնամու թիկունքը: Հասնելով նշանակված վայրը, նա մեծ զգուշությամբ ուսումնասիրում է հակառակորդի ամրությունները և հրդեհում զինամթերքի պահեստը: Այդ ժամանակ Լուսյան վիրավորվում է թշնամու գնդակից: Հաղթահարելով ցավն ու դժվարությունները, մարտական խնդիրը կատարած, նա վերադառնում է զորամաս: Բազմաթիվ սխրագործությունների և հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու համար սանիտարական դրուժինայի հրամանատար Շահինյանը ներկայացվում է նոր պարգևի:

Բժշկական ծառայության լեյտենանտ Օֆելիա Պետրոսյանը պատերազմի սկզբից իր սանիտարական դասակով ակտիվորեն մասնակցում է Կովկասի հերոսական պաշտպանությանը: 6-րդ ռազմա-օդային բանակի կազմում նա մասնակցում է Դոնի-Ռոստովի ազատագրման համար մղվող մարտերին և թեժ կռիվներից մեկում վիրավորվում: Ապաքինվելուց հետո, 1942 թ. սկզբին, նա նշանակվում է 409-րդ հայկական հրաձգային դիվիզիայի սանիտարական դասակի հրամանատար և նրա շարքերում մարտական փառավոր ուղի անցնում:

1942 թ. դեկտեմբերին Թերեք գետի ձախ ափին, Մոզդուկի մոտ, սովետական զորամասերի շարքերում 409-րդ հայկական

¹ Հողիկ արխիվ, ֆ. 270, դ. 61բ, թ. 14—15:

գիվիդիան նույնպես անցավ հարձակման: Զոհեր շատ կային: Օֆելիան մարտի թեժ պահին, կրակի տակ, վիրավորներին առաջին օգնություն ցույց տալու համար, սողալով մոտենում է առաջին դծին: Հակառակորդը նկատելով նրան, զնդացրային ուժեղ կրակ է բացում: Սովետական մարտիկներն իրենց կրակով պաշտպանում են Օֆելիային: Հասնելով վիրավոր ռազմիկին, նա առաջին օգնություն է ցույց տալիս և, վերցնելով իր ուսին, հասցնում է ապահով տեղ: Այդ օրը Պետրոսյանը սանիտարների հետ միասին, ռմբակոծության տակ խրամատից խրամատ անցնելով, դիրքերից դուրս է բերում ավելի քան 50 վիրավոր ռազմիկ: Պետրոսյանը կուսակցության շարքերն ընդունվելու մասին իր դիմումում գրել է. «Ուզում եմ գերմանական ֆաշիստների դեմ մարտնչել որպես կուսակցության անդամ»: Երկու օր հետո, մարտական պայմաններում, Օֆելիան ընդունվում է կոմունիստական կուսակցության շարքերը:

Բժշկական ծառայության լեյտենանտ Պետրոսյանը անձնուրաց ծառայություններով աչքի ընկավ նաև Դնեպրի անցման ժամանակ: Դա 1943 թ. աշնանն էր: Մի խումբ հերոսների հետ լայնահուն Դնեպրի աջ ափն անցավ նաև Պետրոսյանը: Նրանք ստեղծեցին փոքրիկ հենակետ: Շուտով մոտակա գյուղում դաժան մարտեր բորբոքվեցին: Օֆելիան շարժվում էր առաջապահ ջոկատի շարքերում: Գյուղի համար մղվող փողոցային մարտերի ժամանակ նա կրակի տակից դուրս է բերում 22 վիրավոր, որի համար պարգևատրվում է Կարմիր աստղի շքանշանով:

Կռիվոյ Ռոգի մոտ, Բատիլման գյուղի համար մղվող կռվում Պետրոսյանն իր սանիտարական դասակի օգնությամբ մարտադաշտից դուրս է բերում ևս 35 վիրավոր ռազմիկ:

Կիրովոգրադի մարզի ազատագրումից հետո Կիրովոգրադյան անվանակոչման արժանացած գիվիդիայի մարտիկների մի սլատգամավորություն 1944 թ. հունվարին մեկնում է Հայաստան, ղեկուցելու հայ ժողովրդին նրա զավակների սխրագործությունների մասին: Պատգամավորության կազ-

մում էր նաև բժշկական ծառայության լեյտենանտ, կոմունիստական կուսակցության անդամ Օֆելիա Պետրոսյանը: Հաստատանի աշխատավորությունը զրկաբաց ընդունեց իր քաջարի դավալեններին:

Պատգամավորությունը 1944 թ. փետրվարի 19-ին վերադարձավ ռազմաճակատ: Ոգեշնչված հայ ժողովրդի առաջադրանքով, 409-րդ դիվիզիայի ռազմիկները 1944 թ. մայիսի 25-ին ռումինական Յասսի քաղաքի համար մղված մարտերում փայլուն հաջողությունների հասան: Այստեղ Պետրոսյանը ծանր վիրավորվում է և մեկնում բուժվելու: Բարձր գնահատելով Պետրոսյանի ծառայությունները, հրամանատարությունը նրան պարգևատրում է Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշանով: Նա պարգևատրվել է նաև Կովկասի պաշտպանության համար և այլ մեդալներով:

Մոսկվայի տակ ջախջախիչ հարված ստանալուց հետո, հակառակորդը 1942 թ. ամռանը հարձակվեց ռազմաճակատի հարավ-արևելյան մասում, առաջ շարժվելով դեպի Ստալինգրադ և Կովկաս:

Ռուսական մայր գետի՝ Վոլգայի անառիկ ամրոցի պաշտպանությանը մասնակցում էին նաև բազմաթիվ հայ ռազմիկներ, կանայք ու աղջիկներ: Հայրենիքի խիզախ դուստրերից է կոմերիտուհի Ասյա Քեկեջյանը: Ասյան տասնյոթ տարեկան էր, երբ մեկնեց ռազմաճակատ, իբրև սանիտարական հրահանգչուհի: Առաջին մարտական մկրտությունը նա ստացավ 1942 թ. հուլիսի 23-ին, խարկովի մարզի Վելիկոբուրլուցկի շրջանի «Սերիյար» սովխոզի ազատագրման ժամանակ: Այստեղ նա վիրավորվում է ազդրից: Հաղթահարելով սուր ցավերը, նա չի հեռանում մարտադաշտից և այդ վիճակում առաջին օգնություն է ցույց տալիս 14 վիրավոր մարտիկի ու հրամանատարի: Մարտի թեժ պահին Ասյան նկատում է, որ շարքից դուրս է եկել հրանոթի անձնակազմի մարտիկներից մեկը: Առանց վարանելու նա օգնության է հասնում, սկսում արկեր մատակարարել ականաձիգ մարտիկին: Հրանոթի ակտիվ կրակը թշնամուն ետ է շարժում: Այս քաջագործության համար

Քեկեջյանը պարգևատրվում է հիդախության համար մեդալով: Նույն գվարդիական հրետանային գնդում Ասյան, արդեն մարտական փորձառությամբ, մասնակցում է Ստալինգրադի հակատամարտին: Այդ մարտերում աչքի ընկնող ծառայությունների համար գնդի հրամանատարությունը Ասյա Քեկեջյանին պարգևատրել է Մարտական ծառայությունների համար և Ստալինգրադի պաշտպանության համար մեդալներով: Այնուհետև նա գվարդիական հրետանային գնդի կազմում, 1943 թ. հուլիսի 5-ից մինչև 10-ը, մասնակցել է Յուլու-Կուրսկի ահեղ ճակատամարտին: Ռազմադաշտից Քեկեջյանը դուրս է բերում 23 վիրավոր մարտիկի և հրամանատարի: Մի կատաղի մարտում Ասյան նկատում է երկու սովետական այրվող տանկ: Արհամարհելով մահը, նա նետվում է դեպի տանկերը, բարձրանում նրանց վրա և ազատում ծանր վիրավոր ութ տանկիստի: Այս սխրագործության համար Ասյան պարգևատրվում է Կարմիր աստղի շքանշանով:

Կոմերիտուհի Քեկեջյանը ռազմաճակատում ընդունվում է ՍՄԿԿ շարքերը:

1943 թ. հունվարի 21-ին գվարդիական հրետանային գնդի հրամանատարությունը Քեկեջյանի մասին ՀԿԿ Կենտրոնական կոմիտեին գրել է. «Մենք հպարտանում ենք թշնամու դեմ քաջաբար մարտնչող սովետական ժողովրդի անվախ դուստրով»¹:

Ստալինգրադի հերոս պաշտպանների շարքերում էր սանիտարական հրահանգչուհի Ասյա Կարապետյանը: Իր մարտական ընկերների հետ նա ռազմաճակատի առաջին գծում օդանավային էր ցույց տալիս վիրավոր մարտիկներին, կրակի տակից հանում, քույրական ջերմ հոգատարությամբ փաթաթում վերքերը, խնամում նրանց: Կարապետյանը պարգևատրվել է Կարմիր աստղի շքանշանով, Մարտական ծառայությունների, հիդախության համար և Ստալինգրադի պաշտպանության համար մեդալներով:

1 ՀՊՊԿ արխիվ, ֆ. 270, գ. 78, թ. 1:

թյանը: Կատաղի կրակի տակ նա առաջին օգնություն է ցույց տալիս մարտիկներին: Այստեղ նա երկրորդ անգամ ծանր վիրավորվում է և ալլևա չի կարողանում վերադառնալ մարտադաշտ: Բարձր գնահատելով իր քաջասիրտ դատեր ծառայությունները, հայրենիքը նրա կուրծքը զարդարել է Կարմիր դրոշի, Կարմիր աստղի, Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշաններով և բազմաթիվ մեդալներով:

1944 թ. գարնանը Սեաստոպոլ քաղաքի ազատագրման մարտերին մասնակցում էին մեր հայրենիքի բազմազգ ժողովուրդների զավակները: Նրանց թվում էր նաև 18-ամյա կոմերիտուհի Լուսիկ Ասլանյանը: Հակառակորդի կրակի տակ, գիշերվա խավարին, նա առաջավոր դիրքերն էր հասցնում փամփուշտներ, ձեռքի նռնակներ, անհրաժեշտության դեպքում առաջին օգնություն էր ցույց տալիս վիրավոր մարտիկներին:

Մարտերից մեկի ժամանակ, վեցերորդ վիրավորին օգնություն ցույց տալու պահին, թշնամու գնդակը մահացու հարվածում է նրան, կտրում անձնվեր հայրենաձիրուհու կյանքի թելը:

Պատերազմի սկզբից Լենինգրադի մատուցներում մարտական գործողությունների մեջ մտան սովետական զորամասերը, աշխարհազորայիները, քաղաքի ողջ ազգաբնակչությունը: Հոկտեմբերյան հեղափոխության օրրանի համար սկսվեց զրկանքներով, տառապանքներով և դժվարություններով լի մի շրջան:

Լենինգրադի հերոսական պաշտպանությունը մասնակցում էին նաև արևավառ Հայաստանի տասնյակ դուստրեր: Իրենց սխրանքներով աչքի ընկան բժշկական ծառայության լեյտենանտներ Սոֆիա և Ռուզաննա Լալայան քույրերը, բժշկական ծառայության ավագ լեյտենանտ Աստղիկ Սանոյանը, Կառյա Չմշկյանը, բժշկական ծառայության կապիտան Լենա Բուռնաղյանը և ուրիշներ:

ՀամԼԿԵՄ անդամներ Սոֆիա և Ռուզաննա Լալայանները 1941 թ. հունիսին, լավագույն ցուցանիշներով ավարտելով

թյանը: Կատաղի կրակի տակ նա առաջին օգնություն է ցույց տալիս մարտիկներին: Այստեղ նա երկրորդ անգամ ծանր վիրավորվում է և այլևս չի կարողանում վերադառնալ մարտադաշտ: Բարձր գնահատելով իր քաջասիրտ դատեր ծառայությունները, հայրենիքը նրա կուրծքը զարդարել է Կարմիր դրոշի, Կարմիր աստղի, Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշաններով և բազմաթիվ մեդալներով:

1944 թ. գարնանը Սևաստոպոլ քաղաքի ազատագրման մարտերին մասնակցում էին մեր հայրենիքի բազմազգ ժողովուրդների զավակները: Նրանց թվում էր նաև 18-ամյա կոմերիտուհի Լուսիկ Ասլանյանը: Հակառակորդի կրակի տակ, գիշերվա խավարին, նա առաջավոր դիրքերն էր հասցնում փամփուշտներ, ձեռքի նռնակներ, անհրաժեշտության դեպքում առաջին օգնություն էր ցույց տալիս վիրավոր մարտիկներին:

Մարտերից մեկի ժամանակ, վեցերորդ վիրավորին օգնություն ցույց տալու պահին, թշնամու գնդակը մահացու հարվածում է նրան, կտրում անձնվեր հայրենասիրուհու կյանքի թելը:

Պատերազմի սկզբից Լենինգրադի մատուցներում մարտական գործողությունների մեջ մտան սովետական զորամասերը, աշխարհազորայիները, քաղաքի ողջ ազգաբնակչությունը: Հոկտեմբերյան հեղափոխության օրրանի համար սկսվեց զրկանքներով, տառապանքներով և դժվարություններով լի մի շրջան:

Լենինգրադի հերոսական պաշտպանությունը մասնակցում էին նաև արևափառ Հայաստանի տասնյակ դուստրեր: Իրենց սիրանքներով աչքի բնկան բժշկական ծառայության լեյտենանտներ Սոֆիա և Ռուզաննա Լալայան քույրերը, բժշկական ծառայության ավագ լեյտենանտ Աստղիկ Սանոյանը, Կատյա Չմշկյանը, բժշկական ծառայության կապիտան Լենա Բուռնադյանը և ուրիշներ:

ՀամԼԿԵՄ անդամներ Սոֆիա և Ռուզաննա Լալայանները 1941 թ. հունիսին, լավագույն ցուցանիշներով ավարտելով

Լենինգրադի բժշկական ինստիտուտը, պատրաստվում էին մեկնել աշխատանքի, երբ սկսվեց Հայրենական պատերազմը:

Լալայան քույրերը դիմեցին Լենինգրադի ռազմական կոմիսարին, իրենց ուղարկելու ռազմաճակատ: Նրանք ստացան բժշկական ծառայության ավագ լեյտենանտի կոչում և նշանակվեցին զինվորական բժիշկներ՝ Լենինգրադը պաշտպանող հրաձգային գնդերից մեկի սանիտարական գումարտակում: Նովգորոդի ուղղությամբ, ռազմաճակատի գծին մոտենալու ժամանակ, գունդը ենթարկվում է ռմբակոծության: Լալայան քույրերը և բուժքույր Վերա Յակովլևան Պրիգոլսկ կայարանի շրջանի բնակիչներից ձեռք են բերում սայլեր և հակառակորդի ուժեղ ռմբակոծության տակ վիրավոր մարտիկներին տեղափոխում հոսպիտալ:

Գերմանական զորքերը մտնում են Պետերգոֆ և Լենինգրադի շրջակա գյուղերը: Մի խումբ ընկերների հետ Ռուզաննա Լալայանը ընկնում է շրջապատման մեջ, սակայն նրանց հաջողվում է անվնաս դուրս գալ թշնամու օղակից:

Ռուզաննան նույն սանմասում էր, ապա 189-րդ դիվիզիայի 100-րդ բժշկա-սանիտարական գումարտակում: Նա աշխատում է որպես վիրաբույժ, տաս օրվա ընթացքում մարտական դժվարին պայմաններում կատարում է ավելի քան 100 վիրահատություն:

1942 թ. սեպտեմբերյան մի օր, բժշկական ծառայության լեյտենանտ Ռուզաննա Լալայանը ղեկավարող խումատում վիրահատություն էր կատարում, երբ ներս են բերում ծանր վիրավոր Նիկոլայ Բոնդարևին: Նախքան վիրահատելը, անհրաժեշտ էր նրան ուշքի բերել: Ռուզաննան իրենից վերցնում է 150 գրամ արյուն, ներարկում Նիկոլային, նրան ուշքի բերում և սկսում վիրահատությունը:

1942 թ. սեպտեմբերին Ռուզաննա Լալայանը արժանանում է Մարտական ծառայությունների համար, իսկ նույն թվականի դեկտեմբերին՝ Լենինգրադի պաշտպանության համար մեդալների:

1943 թ. Լալայան քույրերը ընդունվում են կոմունիստական կուսակցության շարքերը: «Խնդրում եմ ինձ ընդունել կուսակցության շարքերը: Ցանկանում եմ մեռնել իբրև կոմունիստ», — գրել է իր դիմումում Ռուզաննա Լալայանը:

Ռուզաննա և Սոֆիա Լալայանները բժշկական օգնության հասան Պուլկովոյի, Շլիսսելբուրգի տակ, Ռազլիլում, Ուրիցկում, Ստարայա Ռուսսայում և Նլգավայի (Միտավա) մարտերում վիրավորված բազմաթիվ մարտիկների: Ռուզաննան պարզեցատրվում է Կարմիր աստղի, Սոֆիան՝ Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշանով և Լենինգրադի պաշտպանության համար մեդալով: 156-րդ բժշկա-սանիտարական գումարտակի բժշկական վաշտի հրամանատար, երկրորդ կարգի զինվորական բժիշկ Բենենսովը Սոֆիա Լալայանի բնութագրում գրել է.

«...Երրորդ կարգի զինվորական բժիշկ Սոֆիա Լենին Լալայանը ծառայության ընթացքում իրեն դրսևորել է որպես բարեխիղճ և զործիմաց վիրաբույժ: Նա վիրահատության է ենթարկել 153 միջին և թեթև ծանրության վիրավորի: Նա մեծ հեղինակություն է վայելում բժշկա-սանիտարական գումարտակում»¹:

1944 թ. փետրվարին Լուզովոյի մոտ, վիրահատության սեղանի առաջ, մարտական պոստում հերոսաբար զոհվեց հայրենիքի քաջ դուստր Սոֆիա Լալայանը: Կորցնելով քրոջը, լցված անսահման վրեժով, Ռուզաննան շարունակում է իր անձնվեր աշխատանքը մինչև Հայրենական պատերազմի հաղթական ավարտը: 42-րդ բանակի նախկին գլխավոր վիրաբույժ, պրոֆեսոր Ի. Ս. Բելաբորը 1947 թ. հոկտեմբերի 10-ին Ռուզաննա Լալայանին գրած նամակում հայտնում է, որ «1947 թ. մարտին վիրաբույժների ընկերությունում կարգացած իր զեկուցման մեջ հիշատակել է ռադմաճակատում աչքի ընկած անվանի վիրաբույժներին: Հիշատակեցի նաև ձեզ և ձեր զոհված քրոջը՝ Սոֆիային, որին ես լավ եմ հիշում և միշտ վերհիշում նրա հերոսական մահը իր պոստում»:

¹ ՀՊՊԿ արխիվ, ֆ. 270, գ. 24, թ. 1:

1946 թ. բժշկական ծառայության լեյտենանտ Ռուզաննա Հալաչյանը զորացրվում է սովետական բանակից: Այժմ բժշկական գիտությունների թեկնածու Հալաչյանը աշխատում է Երևանի տրավմատոլոգիայի և օրթոպեդիայի գիտահետազոտական ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող:

Հայկական 89-րդ հրաձգային դիվիզիայի շարքերում փառավոր մարտական ուղի է անցել Երևանի պետական համալսարանի ուսանողուհի, բժշկական ծառայության ավագ լեյտենանտ էմմա Հայրապետյանը: Նա Կովկասյան նախալեռներից մարտերով հասել է Բեռլին և տուն վերադարձել հաղթանակով: Շատ գիշերներ է անցկացրել էմման ծանր վիրավորների կյանքը փրկելու համար: Մանր էր արյունաքամված ավագ լեյտենանտ Սամոխվալովի դրոթյունը: Նա իր արյունից ներարկելով, փրկում է նրա կյանքը: Երախտապարտ լեյտենանտը էմմային ուղղված նամակում գրել է. «Իմ սիրելի հարազատ քույր էմմա ջան, ես առողջացել եմ: Չնայած կորցրել եմ ոտքս, բայց կենդանի եմ քո շնորհիվ: Իմ ընտանիքով երախտապարտ ենք Ձեզ, սրտանց ցանկանում ենք Ձեզ երջանիկ կյանք»:

Էմմայի հոգատար վերաբերմունքի շնորհիվ շարք վերադարձան Ն. Շահվերդյանը, Հ. Շատվորյանը, Ս. Հովհաննիսյանը, Օ. Խաչատրյանը, Օ. Խառատյանը:

Է. Հայրապետյանը պարգևատրվել է Մարտական ծառայությունների, Խիզախության, Վարչավայի ազատագրման և Գերմանիայի դեմ հաղթանակի համար մեդալներով:

Նույն դիվիզիայի 400-րդ հրաձգային գնդի երրորդ գումարտակում է ծառայել սանիտարական դասակի հրամանատար Մարուսյա Հեքիմյանը: 89-րդ հայկական հրաձգային դիվիզիայի շարքերում նա մասնակցել է Կուբանի, Թամանի, Կերչի, Ղրիմի, Լեհաստանի ազատագրմանը և գերմանական ֆաշիզմի ջախջախման վերջին մարտերին:

1944 թ. օգոստոսին հայկական Թամանյան դիվիզիան անցնելով Բուգ գետը, կենտրոնացել էր լեհական Լյուբլին քաղաքի շրջանում: Զորամասերին առաջադրանք էր տրված

շարժվել դեպի Վիսլա և պաշտպանական դիրքեր գրավել նրա ձախ ափին: Դիվիզիայի հրետանավորները 1945 թ. հունվարի 2-ին մասնակցեցին այդ առաջադրանքի կատարմանը: Նրանց հետ էր նաև բժշկական ծառայության լիտենանտ Մարուսյա Հեքիմյանը:

Վիսլայի ձախ ափին, հրանոթների խլացուցիչ համազարկերի, մոլեգնող մարտերի բովում Հեքիմյանը աներկյուղ կատարում էր իր գործը: Այստեղ նա կրակի դժից դուրս բերեց 24 վիրավոր:

Վիրավորներին ժամանակին բժշկական առաջին օգնություն ցույց տալուց և նրանց հետագա բուժմանը հետևելուց բացի, Հեքիմյանը ռազմամթերք էր հասցնում հրետանավորներին, որի համար պարգևատրվում է Կարմիր աստղի շքանշանով:

1945 թ. փետրվարի սկզբին Թամանյան դիվիզիան հաղթական մարտերով հասավ Գերմանիա և մարտական առաջադրանք ստացավ անցնել Օդեր գետը և նրա ձախ ափին ստեղծել պաշտպանության հենակետ: Առաջադրանքը հաջող կերպով կատարեցին հայ թամանցիները:

Փետրվարի 16-ին թշնամին ուժեղ հարձակում սկսեց դիվիզիայի դորամասերի վրա: Նրա բոլոր գործները ետ շարժարվեցին: Թշնամին չկարողացավ մոտենալ հենակետին:

Հեքիմյանը առաջադրանք է ստանում պատրաստվել ընդունելու վիրավորներին: Չորս կողմը պայթող ականների, տեղատարափ հրաձգության և օդային ռմբակոծության տակ նա վիրավոր մարտիկներին բժշկական օգնություն է ցույց տալիս և տեղափոխում թիկունք:

Փետրվարի 17-ին Հեքիմյանը նոր, ավելի դժվարին առաջադրանք ստացավ՝ շարժվող դորամասերի հետ անցնել Օդեր գետի ձախ ափը և այնտեղ կազմակերպել բժշկական օգնություն գործը: Անցումը չափազանց դժվար էր: Թշնամին բոլոր ճիգերը դործադրում էր պահելու իր դիրքերը: Մարուսյան գետափին հանդիպում է երեք ռուս մարտիկի, որոնք կարևոր առաջադրանքով պետք է մեկուկտվ անցնեին գետը: Նա

Ֆանդրում է իրեն էլ վերցնել: Սակայն մարտիկները մերժում
են: Երբ նավակը հեռանում էր ափից, Մարուսյան իրեն նե-
ստում է գետը՝ լողալով անցնելու: Այս անգամ մարտիկները
ստիպված են լինում նրան վերցնել իրենց հետ: Թշնամին
սկսում է կրակել նավակի վրա, սակայն մարտիկները, նրանց
հետ և Մարուսյան, պաշտպանվելով բարեհաջող, հասնում են
գետի մյուս ափը: Այստեղ, մարտական ծանր պայմաններում,
բժշկական ծառայության լեյտենանտ Մարուսյա Հեքիմյանը
խնամում և բուժում է տասնյակ վիրավորների: Նա մեծ սրի-
քագործություններ է կատարում նաև Բեռլինի ճակատամար-
տում և արժանանում գերազույն գլխավոր հրամանատարու-
թյան շնորհակալագրին և պարգևատրվում Կարմիր աստղի
երկրորդ շքանշանով:

Կարմիր աստղի շքանշանակիր, բժշկական ծառայության
կապիտան Լուսյա Ասրյանը Թամանյան հաչկական հրաձգա-
յին 89-րդ դիվիզիայի բժշկա-սանիտարական անձնակազմի
չավագույն սպաներից էր: Նա փրկել է տասնյակ վիրավոր-
ների կյանք:

Դիվիզիայի 400-րդ գնդի հրամանատար, փոխգնդապետ,
ծանր վիրավոր Դանիել Հակոբյանը բուժվում էր Ասրյանի
հոգատար հսկողության տակ: Զորամաս վերադառնալու օրը
փոխգնդապետը իր շնորհակալության առաջին խոսքն ուղղե-
լով Ասրյանին, գրել է. «Իմ թանկագին բույր Լուսյա, կանցնեն
պատերազմի այս ահեղ ու փոթորկալի օրերը, այն ժամանակ
մենք իրարից հեռու կլինենք մեր հարազատ օջախներում, մեր
ընտանիքների անդամների մոտ, բայց իմ հիշողության մեջ
միշտ կմնա Ձեր բարի դեմքը, երախտապարտ կմնամ Ձեզ,
հիշելով, որ Դուք օր ու գիշեր անքուն խնամք էիք տանում Ձեզ
անծանոթ մի սպայի փրկելու համար, հիշելով, որ գիտակցու-
թյունս կորցրած պահին սառը ջրի կաթիլները դուք էիք ցո-
ղում իմ շուրթերին: Հաջողություն և երկար տարիների կյանք
եմ ցանկանում Ձեզ»:

Թամանյան դիվիզիայի բժշկա-սանիտարական գումար-
տակում աչքի ընկնող ծառայություններ կատարեց նաև կոմե-

րիտուհի Լուսյա Աւագյանը: Դիրքից դիրք անցնելով նա օգնում էր վիրավոր ռազմիկներին: Մի մարտի ժամանակ վիրավորվում է շարքային Դարուբյանը և անօգնական: վիճակում երկար ժամանակ ընկած մնում թշնամու դիրքերի առջև: Խաշած և կրակը խանդարում էր մոտենալ վիրավորին: Աւագյանը, արհամարհելով մահը, գիշերը սողեսող մտնում է մարտադաշտ և դիակների մեջ գտնում Դարուբյանին, խնամքով կապում նրա վերքերը և մարտիկներ Ս. Սարգսյանի ու Կ. Հակոբյանի օգնությամբ դուրս բերում մարտադաշտից, փրկելով նրա կյանքը:

Վիրավորներին բժշկական օգնություն ցույց տալու համար ոչինչ չէին խնայում բժշկական ծառայության լեյտենանտ Լուսյա Իստամանյանը, բժշկական քույր Իսկուհի Հովհաննիսյանը, Հերմինե Կելեջյանը, Սիրանուշ Արևշատյանը, Գոհար Հովսեփյանը և ուրիշներ:

Բժշկական քույր Սիրանուշ Արևշատյանը անձնուրաց կերպով, խրամատից խրամատ անցնելով, առաջին օգնություն էր ցույց տալիս վիրավոր մարտիկներին: Թեթ մարտերից մեկի ժամանակ, հակառակորդի կրակի տակ նա վիրակապեց 17 ռազմիկի և նրանց դուրս բերեց կրակի գծից:

Շամշադինի շրջանի Նավուրի գյուղացի Գոհար Հովսեփյանը նախքան պատերազմը աշխատում էր որպես ուսուցչուհի: Մեկնելով ռազմաճակատ, նա դարձավ գթության քույր: Ստորաբաժանման հրամանատար, կապիտան Կոշևը Գոհարի ծնողներին ռազմաճակատից ուղարկած նամակում (1945 թ. մարտ) գրել է. «Մեր մարտիկներն ու հրամանատարները հարգանքով ու համակրանքով են վերաբերվում իրենց սիրելի Գոհարին: Շամշադինցի այս աղջիկը զգայուն քույր է: Նրա ջերմ, հոգատար վերաբերմունքը թեթևացնում է նույնիսկ ամենածանր վիրավորի ցավերը: Ստորաբաժանման մեջ բոլորը գովեստով են խոսում Գոհարի մասին: Նվիրված ու բարեխիղճ աշխատանքի համար նա շատ անգամ արժանացել է շնորհակալության: Գոհարի ծնողները կարող են իրենց հպարտ զգալ,

որ հայրենիքի համար աճեցրել են այնպիսի դուստր, որին մարտիկները խիզախ աղջիկ են անվանում»¹:

Բազմաթիվ հայ բժշկուհիներ ծառայել են ռազմա-ծովային նավատորմում: Նրանցից են բժշկական ծառայության կապիտան Թամարա Ասլանյանը, բուժքույր Նլիզավետա Հովհաննիսյանը, Ասյա Յափունջյանը:

Թամարա Ասլանյանը կարմիր բանակում էր 1939 թ.: Նույն թվականին նա ընդունվում է ՍՄԿԿ շարքերը:

Ասլանյանն իր մարտական գործունեությունը սկսում է Սևծովյան նավատորմի մի ավիացիոն գումարտակում: Նա Սևաստոպոլի դուռնապանների շարքերում էր, որոնք աշխարհին զարմացրին իրենց տոկունությամբ ու հերոսությամբ: Սևաստոպոլի պաշտպանության մարտերում աչքի ընկնող ծառայությունների համար հրամանատարությունը Ասլանյանին ներկայացնում է կառավարական բարձր պարգևի: Նրա պարգևաթերթիկում գրված է. «Բժշկական ծառայության կապիտան Թամարա Արշակի Ասլանյանը ծառայել է Սևծովյան նավատորմի 12-րդ ավիացիոն բազայում, որը տեղավորված էր Սևաստոպոլ քաղաքում: Հայրենական պատերազմի սկզբից մինչև Սևաստոպոլի պաշտպանության վերջին օրերը... ընկ. Ասլանյանն իրեն ցույց է տվել որպես տոկուն, արի և սովետական հայրենիքին անսահմանորեն նվիրված հրամանատար... Մատչուշենկո և Կոստանտինովսկայա ծովախորշերի օդանավակայանների հրետանային զննակոծման և ուժեղացման ժամանակ նա առաջինն էր նետվում թշնամու չղաղարող կրակի մեջ, ռազմիկներին ցույց տալու անհրաժեշտ բժշկական օգնություն: Գերմանացիների կատաղի հարձակման օրերին Թամարա Ասլանյանը անմիջականորեն մասնակցել է 500 վիրավորների բժշկական օգնություն ցույց տալու, քաղաքի հյուսիսային մասից հարավ տեղափոխելու..., ինչպես նաև վիրավոր օդաչուներին Կովկաս էվակուացնելու գործին»²:

¹ «Շամշադինի կոլխոզնիկ», 8 մարտի 1945:

² ՀՊՊԿ արխիվ, ֆ. 270, դ. 65, թ. 1:

Բժշկական ծառայության կապիտան Ասլանյանը Սևաստոպոլ քաղաքի պաշտպանության ժամանակ ցուցաբերած անձնագույշ ծառայությունների համար պարգևատրվել է Հայրենական պատերազմի հրկրորդ աստիճանի շքանշանով և Մարտական ծառայությունների համար մեդալով:

Հայրենիքի առաջին իսկ կոշով բժշկական քույր Ելիզավետա Հովհաննիսյանը մեկնեց սովետական բանակ և ծառայության անցավ ռազմա-ծովային նավատորմում:

Ելիզավետան որպես բժշկական քույր «Կոտովսկի» և «Լվով» սանիտարական նավերում հանդես է բերում անձնուրաց գործունեությոն: Վերոհիշյալ նավերով 36 անգամ ուղեվորություն է կատարում՝ Օդեսայից, Սևաստոպոլից, Կամիշ-Բուրունից, Կերչից, վիրավորներ տեղափոխելով դեպի թիկունք:

Վիրավորների տեղափոխումը կատարվում էր դժվարին պայմաններում: Խախտելով միջազգային կարմիր խաչի օրենքները, ֆաշիստները ոմբակոծում էին նավերը:

1941 թվականի օգոստոսի 13-ին Սկանդովսկ-Օդեսա հանապարհին «Կոտովսկի» սանիտարական նավը ենթարկվեց ֆաշիստական ինքնաթիռների ոմբակոծմանը: Նրանք ոմբակոծում էին անդեն, անսպաշտպան հիվանդանոցային նավը, Բժշկական քույր Հովհաննիսյանը աչալուրջ հետևում էր տախտակամածի վրա տեղի ունեցող դեպքերին և ժամանակին օգնություն ցույց տալիս վիրավորներին: Ամբողջ նավարկության ժամանակ, ոմբակոծության ժանր պայմաններում, Հովհաննիսյանը 200 վիրակապում է կատարում և 2000 վիրավորի ուղեկցում թիկունք¹:

Անձնվեր աշխատանքի համար հրամանատարությունը Հովհաննիսյանին պարգևատրել է Մարտական ծառայությունների համար մեդալով: 1942 թվականի հունիսին Սևաստոպոլում, առաջադրանքը կատարելիս, Ելիզավետա Հովհաննիսյանը զոհվեց քաջի մահով:

1 ՀՊՊԿ արխիվ, ֆ. 270, գ. 66, էջ 3:

1942 թվականի հոկտեմբերին թշնամին խցկվել էր Կուլկասի նախալեռները: Այդ ահեղ օրերին բժշկական գիտությունների թեկնածու, բժշկական ծառայություն մայոր Ռոզա Զանջուտովան նշանակվում է № 4279 դաշտային ինֆեկցիոն հոսպիտալի պետ: Նրա ղեկավարած հոսպիտալը 46-րդ բանակի կազմում Կուլկասյան նախալեռներից հասել է մինչև Չեսոսլովակիա:

Պատերազմի ծանր օրերին հոսպիտալի կազմակերպման ու ղեկավարման գործում կոմունիստ Զանջուտովան հանդես է բերում ուժեղ կամք, կազմակերպական մեծ ունակություն: Բժշկա-սանիտարական անձնակազմի անբասիր աշխատանքի շնորհիվ հոսպիտալը դառնում է օրինակելի: Այդ մասին է վկայում 1943 թվականի մարտի 2-ին 46-րդ բանակի սանիտարական բաժնի պետ, առաջին կարգի ղինվորական բժիշկ Զեպելեի տված բնութագիրը, որտեղ գրված է. «Զինվորական երկրորդ կարգի բժիշկ Ռ. Ս. Զանջուտովան աշխատելով որպես № 4279 սուրվարակիչ հիվանդությունների հոսպիտալի պետ, հոսպիտալի տեղափոխման և նրա աշխատանքների ծավալման ընթացքում ցուցաբերել է բացառիկ ունակություն, հիանալի կազմակերպչական ընդունակություններ և ճկուն օպերատիվություն: Նա արագորեն վերակառուցել է հոսպիտալը և հմտորեն կազմակերպել վիրավորների ընդունումն ու նրանց բուժման գործը: Նրա համար չկար գիշեր ու ցերեկ, դադար չէր առնում մինչև վիրավորների համար առավելագույն պայմաններ չէին ստեղծվում»¹:

Ռազմաճակատում Ռոզա Զանջուտովան սլեքի ընկավ ոչ միայն որպես լավագույն կազմակերպիչ, այլ իբրև հմուտ բժիշկ:

Մեր հարվածների տակ նահանջող հիտլերականները մարդկանց մեծ կուտակումների շրջանում թողնում էին վարակիչ հիվանդությունների օջախներ: Բժշկական անձնակազմից պահանջվում էր հատուկ զգոնություն և անխոնջ

1 ՀՊԳԿ արխիվ, ֆ. 270, դ. 93, թ. 1:

աշխատանք: Ռոզա Զանջուտովայի գլխավորած հոսպիտալի բժշկական անձնակազմի համառ աշխատանքի շնորհիվ կանխվում են վարակիչ հիվանդությունները և փրկվում մեծ թվով մարդկային կյանքեր: Այդ աշխատանքներում հոսպիտալի պետի մարտական օգնականներն էին բժշկական քույրեր, ազգությամբ ռուս ժիկովան և Կուշեշովան, բժշկական ծառայության մայոր, վրացուհի Մդիվանին, բժշկական քույր Երզրենկյանը, մոլդավուհի Պորտկոն, ադրբեջանուհի Աբասովան:

Հոսպիտալի աշխատանքները օրինակելիորեն ղեկավարելու համար բժշկական ծառայության մայոր Զանջուտովան պարգևատրվել է Կարմիր աստղի, Հայրենական պատերազմի հերոսի աստիճանի շքանշաններով ու մի շարք մեդալներով, իսկ մի շարք բաղաձայնի աղատագրման և զրավման ժամանակ վիրավոր մարտիկների բուժման գործը բարձր հիմքերի վրա դնելու համար Գերագույն գլխավոր հրամանատարության կողմից արժանացել է 18 շնորհակալագրերի:

Երևանի բժշկական ինստիտուտի ասպիրանտ, բժշկական ծառայության լեյտենանտ Շողիկ Պապոյանը 1943 թվականին մեկնեց ռազմաճակատ և 11-րդ բանակի № հրաձգային դիվիզիայի բժշկա-սանիտարական գումարտակում նշանակվեց վիրակալման բաժանմունքի օրդինատոր: Կռիվը կատաղի լինույթ էր կրում: Բժշկական անձնակազմը աշխատում էր չափազանց լարված: Երիտասարդ բժշկուհին վիրահատման սեղանից չէր հեռանում: Ճգնաժամային էր վիրավոր մարտիկ-ֆուտբոլիստի դրությունը: Վիրավորը զգում էր բտքից զերկվելու վտանգը: Պապոյանը լավ էր հասկանում նրան և մտածում էր անպայման փրկել նրա ոտքը: Բժշկուհին վիրավորին վերցնում է իր անմիջական հսկողության տակ և, գործադրելով իր բոլոր գիտելիքներն ու հմտությունը, բուժում է նրան (առանց ամպուտացիայի):

Ուշագիշտ վերաբերմունքով և հոգատարությամբ Պապոյանը շատ մարտիկների կյանք է փրկել: Նրա հասցեով բազմաթիվ նամակներ էին ստացվում ռազմաճակատից ու թիկունքից, որոնց հեղինակները բարձր էին գնահատում Շողիկի

աշխատանքը: Կարմիր բանակային նեյստերովը 1944 թ. Պապոյանին ուղարկած նամակում գրել է. «...Այժմ ինձ լավ եմ զգում, վերքս լավացել է: Գրում եմ ռազմաճակատի առաջավոր դժից, շուտով կսկսվի մարտը, ցանկանում եմ մարտից առաջ շնորհակալություն հայտնել ձեզ: Դուք փրկեցիք իմ կյանքը: Յանկանում եմ ձեզ առողջություն և հաջողություն հետագա աշխատանքներում»¹:

Բժշկուհի Պապոյանը մասնակցում է Բրյանսկ, Ունեչա, Վլադիմիր-Վոլինսկ քաղաքների և Զեխսլովակիայի մայրաքաղաք Պրագայի ազատագրմանը, ինչպես նաև Դրեզդեն, Կոտբուս, Լյուբեհե և Բեռլին քաղաքների գրավման մարտերին: Պապոյանը պարգևատրվել է Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի և երկու Կարմիր աստղի շքանշաններով: Բժշկական ծառայության ավագ լեյտենանտ Պապոյանը հաղթանակից հետո շարունակում և ավարտում է Երևանի բժշկական ինստիտուտի ասպիրանտուրան, պաշտպանում դիսերտացիա և ստանում բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Այժմ նա աշխատում է Երևանի բժշկական ինստիտուտում որպես դոցենտ:

Հայ ժողովրդի արժանի դուստրերից են նաև բժշկական ծառայության կապիտան Աշխեն Իգիթխանյանը և առաջին կարգի զինվորական բժիշկ Նորա Ավետիսյանը: 1941 թ. գերազանց գնահատականներով ավարտելով Երևանի բժշկական ինստիտուտը, նրանք հայրենիքի առաջին կոչով մեկնեցին սովետական բանակ:

Աշխենը վիրաբույժ էր: 1943 թ. ապրիլին Կուբանի Աբինսկ կայարանի մոտ ծանր վիրավորվել էր Վասիլի Լեբեգևը: Ծանր հարվածից նրա աջ ոտքը մեծ վնասվածք էր ստացել: Պետք էր կտրել, որովհետև վնասված մասը «մահացել» էր: Այդպիսի ելքակացության էին եկել վիրաբույժները: Ռազմիկի ոտքի բուժման միտքը հուզում էր երիտասարդ վիրաբույժ Իգիթխանյանին: Եվ նա գտավ միջոց՝ առանց վիրահատելու բուժե-

¹ ՀՊՊԿ արխիվ, ֆ. 270, գ. 67ր, թ. 1:

չու վերքը: Նույն մեթոդով նա փրկում է Իվան Միխայլչենկոյի «մահացած» ձեռքը: «Նա որոշեցի փրկել Միխայլչենկոյի ձեռքը,—սպասմել է Աշխենը: Երեք սանտիմետր վիրահատելով փշացած անոթը, վիրակարեցի: Հինգ օրվա անձնական զննումներս հաստատեցին, որ «մահացած» ձեռքը փրկված է»¹:

Աշխենի նման խիղախ և հոգատար էր նրա ընկերուհին՝ բժշկական ծառայության կապիտան Նորա Ավետիսյանը: Մի անգամ «Յունկերս»-ների մի մեծ խումբ իրար ետևից չորս հարձակում գործեց դաշտային հոսպիտալի վրա: Պայթող արկերից կարծես շարժվում էր գետինը, տեղահան էին լինում լուսամուտների շրջանակները, դռները, հիվանդները նոր վերքեր էին ստանում:

Այդ ծանր և վտանգավոր իրադրության մեջ Նորան հանդես է բերում բացառիկ արիություն: Նա գրկելով հիվանդներին տեղափոխում էր ռմբապաստարան, փրկում շատերի կյանքը: Իսկ նույն պահին ռմբապաստարանում, բուժքույր Տապրովայի օժանդակությամբ Աշխեն Իգիթխանյանը վիրահատում էր դաղստանցի Աբդուլահ Գաջին:

Հայկական հեռագրական գործակալության թղթակիցը Կուբանի մարտերում, ականատես լինելով Իգիթխանյանի և Ավետիսյանի անձնազոհ աշխատանքին, գրել է. «Այդ համեստ աղջիկներն արդեն անցել են մարտական լուրջ դպրոց և պատերազմական կյանքի փորձություններում հարստացրել իրենց դիտական պրակտիկան... Հայ ժողովրդի այդ դուստրերի համեստությունն ու առաքինությունը այսօր, Հայրենական պատերազմի կրակ ու բոցում, նոր փայլ է ստացել»²:

Աշխեն Իգիթխանյանը Կովկասյան նախալեռներից մարտերով հասավ Գերմանիա, մասնակցեց Քյոնիգսբերգի և Բեռլինի գրավման մարտերին, պարզեցատվելով Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշանով և մի շարք մեդալներով: Նորա Ավետիսյանը անձեռույց ծառայեց մինչև պատերազմի վերջը, իր մարտական գործունեությունը ավար-

1 ՀՊՊԿ արխիվ, ֆ. 270, դ. 21, թ. 3:

2 Նույն տեղում, թ. 5:

տելով Պրագայում: Նա պարգևատրված է Կարմիր աստղի և Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշաններով, խիզախության համար և այլ մեդալներով:

Բժշկական ծառայության լեյտենանտ Շուշիկ Ասատրյանը մարտական մկրտությունը ստացավ Կովկասի պաշտպանության կռիվներում: 1942 թ. հոկտեմբերին Սուխումի-Կլուխորի լեռնանցքում կատաղի մարտեր էին մղվում: Գերմանացիները փակել էին ճանապարհը: Վիրավոր մարտիկներն ընկել էին շրջապատման մեջ: Դրությունը ծանր էր: Բժշկա-սանիտարական մասի փոքրաթիվ կուլեկտիվը, որի կազմում էր Ասատրյանը, քաղաքացիական կռիվների մասնակից, կարմիր պարտիզան, բժշկական ծառայության մայոր Նատալիա Պադուշկո-Դուբրովսկայայի գլխավորությամբ, առանց հուսահատվելու շարձարվում էին գիշեր ու ցերեկ, որպեսզի շրջապատումից դուրս բերեն վիրավորներին և էվակուացնեն թիկունք: 1943 թ. Սուխումի լեռնանցքում Ասատրյանը վիրավորվում է, բայց չի հեռանում զորամասից:

Հրամանատարն առաջարկում է, ինչ գնով էլ լինի, ռազմադաշտից դուրս բերել կրճքից ծանր վիրավոր Ադիբեկյանին: Ասատրյանը իր վրա է վերցնում այդ խիստ դժվար առաջադրանքի կատարումը: Արհամարհելով թշնամու ուժեղ կրակը, նա սողեսող հասնում է մարտիկին, առաջին օգնություն ցույց տալիս և դուրս բերում ռազմադաշտից, փրկելով նրա կյանքը:

Բժշկական ծառայության լեյտենանտ, ստորաբաժանման կուսակազմակերպիչ Շուշիկ Ասատրյանի մարտական ուղին ավարտվեց Ավստրիայում: Սովետական կառավարությունը բարձր գնահատելով նրա ծառայությունները, Ասատրյանին պարգևատրել է Կարմիր աստղի շքանշանով (երկու), Բեկգրադի ազատագրման, Բուդապեշտի, Վիեննայի գրավման և Հաղթանակի համար մեդալներով:

Աշխեն Վիրաբյանը դեռ չէր բոլորել 19 տարին, երբ ուսանողական նստարանից մեկնեց սովետական բանակ որպես վիրաբուժական քույր: Նա բժշկական առաջին օգնություն էր

հասցնում վիրավոր ռազմիկներին, որպես դոնոր իր արյունը տալիս հայրենիքի սաշտպանների կյանքը փրկելու համար:

Դոնբասի համար մղված մարտերում ծանր վիրավորվել էր Իվան Սերեբրյակովը, որի փրկությանը կախված էր արյուն ներարկելուց, իսկ սանգումարտակում արյուն չկար: Աշխենը առաջարկեց իր արյունը: Հրամանատարի կյանքը փրկվեց: Այնուհետև նրա արյունը օգնեց վերականգնելու ևս երեք ծանր վիրավորի առողջությանը: Աշխենի մասին ռազմաճակատից Նինա Սոլովանովնան գրել է. «Հայ աղջկա այդ անձնվիրությանն ու հայրենասիրությանը հիացրել է Ռ. Բժշկա-սանիտարական գումարտակի անձնակազմին»¹:

1944 թ. վերջերին Արևելյան Պրուսիայում, կատաղի մարտերից մեկում գլխից ծանր վիրավորվել էր հրամանատարը, թուրքմեն բանաստեղծ Չաթի Աշիրովը: Նա ուշաթափ, անօգնական վիճակում ընկած էր դաշտում: Ահեղ կրակի տարափի տակ սողալով նրան է մոտենում Կարմիր աստղի շքանշանակիր, բժշկական ծառայության լեյտենանտ Նինա Սաղումյանը: Բժշկական առաջին օգնություն ցույց տալով, նա սանիտարների օգնությամբ վիրավորին փոխադրում է դաշտային հոսպիտալ: Մի քանի օրից, երբ վերականգնվում է գիտակցությունը, Չաթի Աշիրովը հետաքրքրվում է իր կյանքի փրկարարով: Սակայն նրա փրկարարը հեռու էր՝ ռազմաճակատի առաջին դժուր: 1959 թ. հունվարին թուրքմենական «Թոկմակ» ժուռնալի խմբագիր Չաթի Աշիրովը Հայաստանի գրողների 4-րդ համագումարի հյուրն էր: Հանդես գալով Երևանում կայացած բարեկամության երեկոյին, նա կարգաց պատերազմում իր կյանքը փրկող հայուհուն նվիրած բանաստեղծությունը (այն տպագրվել է «Գրական թերթ»-ի 1959 թ. № 47-ում): Բերում ենք մի հատված բանաստեղծությունից.

Չեմ հիշում ևս դեմքը քրոջական,
Անունը նրա հիշում եմ սակայն,
— «Ծն հայուհի եմ, անունս — Նինա»:

¹ «Սովետական Հայաստան», 29 հոկտեմբերի 1943 թ.:

Կապեց նա լեռքս և, հետո... գնաց:
Ուր ես դու նինա, որտեղ քեզ գտնեմ,
Պատրաստ եմ ես քեզ ամեն տեղ փնտրել:

14 տարի անց Հայաստանի մայրաքաղաք Երևանում Չաթի Աշիրովը հանդիպում է նինա Սաղումյանին՝ իր կյանքի փրկարարին:

Հայրենական պատերազմի ռազմաճակատներում մեծ ծառայություններ են կատարել նաև բժշկական ծառայության մայոր, Կարմիր դրոշի և Կարմիր աստղի շքանշանակիր Սոֆիա Գրիգորյանը (Մոսկվալենկո), Կարմիր աստղի շքանշանակիր, բժշկական ծառայության կապիտան Մարգարիտա Մեխրե-Փարսադանյանը, բժշկական ծառայության մայոր Փառանձեմ Ավետիքյանը, բժշկական ծառայության կապիտաններ՝ Կարմիր աստղի շքանշանակիրներ՝ գվարդիական Վարվառա Վելիկանյանը, Թամարա Չոլախյանը, Սիրուշ Հովհաննիսյանը, բժշկական ծառայության լեյտենանտներ Լենա Սարգսյանը, Լուսյա Փոթիկյանը, նինա Բերեկյանցը, բժշկական բույրեր Ոսկեհատ Հովհաննիսյանը, Լուսիկ Արդումանյանը և շատ ուրիշներ:

* * *

Հայրենիքի նկատմամբ սովետական ժողովրդի անսահման սիրո և համաժողովրդական պայքարի վառ դրսևորումն էր նաև թշնամու թիկունքում ծալալված պարտիզանական պայքարը: Սովետական բաղմազգ ժողովուրդների զավակները թշնամուն ոչնչացնում էին ոչ միայն ռազմաճակատում, այլև նրա թիկունքում:

Թշնամու թիկունքում դրոժող բաղմաթիվ պարտիզանական ջոկատներում մարտնչում էին նաև հայ ժողովրդի զավակները:

1942 թ. հուլիսին, երբ ֆաշիստական բարբարոսները ներխուժեցին Վորոշիլովգրադի (Լուզանսկ) մարզի Կրասնոդոն քաղաքը, Լենինյան կոմերիտմիության սաները կաղմակեր-

պեցին ընդհատակյա «Երիտասարդ գվարդիա» կազմակերպությունը: Նրա անդամներից էին հայ ժողովրդի խիզախ զավակներ ժորա Հարությունյանցը և Մայա Պեգլիվանովան (Փահլեանյան):

9—10-րդ դասարաններում սովորելիս Մայան դպրոցի կոմերիտական կազմակերպության քարտուղարն էր: Այդ կազմակերպության անդամներից 17-ը դարձան «Երիտասարդ գվարդիա» կազմակերպության անդամներ: Մայան «Երիտասարդ գվարդիա» ընդհատակյա կազմակերպության մի հընգյակի ղեկավարն էր, որպիսին վստահվում էր միայն ամենահամարձակ ու վճռական կամքի տեր մարդուն: Իսկ Մայան հենց այդպիսին էր: Ուլյանա Գրոմովայի հետ նա գրեց առաջին հակաֆաշիստական թռուցիկները և կազմակերպեց դրանց տարածումը քաղաքում և շրջակա գյուղերում:

Մի անգամ շուկայում Մայան մի կապոց թռուցիկներ տվեց կարկանդակ վաճառող կնոջը, որը շուտով դրանք տարածեց: Երիտասարդ հայրենասերները սովետական մարդկանց կոչ էին անում պաշարել ֆաշիստական օկուպանտների դեմ: Մայան կազմակերպության մեջ է ներգրավում շատ հուսալի երիտասարդներ: Կազմակերպության ամբողջ գործունեության մեջ Մայան ունեցել է ակտիվ մասնակցություն:

1943 թ. հունվարի 11-ին մատնիչների միջոցով գեստապոն ձերբակալում է «Երիտասարդ գվարդիայի» անդամներին, այդ թվում Մայա Պեգլիվանովային:

Իր բնկերների հետ Մայան հերոսությամբ տարավ բոլոր տանջանքները և իր երիտասարդ կյանքը զոհաբերեց սովետական ժողովրդի ազատության՝ ու պայծառ ապագայի համար:

ՍՍՀՄ Գերագույն սովետի Նախագահությունը 1943 թ. սեպտեմբերի 13-ի հրամանագրով, զերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ պաշարում ցուցաբերած խիզախության ու արիության համար, Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշանով հոմահու պարգևատրեց Մայա Պեգլիվանովային (Փահլեանյան):

Միմֆերոպոլ քաղաքում պարտիզանների պայքարին ակտիվ մասնակցություն է ունեցել զարաբաղցի Հրանուշ Մխիթարյանը: Չնայած գեստապոլի հետապնդումներին, նա գաղտնի թուղցիկներ էր տարածում և սլաժիսցիկ նյութեր մատակարարում տեղի պարտիզանական ջոկատին: Մխիթարյանը մասնակցում է պարտիզանական ջոկատի կողմից գերմանական երեք գնացքների և երկաթուղային կամուրջի խորտակման առաջադրանքներին:

1942 թ. Հյուսիսային Կովկասի պարտիզանների շարքերում էր կոմունիստական կուսակցության անդամ, կիրովաքաղցի Անահիտ Շահնաղարյանը: Լեռներում, կիրճերում և դժվարանցանելի անտառներում, ձմռան դաժան պայմաններում, կտրելով հարյուրավոր կիլոմետր տարածություն, Անահիտը կատարել է մարտական շատ առաջադրանքներ: Նա մասնակցել է ճանապարհներն ականապատելու, կամուրջները և ռազմամթերքի պահեստները պայթեցնելու դիվերսիոն գործողություններին:

Բելովկա գետի մոտ ալսօր փայլում է մի համեստ հուշասյուն, հետևյալ մակագրությամբ՝ «18-ամյա կոմերիտուհի Հասմիկ Լեոնի Բաղեյանցը հերոսաբար ընկավ Փաշիվմի դեմ մղված մարտերում»: 1943 թ. սկզբներին, երբ գերմանացիները գրավել էին ծովափնյա Անապա քաղաքը, էսէսական դիվիզիայի հետախուզական ջոկատը շատ հայրենասերների թվում գազազած որոնում էր նաև պարտիզան Հասմիկ Բաղեյանցին: Թշնամու օկուպացիայի օրերին հայրենավառ դուստրը կապվեց «Մայակ» պարտիզանական ջոկատի հետ: Զուգատը տեղեկություններ էր ստանում նրա միջոցով: Սակայն էսէսականներին հաջողվեց ձերբակալել կապվոր Հասմիկին: Թշնամին չկարողացավ որևէ խոսք կորզել նրանից: Գեստապոյականները կտրեցին խիզախ պարտիզանի լեզուն, ասելով. «Մեզ պետք չէ ալս լեզուն, եթե նա ոչինչ չի ասում»: Մի ամիս անց պարտիզանները ազատում են Հասմիկին: Վրեժով լցված Հասմիկը միանում է պարտիզաններին և արիաբար մարտնչում վալդազ մարդասպանների դեմ: Անվախ պարտի-

զանք զոհվում է հուլիսի վերջին, գիշերային ուժակոծության ժամանակ:

1942 թ. հուլիսի 25-ին, կատաղի կռիւներից հետո, թըշնամուն հաջողվում է գրավել Դոնի-Ռոստովը: Հաստատվում է ֆաշիստական ծանր ուժիմ: Գետապոլսականները առանց դատ ու դատաստանի հաշվեհարդար էին տեսնում խաղաղ բնակչության հետ: Գերմանական պարետատուն են կանչում քաղաքի և շրջակայքի բոլոր բնակիչներին ու հաշվառման ենթարկում: Ռոստովի մարզի Մյասնիկյանի շրջանի Չալթըր գյուղի երիտասարդներից գերմանացիները կազմակերպում են 15-ական մարդուց բաղկացած բրիգադներ և աշխատանքի ուղարկում երկաթուղային կայարան: Նրանք պետք է ավազ բարձին ապրանքատար վագոնները (հիտլերականները ավազն օգտագործում էին ճանապարհները նորոգելու համար): Բրիգադներից մեկում, որի ղեկավարն էր Հայկ Բարաշյանը, որոշեցին դիմել խորամանկության՝ վագոնները ճանապարհել փաստորեն դատարկ: Յուրաքանչյուր վագոնի մուտքի մասում մոտ 1,5 մետր բարձրությամբ նրանք լցնում են ավազ, ստեղծելով այն տպավորությունը, թե իբր վագոնը լիքն է: Այդ միջոցով բրիգադը կարողացավ ճանապարհել երեք էշելոն: Հերթի էր սպասում չորրորդը: Թամարա Խարախաշյանը, Իսկուհի Չուվարյանը և Սիրունիկ Խաթլամաջյանը շարունակում էին «լցնել» վագոնները: Գերմանացի ինժեները և աշխուկը, որոնք մատնությունը իմացել էին զաղտնիքը, ստուգելով վագոնների բեռնվածությունը, մոտենում են և նրանց վագոնին: Ինժեները հարցնում է Թամարային.

— Վագոնը լցված է՞, կարելի է՞ չափել:

Թամարայի կտրուկ «այո»-ն կատաղեցնում է ինժեներին: Նրա ձեռքի շարժումով աշխուկը ցատկում է վագոն և ցած գլորում հանդուգն աղջկան: Այս հիտլերականը շարախինգ ժպիտով, կոպտորեն բռնում է Թամարայի ձեռքից և ուժով քաշելով դեպի վագոն, սեղմում է նրան երկաթե դռան նեղ բացվածքում:

Պատերազմի դառնությունները ճաշակած 20-ամյա Թամարան Դոնի-Ռոստովի աղատագրումից հետո ավարտում է քույրական դասընթացները և որպես սանիտարական հրահանգչուհի կամավոր ծառայում սովետական բանակում: Իր ծառայությունների համար նա պարգևատրվել է մի շարք մեդալներով:

Սովետական ռազմագերիների թվում գերմանական համակենտրոնացման ճամբարներում տանջանքների ու խոշտանգումների ենթարկվեցին նաև հայ ժողովրդի բազմաթիվ զավակներ ու զուստրեր: Նրանցից են Աիդա Ալավերդյանը, Վալենտինա Պատրիկյանը, Շուշիկ Ստեփանյանը, Զարիվարդ Դոլուխանյանը և ուրիշներ: Նրանք բարձր պահեցին սովետական բաղադրացու պատիվը, զինվորական երգումը և տուն վերադարձան բաց ճակատով:

1942 թ. սեպտեմբերին, Ստալինգրադի պաշտպանության ծանր օրերին, այդտեղ, թշնամու կողմից գերի վերցվածների մեջ էր նաև հեռաշափուհի Աիդա Ալավերդյանը: 1943 թ. փետրվարին, 17526 համարի տակ, նրան փոխադրեցին Ռավենսբուրգի համակենտրոնացման ճամբար: Մարտի 1-ի ծանր օրեր ապրեց Աիդա Ալավերդյանը: Նա աշխատում էր Բերտրիբի ֆաբրիկայում: Սաբոտաժի և անորակ արտադրանքի համար կալանավորուհիները ենթարկվում էին ծանր խոշտանգումների: Աիդան հանդգնում էր չկատարել ֆաբրիկատիրոջ պահանջները, ընկերուհիներին խրախուսում էր աշխատել դանդաղ, տալ խոտան արտադրանք: Որքան խստանում էր ճամբարային ռեժիմը, այնքան ռազմագերիները արիանում և համարձակ էին դառնում, չկորցնելով աղատագրման հույսը: Աիդան կապված էր ճամբարում պաշարառող հակաֆաշիստ կանանց հետ և գտնվում էր հսկողություն տակ: Շուտով նրան տեղափոխում են 32-րդ բարաքը, որը նախատեսված էր ավելի վտանգավոր կալանավորների համար: Այստեղ նա ծանոթանում է Գերմանիայի աշխատավոր ժողովրդի առաջնորդ էռնստ Թեկմանի կնոջ՝ Ռոզա Թեկմանի հետ, սերտ կապեր է ստեղծում Նաթելա Տատլանիձեի, Օսաննա Ավադովայի, Վա-

լենտինա Պատրիկյանի, Նինա Եֆիմովայի, ինչպես նաև շատ հակաֆաշիստ շեխուհիների, գերմանուհիների, ֆրանսուհիների և ճամբարում տառապող այլ երկրների առաջադեմ կանանց հետ:

Ճամբարում ստեղծվել էր ինտերնացիոնալ կոմունիստական օղակ, որի ոգին հանդիսանում էին Եվգենիա Լադարենա: Կլիման (Օդեսայից, պատմության դասատու), Վերա Ուդովենկոն և ուրիշներ:

Կոմունիստական օղակի շուրջը համախմբվել էին հարյուրավոր կալանավորներ: Նրանց թվում էին նաև Կովկասի դուստրերը՝ Քեթո Խոմեբեկինը, Աիդա Ալավերդյանը, Լիդա Նազարովան, Կլավա Դենիսովան և ուրիշներ: Կոմունիստական օղակի յուրաքանչյուր անդամի պարտականությունն էր բարձր պահել սովետական հայրենասիրության ոգին, կալանավորների շրջանում կազմակերպել սաբոտաժ, բուժօգնություն, ցույց տալ և խնամել վիրավոր և հիվանդ կալանավորներին: Օղակը գրում և տարածում էր թռուցիկներ, նշում բոլոր տոնական օրերը:

Տիրապետելով ֆրանսերենին, Աիդան ռուսերեն թարգմանեց լյուքսեմբուրգցի Լիլիի՝ ռուս կանանց նվիրված բանաստեղծությունը: Աիդա Ալավերդյանը երկու տարի և երկու ամիս տանջանքներով լի օրեր ապրեց Ռավենսբուրգի համակենտրոնացման ճամբարի զնդաններում: 1945 թ. ապրիլի 30-ին սովետական զորքերը աղատագրեցին Ռավենսբուրգի համակենտրոնացման ճամբարի գերիներին, այդ թվում Աիդա Ալավերդյանին (այժմ աշխատում է Աստրախանում)¹:

1941 թ. հունիսին մեր հայրենիքի համար ստեղծված վտանգավոր օրերին, Լեռնային Ղարաբաղից երկու ընկերուհիներ՝ Շուշիկ Ստեփանյանը և Զարիվարդ Դուրխանյանը մեկնեցին ռազմաճակատ՝ պաշտպանելու հայրենիքը: Մարտական ծանր պայմաններում հայ ժողովրդի քաջարի դուստ-

¹ А. Саркисов, Победившая смерть. См. «Девушки в погонах», М., 1964, էջ 42—50:

րե՛րը, արհամարհելով մահը, առաջին օգնությունն էին ցույց տալիս վիրավոր ռազմիկներին, նրանց փոխադրում սանիտարական կայաններ:

Սևաստոպոլի տակ № 4 բևտանային դիվիզիոնը ընկավ շրջապատման մեջ: Թշնամու օղակից ազատվելու և մեր զորամասերին միանալու միակ ելքը դեպի ծով տանող ներքնախորշն էր, որը ուժեղ ռմբակոծվում էր թշնամու կողմից: Ծանր էր դրությունը ներքնախորշում գտնվող նավաստիների համար: Չկար ջուր, վիրակապ, սննդամթերք: Վիրավորների թիվը մեծ էր, իսկ օգնությունը՝ քիչ: Չնայած Շուշիկ Ստեփանյանը նույնպես վիրավոր էր, բայց նա կարողանում էր մեկ վիրավորից անցնել մյուսին, սպեղանի դնել նրանց վերքերին: Շուշիկը զոհված մարտիկների մոտից հավաքում էր փամփուշտները և հասցնում կռիվող մարտիկներին: Մի քանի օր անց նավաստիները որոշեցին մեկ-մեկ, սողեսող զուրս գալ ներքնախորշից: Այն պահին, երբ Շուշիկը ձորով գետնասող զուրս էր գալիս, գերմանացիները գերեցին նրան: Շուշիկին ծաղր ու ծանակի հնթարկեցին, տանջեցին Սևաստոպոլի, Սիմֆերոպոլի բանտերում, Շեպետովկայի ճամբարում, ապա հարկադրական աշխատանքի քշեցին Գերմանիա:

Մի այլ մարտում գերվել էր Զարիվարդը: Ընկերուհիները հանդիպեցին իրար: Շուշիկ Ստեփանյանը և Զարիվարդ Դոլուխանյանը Գերմանիայի Նոյրուպեն քաղաքի հիվանդանոցում աշխատում էին որպես հավաքարարուհիներ:

1945 թ. փետրվարին մեր ռազմաճակատներից մեկի հրամանատարության հատուկ առաջադրանքով Նոյրուպենի մոտ վալրէջք կատարեցին սովետական հետախույզներ Վաղարշակ Առաքելյանը և Անտոնինա Իվանովան (ռադիստ): Նրանք կապվեցին Շուշիկի և Զարիվարդի հետ, որոնք ռադիստուհուն տեղավորեցին իրենց նկուղում և քողարկեցին նրա աշխատանքը: Փոքրիկ նկուղից սովետական հայրենիք էին հաղորդվում կարեւոր տեղեկությունների թշնամու զորքերի տեղաշարժերի, կուտակումների, ռազմական օբյեկտների և այլնի մասին: Գերության մեջ գտնվող երկու հայ կանայք, վտանգի

ենթարկելով իրենց կյանքը, օգնում էին կարմիր բանակին: Այժմ Շուշիկ Ստեփանյանը աշխատում է Երևանում, իսկ Զարիվարդ Դուռլսանյանը՝ Գրողնիում:

* * *

Դաշտային փոստում էր ծառայում Սիրուշ Մաճկալյանը (Շամշադինի շրջանի Թովուզ գյուղից): Նա և՛ մարտիկներին նամակներն էր ժամանակին առաքում, և՛ հարկ եղած դեպքում ղեկքով մասնակցում թշնամու ջախջախմանը:

Արուսյանի անվան մանկավարժական ինստիտուտի լեզվադրական ֆակուլտետն ավարտելուց հետո Սիրուշ Մաճկալյանը Երևանում աշխատում էր որպես կոմերիտմիության շրջանային կոմիտեի քարտուղար, ապա ֆաբգործուներից մեկում որպես գիրեկտորի տեղակալ: Կոմունիստ Սիրուշ Մաճկալյանը ռազմաճակատ մեկնեց Հայրենիքի առաջին իսկ Կանչով: Հարազատներին և բարեկամներին ուղարկել է տասնյակ նամակներ, որոնք ռազմաճակատային առօրյայի և սովետական զորքերի հաղթանակների վկաներն են: «Հետևիկեցեք մեր հաջողություններին,—գրել է նա 1943 թ. հունվարի 18-ին, իր բարեկամներ Լուսյա և Աշոտ Օհանյաններին,— և տրամադրություններդ բարձրացրեք: Շուտով, շատ շուտով այդ սրիկաներին կբշնք մեր հողից, այս վերջին օրերին արդեն ճղում են այնպես, ինչպես վախկոտ նապաստակները՝ «հաջող» որսկանի առջևից: ...Փափագում ենք հասնել Բեռլին»:

Սիրուշը մասնակցել է սովետական շատ քաղաքների ու բնակավայրերի, դրանց թվում Ռոստովի ազատագրմանը: Այդ կապակցությամբ նա գրել է. «Ռոստովն արդեն մերն է, ուրախությամբ չափ ու սահման չկա»: Նամակները վկայում են, որ Սիրուշ Մաճկալյանը գործել է տարբեր ռազմաճակատներում՝ Հյուսիսային Կովկասում, Վորոնեժի մարզում, Խարկովի ուղղությամբ և այլուր: 1943 թ. օգոստոսի 11-ի նամակում Սիրուշը գրել է. «Մերոնք կովի մեջ են, թեժ կոթիլներ են զնում հօգուտ մեզ: Կարճ ժամանակաընթացքում շատ

և շատ հայրեր, մայրեր, քույրեր, եղբայրներ և ամուսիններ կուրախանան»։ Սակայն Սիրուշ Մաճկալյանը չտեսավ այդ ուրախությունը, սովետական ժողովրդի վերջնական հաղթանակը։ Նա զոհվեց 1943 թ. օգոստոսի 27-ին։

Այսպիսով, Հայրենական մեծ պատերազմի ժամանակաշրջանում սովետական կանայք, նրանց շարքերում և հայ կանայք, ռազմաճակատում ակտիվորեն մասնակցեցին սովետական ժողովրդի ազատության ու անկախության համար մղվող համաժողովրդական պայքարին, անթառամ փառքով պսակելով սովետական հայրենասեր կնոջ կոչումը։

Վ Ե Ր Զ Ա Ռ Ա Ն

Սովետական Միության Հայրենական պատերազմը ավարտվեց սովետական ժողովրդի փայլուն հաղթանակով: Կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության ղեկավարությամբ սովետական զինված ուժերը մեծագույն հաղթանակ տարան գերմանական զավթիչների դեմ և ապահովեցին մեր հայրենիքի ազատությունն ու անկախությունը, ամբողջ աշխարհի ժողովուրդներին փրկեցին ֆաշիստական ստրկացման սպառնալիքից, նրանց դարավոր կուտուրան՝ բարբարոսների բնաջնջումից: Մեր հայրենիքի ծանր փորձության օրերին, ֆաշիզմի դեմ մղված պայքարի ամբողջ ժամանակամիջոցում, ինչպես ռազմաճակատում, այնպես էլ թիկունքում սովետական հայրենիքի բազմազգ ժողովուրդների կանայք ցուցաբերեցին մեծ անձնազոհություն, հաստատակամություն և բարձր հայրենասիրություն:

Այդ արդար պայքարում իրենց արժանի լուծան ներդրեցին նաև Հայաստանի աշխատավոր կանայք, որոնք, արձագանքելով կուսակցության առաջին իսկ կոչին, ռազմաճակատ մեկնեցին, համալրեցին կարմիր բանակի շարքերը: Նրանք թշնամու դեմ կատաղի մարտերում մարտնչեցին որպես օդաչուներ, հրետանավորներ, սնայպերներ, կապավորներ և բժշկա-սանիտարական աշխատողներ, նպաստեցին անարգ թշնամու ուժերի կործանմանը:

Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմում կարմիր բանակի ձեռք բերած հաղթանակը ապահովեցին նաև թիկունքի հայրենասերները: Կարմիր բանակը հենվում էր ամուր թիկունքի, սովետական ժողովուրդների կողմից բանակին ցույց տրվող համաժողովրդական աջակցության վրա:

Ռազմաճակատի և թիկունքի կազմակերպված և միաձուլվ պայքարը ծնկի բերեց թշնամուն, հաղթանակ՝ մեր ժողովրդին:

Արտագրություն եկած երիտասարդ կադրերի, այդ թվում հանրապետության կանանց շնորհիվ զարգացավ արգշտանքերությունը, ձեռնարկությունները յուրացրին և թողարկեցին արտագրանքի նորանոր տեսակներ:

Սովետական Հայաստանի տասնյակ հազարավոր կանայք դարձան արգշտանքերության առաջավորներ, իրենց ուսերի վրա կրեցին շատ դժվարություններ, պատվով կատարեցին հայրենիքի և կուսակցության կողմից առաջադրված խնդիրները և մեծ օգնություն ցույց տվեցին ռազմաճակատում մարտնչող իրենց հարազատներին:

Սոցիալիստական գյուղի աշխատավորուհիները, փոխարինելով ռազմաճակատ մեկնած իրենց հարազատներին, դարձան գյուղատնտեսական առաջադրանքների կատարման համար պայքարող հիմնական ուժը, իրենց անձնվեր ու լարված աշխատանքով ռազմաճակատն ու թիկունքը ապահովեցին գյուղատնտեսական մթերքներով:

Բանվորուհիների և կոլտնտեսուհիների հետ միասին գիտություն, լուսավորության, արվեստի ու գրականության բնագավառներում աշխատող կանայք իրենց ստեղծագործական աշխատանքով ոգևորում էին ռազմաճակատի և թիկունքի հայրենասերներին:

«Սերունդները երգեր կերգեն Հայրենական մեծ պատերազմի դարաշրջանի՝ սովետական կնոջ մասին, կխոնարհվեն նրա հոգու մեծության ու վսեմության առաջ, նրա հոգու ա-

րիության, նրա տոկունության առաջ», — այսպես է գրել «Պրավդա» թերթը¹։

Սովետական հերոս ժողովուրդը, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, կարճ ժամանակամիջոցում վերականգնեց քայքայված արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը, մոխրակույտերի վերածված քաղաքներն ու գյուղերը։ Արագ տեմպերով զարգացնելով ժողովրդական տնտեսությունը, սովետական ժողովուրդը կառուցում է կոմունիստական հասարակարգ։

¹ «Правда», 3 մարտի 1942 թ.։

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ֆինստիտուտի կողմից	5
Ա ռ ա ջ ա բ ա ն	10
Գլուխ առաջին. Հայրենական մեծ պատերազմը: Հայաստանի կանանց մասնակցությունը համաժողովրդական օգնությանը .	19
Գլուխ երկրորդ. Բանվորահիների աշխատանքային հերոսությունը արդյունաբերության մեջ և տրանսպորտում	29
Գլուխ երրորդ. Կոլտնտեսուհիների հերոսական աշխատանքը .	58
Գլուխ չորրորդ. Կուլտուրայի և գիտության զործիչները .	97
Գլուխ հինգերորդ. Հայ կանանց սխրագործությունները ռազմա- նականներում	122
Վ ե ռ ջ ա բ ա ն	167



ԳԱՆ Հիմնարար Գիտ. գրադ.



220042621

Գիւնը 42 կոպ.

A^{II}42621